


1160

Muzur Id.

yungung myatéali
yungly yha 5r



1929


2011

ԿԱՐԵՒՈՐՈՒԹԵՆՔ ԶՈՒՐԿ ԿԻՆ ՄԵ

(ԱՐԴԻԱԿԱՆ ԲԱՏԵՐԱԽԱՆ)

ԱՍՔԸՐ ՈՒԱՅԼՏ

Թրգմ. ԶԱՐՈՒՀԻ ՑԵՐՈՒՀԽԱՆ



ՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Մ. Ակերան
1929

2003

34766-4.2.

413

ՕՍՔԱՐ ՈՒԱՅԼՏ

Օսքար Ուայլտ, մեծահամբաւ գեղեցկապաշտ արուեստագէտ՝ ծնած 1856ին, ծագումով իրանտացի, Բրօֆէսէօր Սըր Ուիլբեմ Ուայլտի որդին էր: Իր ժայրն ալ ազնուական ծագումով եւ գրելու մեծ կարողութեամբ մը օժտուած էր, որմէ ժառանգած էր ան իր ծիրքերը: Ուայլտ՝ ընկերային բարձր դիրքովը, իր փայլուն ու սրամին խօսակցութեամբն ու համեմուած պատմութիւններովը միշտ փայլած ու փնտռուած է ընկերութեանց մէջ: Իր գրաւիչ ձեւերը ու համակրելի բնաւորութիւնը, նաեւ հագուելու մէջ իր անթերի նաշակը, միշտ հաճելի ըրած են զինքը: Ան կուռքը եղած է անզիմական բարձր դասու բնկերութեան, ամէնքէն սիրուած, պաշտուած ու փայփայուած՝ ատեն մը Անգլիոյ ամէնէն երջանիկ ու շփացած մարդը եղած է ան:

Անոր յաջողութիւնը կը սկսի զպրոցէն, երբ տակաւին պատանի էր: Գեղեցիկ բանաստեղծութեամբ մը մեծ մրցանակի մը կ'արժանանայ, իր քաղցր բնաւորութիւնն ու գրաւիչ խօսակցութիւնը (Ուայլտ խօսելու մէջ ալ արուեստագէտ մըն էր) զինքը իր ընկերներուն ու զասատուներուն սիրելի կ'ընեն: Արսքին, իր դասատուն, հասկցած ու զնահատած է անոր արուեստագէտի հոգին ու վիպային երեւակայութիւնը, եւ շատ սիրած է իր աշակերտը, որ վերջը հետեւող մը եղած է իրեն: Ուայլտ խոր սրանչացում մը ունեցած է իր մնած վարպետին հանդէպ: Զայն նկատած է բարիին, ճշմարտին ու գեղեցիկին առաքեալը: Ուայլտ անհունօրէն ներշնչուած է Ռըսքինէն, եւ մինակ տարբերութիւնը որ գոյութիւն ունի երիւ մեծ գեղեցկապաշտներուն միշել՝ սա է որ: Ռըսքին գեղեցկութեան մէջ բարին ու օգտակարը կը փնտռէր, իսկ Ուայլտի համար գեղեցկութիւնը ամէն ինչ էր իրը զուտ արուեստագէտ, գեղեցիկը գեղեցիկին համար կը պաշտէր: Իր հաւատքը տեսանելիին մէջն էր, եւ անոնցմով էր որ կը տեսնէր բոլոր միւս գեղեցկութիւններն ար

Ուայլտ ամէն բանէ առաջ արուեստագէտ մըն է. եւ իր բոլոր գործերուն մէջ ալ արուեստն է որ կը տիրապետէ, գեղեցիկ եւ ինքնուրոյն: Ան գիտցած է հաշտեցնել փիլիսոփայութիւնը արուեստին հետ, որ կը հմտէ:

17990-59



Ուայլտի համբաւը սկսաւ իր «Տօրիան Կրէյի նկարը» վէպով։ Գրական գլուխ գործոց մը՝ որ իր կեանքին մէկ մասը կը կազմէ։ Թայց շատերուն կողմէ նկատուեցաւ իբր անբարոյացուցիչ զիրք մը։

Ցետոյ երեւցաւ Սալօմէն, իր այնքան բանաստեղծական տրամը, որ սակայն հեշտանք կը ներշնչէ, եւ ան իր կարգին նկատուած է անբարոյացուցիչ։

Ցետոյ կուգան երջանիկ իշխանը եւ Երիտասարդ Արքան որ բոլորովին տարբեր են իր միւս գործերէն, քերթակութեան հաւաքածուներն են, չափազանց տպաւորիչ, եւ որոնց մէջ կը ճաղկէ տիրող անարդարութիւններն ու անիբաւութիւնները։

Ցետոյ «Լէյտի Ուինտըրմիրի հովանարը» թատրերգութիւնը կը բնմաղրուի, որ մեծ ընդունելութիւն կը գտնէ ու հեղինակը բնմ հրաւիրուելով խանդավառորէն կը ծափահարուի։

Անկէց վերջ կը բնմաղրուի «Կարեւորութենէ գուրիկ կինը», որ մեծապէս գնահատուելով Ուայլտի փառքը կ'աւելցնէ։ Անոր երեւումէն վերջն է որ հեղինակին նիւթականն ալ կ'ափահովուի։ Դրամը այլեւս կը հոսի իր ծեռքերուն մէջ։ Ալ այնուհետեւ Ուայլտ Անզիլոյ փառքը կը հոչակուի, աշխարհը իրն է այլեւս, իր համբաւը համաշխարհային է։

Իր դատերախաղերը գեղարուեստական գլուխ գործոցներ են, անոնց մէշ՝ իր գմայլելի ու ճոխ ոճին ներբեւ կը փայլի իր գերազանցօրէն նուրբ սրամտութիւնը, եւ անոնց մէշ տեղի ունեցող խօսակցութիւնները՝ իր իսկ խօսակցութիւնն են, Ուայլտն է որ կ'երեւայ անոնց մէշ, անհունօրէն սրամիտ, հմայիչ ու հանճարեղ։ Սակայն հրապուրող, հեշտասէր ու նիւթապաշտ։

Կեղեցիկին հանդէպ իր ունեցած պաշտամունքը էն իր վառ երեւակայութիւնը զինքը մոլորեցուցած են ու պատճառեղած իր երկամեայ բանտարկութեան։

Կարգելափակուի ան՝ որ միմիայն հաճոյքին, գեղեցիկին համար կ'ապրէք։ Իր շփացած ծոյլ ու հեշտասէր կեանքին կը յաջորդեն բանտին տառապանքն ու զրիեալ կեանքը։ Անհունօրէն կը տառապի ան։ Թայց այդ կեանքը զինքը կը մօտեցնէ մարդկութեան ցաւերուն ու թշուառութեանց, որոնց հանդէպ այնքան անզգայ էր ինք նախապէս։ Գութով կը լեցուի իր հոգին ու կ'ըսէ։ «Գութը աշխարհի ամէնէն մեծ ու ամէնէն գեղեցիկ բանն է», եւ այն տպաւորութեանը տակ գրած է իր ամէնէն գեղե-

ցիկ քերթուածը «Ուիտինկի կոլխուողը»։ Անզլիական գրականութեան մէջ ամէնէն գեղեցիկ բանաստեղծութիւններէն մին։ Հոգիի աղաղակ մըն է ան, ազնիւ ու վանմ։

Իսկ Ուիտինկի բանտին մէջն է որ կը զրէ իր ամէնէն զմայւելի ու խորունկ զիրբը, «Տէ Բրօֆօնտիս», որ արդարացումն է իր վարած կեանքին ու բանտարկութեան։ Այս հատորին մէջ Ուայլտ կ'երեւայ տարբեր երեւոյթի մր տակ, զղացած, մարրուած, կատարելագործուած։ Տառապանքը փոխած է զինքը, աւելի մարդկային զգացումներով տողորուած է ան։ գութով եւ անմուկիրութեամբ իր նմաններուն հանդէպ։ Եպիկուրեանը անհաւատը, հաւատացեալի փոխուած է։

Բանտարկութեան շրջանը աւարտելէն վերջ էր հեռանայ իր սիրական Լուստոնէն, ուր ժողովուրդին ու իր թշնամիներսւն արհամարհանքին ու ծաղրին առարկան դարձած էր այլեւս։ Ու բոլորովին կործանած, կեանքին մնացեալ մասը կ'անցընէ Ֆըրանսագէտ մըն էր, եւ «Սալօմէն» գրած է ֆրանսերէն լիզուով։ Նաեւ շատ ազդուած է ան ֆրանսական նուրբ սրամութենէն։

Ֆրանսա մեկնելէն վերջ Ուայլտի գործունէութիւնը կը դադրի գրեթէ, այլեւս չի գրեր ան։ Հոն առանձին, հեռու իր կնշշմէն ու երկու մանչ զաւակներէն՝ միմիայն բանի մը բարեկամներէ շրջապատուած՝ մեկուսացած կեանք մը կ'ապրի։ Միշտ նիւթական անձկութեանց մէջ, հիւանդութիւնն ալ շուտով կը հասնի, բանտի թշուառ կեանքը իր աւերը գործած է, ու ինքն ալ ապրելու կամքէն զրկուած՝ կը մեռնի 1900ին։ Ֆրանսացիք պատշաճ յուղարկաւորութեամբ մը կը պատուին մեծ արուեստագէտը։ Օրուան ամէնէն նշանաւոր գրաքէտներն ու հեղինակները, որ արդէն իր բարեկամներն էին՝ իր դագաղին կը հետեւին մինչեւ գերեզմանատուն։ Իր մահով կը մարքագործուի իր յիշատակն ալ արդէն ան իր յանցանքէն աւելի միծ պատիժ մը կրած էր, որ աւելի արդիւնքն էր իր համբաւին առթած նախանձին, եւ միջին դասակարգին ատելութեան, որուն հանդէպ Ուայլտ արհամարհանքով կը վերաբերուէր։

Ուայլտի ողբերգական վերշաւորութիւնը ալ աւելի հետաքրքրական կ'ընծայէ զինքը, եւ պատճառ կ'ըլլայ որ իր յիշատակը յաւերժանայ։

ԹԱՏԵՐԱԽԱՂԻՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԸ

Առաջին արարուած .— Հընսթէնդընի որսորդուաթեակին պատշգամը :

II. Արար .— Հընսթէնդընի դղեակին հիւրանոցը :

III. Արար .— Հընսթէնդընի դղեակին գաւիթը :

IV. Արար .— Տիկին Արպըթհնըդի տան նստելու սենեակը Ռօքլիի մէջ :

Խաղին գործողութիւնը տեղի կ'ունենայ քսան և չորս ժամուան միջոցին, Անդիխոյ արուարձանները :

Այս թատերախաղը առաջին անգամ ներկայացնուած է 19 Ապրիլ 1893 ին, Լոնտոնի Հեյմարքէթ թատրոնին մէջ :

Անջինք

Լօրս իլինուօրին

Սրբ ձօն Բօնըթրէկդ

Լօրս Ալֆրէս Ռթխօրս

Պրե. Քելվիլ խորհրդարանի անդամ,

Պատ. Արթերէց Տօպընի, Տօքոր աստուածաբանութեան

Ճերլիս Արպըրինը

Ֆարենհար, մատակարար

Դրանսիս, սպասաւոր

Լէյսի Հընսթէնդըն

» Գարօլին Բօնդըթրէկդ

» Սրբդիլս

Տիկին Ելբնպի

Օրիորդ Էսրըր Ուրցուի

Ալիս, սենեկապանուիի

Տիկին Արպըրինը

ԿԱՐԵՒԽՈՒԹԵՆԵ ԶՈՒՄԿ ԿԻՆ ՄՐ

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

Տեսարանը, մարգագետին մը Հընսթէնդընի պատըշգամին առաջքը :

(Մըր ձօն և Լէյտի Գարօլին Բօնդըթրէքդ Օրիորդ Ուրցուի աթոռներու վրայ նստած խոչոր և կարմրածառի մը տակ :)

Լէյսի Գարօլին .— Կարծեմ ասիկա ձեր բնակած առաջին անգլիական ամարանոցն է, Օրիորդ Ուրցուի :

Էսրըր .— Այս, Լէյտի Գարօլին :

Լէյսի Գարօլին .— Կ'ըսեն թէ Ամերիկայի մէջ ամառանոցներ չունիք :

Էսրըր .— Շատ չունինք :

Լէյսի Գարօլին .— Գիւղեր ունի՞ք : Մեծ գիւղեր անշուշտ :

Էսրըր .— (Ժպտելով) Մենք աշխարհս ամէնէն մեծ երկիրը ունինք, Լէյտի Գարօլին : Դպրոցը մեզի կ'ըւսէին թէ մեր նահանգներէն ոմանք՝ այնքան խոչոր են որքան Ֆրանսան և Անգլիան իրարու միացած :

Լէյսի Գարօլին .— Ահ, կ'երեւակայեմ թէ անշուշտ շատ ընդարձակ կը կարծէք զանոնք : (Մըր ձօնին),

Ճօ՞ն, վզնոցդ պէտք է հագնիս : Ի՞նչ օգուտ կ'ունենայ քեզի համար չարունակ վզնոցներ հիւսելս եթէ չը պիտի գործածես զանոնք :

Սըր Ճօն .— Գարօլին, քեզ կը վստահացնեմ թէ շատ կը տաքնամ :

Լեյսի Գարօլին .— Կարծեմ թէ այնպէս չէ, Ճօն : Ուրեմն, Օրիորդ Ուըրսլի, ասկէց աւելի հրապութիչ տեղ մը չէիք կրնար երթալ, թէկ տունը ծայրայեղօրէն խոսնաւ է, գրեթէ անհանդուրժելիօրէն խոսնաւ, և սիրելի Լէյտի Հընսթէնդընը երբեմն քիչ մը թոյլ կը գտնուի հոս հրաւիրած անձանց ընտրութեան մէջ : (Սըր Ճօնին .) Ճէյնը շատ խառն կ'ընդունի : Լօրու Իլինուօրթէը, անշուշտ նշանաւոր ազնուական անձնաւորութիւն մըն է : Առանձնաշնորհում մըն է անոր հանդիպիլը : Եւ խորհրդարանի այն անդամը պարոն Քէթըլը . . . :

Սըր Ճօն .— Քէլվիլ ըսէ, սէրս, Քէլվիլ :

Լեյսի Գարօլին .— Շատ յարգելի անձ մը ըլլալու է : Իր վրայ խօսուիլը երբեք լոււած չէ, մանաւանդ հիմակուան ատենները որ մարդիկ շատ կը խօսուին : Բայց Տիկին Ալընպին շատ յարմար անձ մը չէ :

Էսրըր .— Զեմ հաւնիր Տիկին էլընպիին . Զեմ կարող ըսել թէ ան որքան անհաճոյ է ինձ :

Լեյսի Գարօլին .— Օրիորդ Ուըրսլի, չեմ կարծեր որ, ձեզի պէս օտարներ՝ իրաւունք ունենան համաւ կրութիւններ կամ հակակրութիւններ մշակել այն անձանց վրայ որ հրաւիրուած են տեսութեան համար : Տիկին էլընպին ազնուական ծնունդ է : Ան Լօրու Պրանքասթըրի քեռդուստրներէն մին է : Իրաւ է որ ըսոււած է թէ ամուսնանալէ առաջ երկու անգամ փախած է : Բայց գիտենք թէ մարդիկ որքա՞ն չար են յանախ : Ես անձնապէս չեմ հաւատար որ մէկ անգամէն աւելի փախած ըլլայ :

Էսրըր .— Պարոն Արպըթնըդը շատ պատուական երիտասարդ մըն է :

Լեյսի Գարօլին .— Ահ, այո՛, այն երիտասարդը որ դրամատան մը մէջ պաշտօն ունի : Լէյտի Հընսթէնդըն շատ բարի է զինքը հոս հրաւիրելուն համար, և Լօրտ իլինուօրթէը կը թուի իրեն հանդէպ համակրութիւն մը ունենալ : Թէկ վստահ չեմ թէ ձէյնը լաւ կ'ընէ՞ իր գիրքին մէջ չպահելով զինքը : Իմ երիտասարդութեան ժամանակս, Օրիորդ Ուըրսլի, երբեք ընկերութեան մէջ չէիր հանդիպեր մէկու մը որ իր ապրուստին համար աշխատեր : Ան յարմար չէր նկատուեր :

Էսրըր .— Ամերիկայի մէջ աշխատող մարդիկն են որ ամէնէն աւելի կը յարգենք :

Լեյսի Գարօլին .— Զեմ տարակուսիր այդ մասին :

Էսրըր .— Պարոն Արպըթնըդ հիանալի ընաւորութիւն մը ունի : Այնքան պարզ և անկեղծ է ան : Ամէնէն հիանալի բնաւորութիւններէն մին ունի որու հանդիպած ըլլաւ երբեք : Առանձնաշնորհում մըն է անոր հանդիպելը :

Լեյսի Գարօլին .— Անգլիոյ մէջ սովորութիւն չէ, օրիորդ Ուըրսլի, որ երիտասարդ օրիորդ մը այսքան խանդավառութեամբ խօսի անձի մը վրայ որ միւս սեռին կը պատկանի : Անգլիացի կիները իրենց զգացումները կը ծածկին մինչև որ ամուսնանան, անկէց ետքն է որ կը յայտնեն զանոնք :

Էսրըր .— Դուք, Անգլիոյ մէջ թող չէ՞ք տար որ բարեկամութիւն գոյութիւն ունենայ երիտասարդ մարդու մը և երիտասարդ աղջկան մը միջև :

(Լէյտի Հընսթէնդընը կ'երեւի, որուն կը հետեւի սպասաւոր մը ցփսիներով (շալ) և բարձով մը) :

Լեյսի Գարօլին .— Շատ անպատեհ կը զտնենք

ատիկա օրիորդ Ուըրսի : Ճէ՛յն , հիմայ կ'ըսէի թէ
ինչ հաճելի ընկերութեան մը հանդիպելու հրաւիրած
ես մեզի : Հիանալի կարողութիւն մը ունիս ընտրու-
թեան մէջ : Զիրք մըն է ատիկա :

Լէյսի Հընսրենդրն .— Սիրելի Գարօլինս , որքա՞ն
բարի ես : Կարծեմ ամէնքս ալ իրաբու հետ շատ յար-
մար ենք : Եւ կը յուսամ թէ մեր հրապուրիչ Ամերի-
կացի հիւրը՝ հաճելի յիշատակներ պիտի տանի հետը
մեր Անգլիոյ գիւղական կեանքի մասին : (Սպասաւո-
րին .) բարձը հոնկէց ինծի կու տա՞ս , Ֆրանսիս , նաև
իմ շալս , շէթլանտը , շէթլանտը բեր :
(Սպասաւորը կը հոռանայ շալը բերելու համար) :

(Ճէրըլտ Սրպըթնըթը կ'երեւի) :

Ճէրըլտ .— Լէյսի Հընսրենդրն , այնքան բարի լու-
րեր ունիմ ձեզի հաղորդելիք : Լօրտ Իլինուօրթհը հի-
մայ առաջարկեց զիս իր քարտուղարը ընել :

Լէյսի Հընսրենդրն .— Իր քարտուղա՞ը : Ատիկա
իրա՞ւ բարի լուր մըն է , Ճէրըլտ : Այդ կը նշանակէ
թէ շատ փայլուն ապագայ մը վերապահուած է քեզի
համար : Քու սիրելի մայրդ պիտի հրճուի : Պէտք է
ստիպեմ իրեն որ այս գիշեր հոս գայ : Կը կարծե՞ս որ
գայ Ճէրըլտ : Գիտեմ թէ որքա՞ն դժուար է զինքը
համոզելը որ ուետ տեղ մը երթայ :

Ճէրըլտ .— Ո՞հ , վատահ եմ որ կու գայ , Լէյսի Հըն-
սրենդրն , եթէ գիտնայ թէ Լօրտ Իլինուօրթհ ինծի
այսպիսի առաջարկ մը ըրած է :

(Սպասաւորը կու գայ շալով մը) :

Լէյսի Հընսրենդրն .— Ես պիտի գրեմ իրեն այդ
մասին , և խնդրեմ իրմէ որ գաւ և Լօրտ Իլինուօրթհը
տեսնէ : (Սպասաւորին) . քիչ մը սպասէ , Ֆրանսիս :
(Նամակ մը կը գրէ) :

Լէյսի Գարօլին .— Հիանալի սկզբնաւորութիւն
մըն է այդ , ձեզի պէս շատ երիտասարդ անձի մը
համար , Պ . Արպըթնըթ :

Ճէրըլտ .— Իրօք այնպէս է , Լէյտի Գարօլին : Կը
յուսամ թէ կարող պիտի ըլլամ ինքինքս արժանի
ընել անոր :

Լէյսի Գարօլին .— Վատահ եմ :

Ճէրըլտ .— (Հսթերին) . Պո՛ւք միայն տակաւին
զիս չշնորհաւորեցիք , օրիորդ Ուըրսի :

Էսրըր .— Շա՞տ գոհ էք այդ բանին համար :

Ճէրըլտ .— Անշուշտ գոհ եմ : Անիկա ամէն բան
ըսել է ինծի համար ու բաներ որ անյուսալի էին ա-
ռաջ՝ հիմայ կրնան յուսալի ըլլալ :

Էսրըր .— Ոչինչ պէտք է անյուսալի ըլլայ , կեան-
քը յոյս մըն է :

Լէյսի Հընսրենդրն .— Կ'ենթադրեմ , Գարօլին , թէ
Լօրտ Իլինուօրթհի նպատակն է գիւանագիտութեան
հետեւիլը : Լսեցի թէ Վիէննաի գերազանութիւնը իրեն
առաջարկուած է : Բայց կրնայ ըլլալ որ ճիշդ չըլլայ
այդ :

Լէյսի Գարօլին .— Չիմ կարծեր թէ լաւ ըլլայ որ
արտասահմանի մէջ Անգլիան ներկայացնողը ամուրի
ըլլայ , Ճէյն : Այդ կրնայ կնճուտութեանց տեղի տալ :

Լէյսի Հընսրենդրն .— Շատ ջղային ես , Գարօլին :
Հաւատա ինձ , շատ ջղային ես : Եւ յետոյ , լորտ
Իլինուօրթհ կրնայ ամուսնանալ օր մը : Ես յոյսեր ու-
նէի որ ան կ'ամուսնանար Լէյտի Քէլոօին հետ բայց
կարծեմ Լօրտ Իլինուօրթհ այնպէս ըսաւ թէ անոր
ընտանիքը շատ մեծ էր : Կամ թէ իր ոտքերը շատ մեծ
էին : Միտքս չէ թէ ո՞րն էր : Շատ կը ցաւիմ ատոր
համար : Ան գեսպանի մը կինը ըլլալու համար ծնած
էր :

Լեյսի Գարօլին .— Անշուշտ անիկա զարմանալի կարողութիւն մը ունի մարդոց անունները յիշելու, և իրենց գէմքերը մոռնալու մէջ :

Լեյսի Հընարքենդրն .— Լաւ, այդ շատ բնական է, Գարօլին, այնպէս չէ :

(Սպասաւորին) : Բայ Հէնրիին որ պատասխանի սպասէ : Յու սիրելի մօրդ երկառող մը զրեցի, ձէրըլտ, իրեն հաղորդելու համար քու բարի լուրերդ, և ըսելու համար որ անպատճառ ճաշի գայ :

(Սպասաւորը կը մեկնի) :

Ճերբլ .— Զարաչար աղնիւ էք, Լէյտի Հշամթէնւ գըն : (Եսթըրին) : Կ'ուզէք գալ պտոյտ մը ընելու համար, Օրիորդ Ռւըրսլի :

Էսքըր .— Համոյքով :

(Ճէրըլտի հետ կը մեկնի) :

Լեյսի Հընարքենդրն .— Շատ գոհ եմ Ճէրըլտ Արպրթնըդի լաւ բախտին համար, անիկա իմ պաշտպանեալս է : Եւ մասնաւորաբար գոհ եմ որ Լօրտ իլինուօրթն առաջարկը ըրեր է ինքնաբերաբար, առանց իմ յիշեցընելուս : Եւ ոչ մէկը կը փափաքի որ խնդրանքներ ընեն իրեն : Կը յիշեմ խեղճ շառլօք Բէկտընը որ ինքնը ընթաց շատ անհաճոյ ըրած էր ատեն մը, ինչու որ ֆրանսացի դաստիարակունի մը ունէր որ ամենուն կը յանձնարէր :

Լեյսի Գարօլին .— Ես տեսայ դաստիարակունին, Ճէյն : Լէյտի Բէկրըն զայն ինծի զրկեց : Էլինորը գալէն առաջ էր, Ան շատ գեղեցիկ էր պարկեշտ տուն մը կարենալ մտնելու համար : Չեմ զարմանար լէյտի Բէկտընին որ այնքան կը փափաքէր զանի հեռացնել :

Լեյսի Հընարքենդրն .— Ա՛հ, ատով կը բացատրուի :

Լեյսի Գարօլին .— Ճօն, գետինը շատ խոնաւ է

քեզի համար : Լաւ կ'ըլլար որ երթայիր և կրկնակօշիկներգ հազնէիր անմիջապէս :

Սըր Ճօն .— Շատ հանգիստ եմ, Գարօլին, քեզ կը վստահեցնեմ :

Լեյսի Գարօլին .— Ես աւելի լաւ կրնամ զատել այդ Ճօն : Խնդրեմ ըրէ ինչ որ կ'ըսեմ :

(Սըր Ճօն վեր կ'ելլէ և կ'երթայ) :

Լեյսի Հընարքենդրն .— Զինքը կ'աւրես, Գարօլին, իրաւ որ :

(Տիկին էլենպի և Լէյտի Սթըրդիլտ կ'երեւին) :

(Տիկին էլենպիին) : Ռւըրեմ, սիրելիս, կը յուսամ թէ կը հաւանիք պարտէզին : Այնպէս կ'ըսեն որ լաւ զարդարուած է ծառերով :

Տիկին էլլենպի .— Մառերը սքանչելի են . Լէյտի Հընսթէնտըն :

Լեյսի Սըրտիլտ .— Շատ շատ սքանչելի :

Տիկին էլլենպի .— Բայց վստահ եմ որ եթէ վեց ամիսի չափ գիւղը բնակիմ, այնքան անբիծ պիտի ըլլամ որ և ոչ մէկը ինձ ուշադրութիւն պիտի ընէ այլես :

Լեյսի Հընարքենդրն .— Չեզ կը վստահեցնեմ սիրելիս, թէ գիւղը այդ ազգեցութիւնը չըներ բնաւ : Ինչու, Մէլտհօրթէն չէր, ասկէց միայն երկու մզոն անդին — որ Լէյտի Պէլթընը փախաւ լորտ Ֆէտհըրադէլին հետ : Կատարելագէս կը յիշեմ պատահարը : Ինզ Լօրտ Պէլթըն երեք օր ետքը մեռաւ ուրախութիւնէն կամ կաթուածէ : Չեմ յիշեր թէ որն էր : Հոս կեցող շատ մը հիւրեր ունէինք այն միջոցին, այնպէս որ ամէնքս ալ շատ հետաքրքրուած էինք ամբողջ այդ խնդրով :

Տիկին էլլենպի .— Կարծեմ փախչիլը վատութիւն է : Եւ վտանգը այնքան հազուազիւտ եղած է արդիական կեանքին մէջ :

Լեյսի Գարօլին .— Որքան որ կրնամ հասկնալ ,
Ներկայ ժամանակուան երիտասարդ կիները կը թուին
իրենց կեանքին միակ նպատակը ընել միշտ կրակի
հետ խաղալը :

Տիկին էլբափի .— Կրակին հետ խաղալու միակ
առաւելութիւնը՝ Լեյտի Գարօլին այն է թէ մարդ ոչ
իսկ թեթեւապէս կը խանձի : Անոր հետ խաղալ ըլ
գիտցող մարդիկն են որ բոլորովին կ'այրին :

Լեյսի Սրբաթիլս .— Այս', կ'ըմբռնեմ այդ գաղա-
փարը , շատ ու շատ օգտակար է :

Լեյսի Հընսրինըն .— Զեմ գիտեր թէ աշխարհը
ինչպէս առաջ պիտի երթար այդպիսի տեսութիւնով
մը , սիրելի տիկին էլբափի :

Լեյսի Սրբաթիլս .— Ա՛հ , աշխարհը այրերուն հա-
մար շինուած է , և ոչ թէ կիներուն ,

Տիկին էլբափի .— Ա՛հ , մի ըսէք ատիկա , Լեյտի
Սթըդֆիլու , մե՛նք աւելի լաւ ժամանակ կ'անցնենք
անոնցմէ , Շատ աւելի բաներ մեզի արգիլուած ըլլա-
լուն համար , քան թէ անոնց :

Լեյսի Սրբաթիլս .— Այս , այդ շատ , շատ ձիշտ է :
Բնաւ չէի խորհած ատոր վրայ :

(Սըր ձօն և Պրն . Քէլվիլ կը մտնեն) :

Լեյսի Հընսրինըն .— Ուրեմն , պարո՞ն Քէլվիլ ,
ձեր գործը աւարտեցի՞ք :

Քէլվիլ . — Այսօրուան գիրս վերջացուցի , Լեյտի
Հընսթընտըն : Մանր աշխատութիւն մըն էր այն :
Հանրային մարդու մը ժամերը՝ շատ ծանրաբեռնուած
են արդի ժամանակները , իրապէս շատ ծանրաբեռնու-
ած : Եւ չեմ կարծեր որ ամէնքն ալ հասկնան այդ :

Լեյսի Գարօլին .— Ձօ՞ն , կրկնակօշիկներդ հա-
գա՞ր :

Սըր ձօն .— Այս' , սէրս :
Լեյսի Գարօլին .— Կարծեմ աւելի լաւ կ'ըլլայ եթէ
հոս գաս , ձօն : Հոս աւելի պատսպարուած է :
Սըր ձօն .— Շատ հանգիստ եմ , Գարօլին :

Լեյսի Գարօլին .— Զեմ կարծեր , ձօն : Աւելի լաւ
կ'ըլլայ եթէ քովս նստիս :

(Սըր ձօն կ'ելլէ ու քովս կ'երթայ :)
Լեյսի Սրբաթիլս .— Եւ ի՞նչ նիւթի վրայ կը գը-
րէիք այս առաւօտ , Պրն . Քէլվիլ :

Քէլվիլ . — Սովորական նիւթին վրայ , Լեյտի
Սթըդֆիլս : Անբծութեան վրայ :

Լեյսի Սրբաթիլս . — Ատիկա շատ , շատ հետաքըլր-
քրական նիւթ մը ըլլալու է անոր վրայ գրելու հա-
մար :

Քէլվիլ . — Միակ նիւթն է որ ազգային կենսա-
կան կարեւորութիւն մը ունի այժմ , Լեյտի Սթըթ-
Փիլս : Նպատակս է իմ ընտրելիներուս խորհուրդին
դիմելը այդ նիւթին համար , խորհրդարանը գումար-
ուելէ առաջն ես այնպէս կը տեսնեմ թէ այս երկրին
աղքատ դասակարգը՝ ուշադիր փափաք մը կը ցուցնէ
ներկայիս գոյութիւն ունեցողներէն աւելի բարձր բա-
րոյագիտական սկզբունքներ հաստատելու մասին :

Լեյսի Սրբաթիլս . — Որքան շատ , շատ ազնիւ են
անոնք :

Լեյսի Գարօլին . — Քաղաքականութեան մէջ կա-
նանց գեր ունենալուն մասին համակի՞ր էք : Պրն .
Քէրդըլ :

Սըր ձօն . — Քէլվիլ , սէրս , Քէլվիլ :
Պրն . Քէլվիլ . — Կիներուն հետզհետէ աճող ազգե-
ցութիւնը՝ միակ ապահովիչ բանն է մեր քաղաքական
կեանքին մէջ , Լեյտի Գարօլին : Կիները միշտ բարոյա-

կանութեան կողմը կը բռնեն, թէ հանրային և թէ
մասնաւոր կեաեքի մէջ :

Լեյսի Սրբդֆիլս.— Խիստ շատ գոհունակութիւն
կ'զգամ ձեր այդպէս ըսելը իմանալով ։

Լեյսի Հընսրենդրն .— Ահ, այո՛ — կանանց բա-
րոյական յատկութիւնները — այդ է կարեւոր բանը :
Կը վախնամ, Գարօլին, որ սիրելի Լօրտ իլինուրթհը,
պէտք եղածին չափ կարեւորութիւն չընծայեր կա-
նանց բարոյական յատկութիւններ ունենալուն :

(Լորտ իլինուրթհ ներս կը մտնէ :)

Լեյսի Սրբդֆիլս.— Ամբողջ աշխարհ կ'ըսէ թէ
Լօրտ իլինուրթհ շատ գէշ մարդ մըն է :

Լօրտ իլինուրթհ .— Բայց ո՞ր աշխարհը կ'ըսէ այդ,
Լէյտի Սթըդֆիլտ : Անիկա անդիի աշխարհքը ըլալու է :
Այս աշխարհքը և ես գերազանցօրէն լաւ ենք իրարու-
հետո : (Կը նստի տիկին ելենպիին քովը) :

Լեյսի Սրբդֆիլս.— Իմ բոլոր ծանօթներս կ'ըսեն
թէ, շատ, շատ գէշ մարդ մըն էք :

Լօրտ իլինուրթհ .— Կատարելապէս հրէշային բան
է մարդոց այն սովորութիւնը, ըսելով մէկու մը ետե-
ւէն գէշ բաներ՝ թէկ բացարձակապէս և ամբողջովին
ճշմարտութիւն ըլլան անոնք :

Լեյսի Հընսրենդրն .— Սիրելի Լօրտ իլինուրթհէն
քնաւ յոյս շկայ, Լէյտի Սթըդֆիլտ : Ես ետ կեցած եմ
այլես զինքը ուզդելէ : Հանրային բարոյականով ըզբա-
զող ընկերութիւն մը պէտք է իր տնօրէններովը և
վճարեալ քարտուղարովը միասին, որպէս զի կարենայ
ընել այդ բանը : Բայց քարտուղարը ունիք արգէն,
Լօրտ իլինուրթհ, այնպէս չէ՞ : Ճէրըլտ Արարթնըթը
մեղի խօսեցաւ իր մեծ բախտին մասին, ըրածնիդ իրա-
պէս շատ բարի բան մըն էր :

Լօրտ իլինուրթհ .— Օ՛հ, մի ըսէք ատիկայ, Լէյտի
Հընսրենդրն : Բարին սոսկալի բառ մըն է : Առաջին
վայրկեանին խոկ որ երիտասարդ Արարթնըթին հան-
դիպեցայ՝ շատ համակրեցայ իրեն, ան ինծի մեծ օդ-
տակարութիւն մը պիտի ունենայ այն բանին մէջ որ
կը մոտածեմ ընել յիմարօրէն :

Լեյսի Հընսրենդրն .— Ան զմայլելի երիտասարդ
մըն է : Եւ իր մայրը իմ ամենասիրելի բարեկամուհին-
ներէս մին է : Հիմայ պտոյտ մը ընելու գնաց մեր
գեղեցիկ Ամերիկուհին հետո, Շատ գեղեցիկ է ան,
այնպէս չէ :

Լեյսի Գարօլին .— Զափազանց գեղեցիկ : Այս ամեն-
ըիկոցի աղջիկներն ալ հետերնին կը տանին մէր ա-
մէնէն լաւ տղաքները : Ինչո՞ւ չեն կրնար մնալ իրենց
երկրին մէջ : Միշտ մեղի այնպէս կ'ըսեն թէ Ամերի-
կան կիներուն գրախան է :

Լօրտ իլինուրթհ .— Այնպէս է, Լէյտի Գարօլին :
Անոր համար է որ, Եւային պէս, այնքան շատ կը փա-
փաքին անկեց գուրս ելլել :

Լեյսի Գարօլին .— Ո՞վ են օրիորդ Ռւըրսլիի ծը-
նողքը :

Լօրտ իլինուրթհ .— Ամերիկացի կիները զարմա-
նալիօրէն խելացի են իրենց ծնողքին ով ըլլալը ծած-
կելու մասին :

Լեյսի Հընսրենդրն .— Սիրելի Լօրտ իլինուրթհէն
ի՞նչ ըսել կ'ուզէք : Օրիորդ Ռւըրսլին որբ մըն է, Գա-
րօլին : Իր հայրը շատ հարուստ միլիոնատէր մըն էր,
կամ մարդասէր մը, կամ երկուքն ալ կարծեմ, և որ
իմ որդիս հիւրընկալած էր շատ հիւրասիրութեամբ
երբ ան Պօսթըն այցելեց : Զեմ գիտեր սոկայն թէ ինչ
կերպով իր հարստութիւնը շինած է :

Քելվիլ .— Ամերիկեան պահածոյներով կ'երեւա-
կայեմ:

Լեյսի Հընսրէնըրն .— Ի՞նչ են ամերիկեան պահա-
ծոները :

Լօրս Իլինուօրին .— Ամերիկեան վէպեր :

Լեյսի Հընսրէնըրն .— Որքա՞ն եղական... աղէկ,
ինչ որ ալ ըլլայ իր մեծ հարստութեան ծագումը՝ մեծ
յարգանք մը ունիմ օրիորդ Ռւըրսլիին հանդէպ, Ան
չափազանց լաւ կը հագուի: Բոլոր ամերիկուհիներն ալ
լաւ կը հագուին: Իրենց հագուստները Բարիզէն բերել
կու տան:

Տիկին Ելրնպի .— Այնպէս կ'ըսեն, Լէյտի Հընու-
թէնըրն, թէ, երբ բարի Ամերիկացիք մեռնին Բարիզ
կ'երթան:

Լեյսի Հընսրէնըրն .— Իրա՞ւ, Եւ երբ գէշ Ամերի-
կացիները մեռնին, ո՞ւր կ'երթան:

Լօրս Իլինուօրին .— Ո՞հ, անոնք Ամերիկա կ'եր-
թան:

Քելվիլ .— Կը վախնամ թէ Ամերիկան չէք գընա-
հատեր, Լորտ Իլինուօրթն: Շատ նշանաւոր երկիր մը
մանաւանդ երբ նկատի առնէք իր երիտասարդութիւ-
նը:

Լօրս Իլինուօրին .— Ամերիկայի երիտասարդու-
թիւնը՝ իրենց ամէնէն հին աւանդութիւնը եղած է:
Երեք հարիւր տարիէ ի վեր է որ կը շարունակուի ան:
Իրենց խօսակցութիւնը լսելով մարդ կը կածէր թէ
իրենց առաջին տղայութիւնը կ'ապրին: Որքան քա-
ղաքակրթութիւնը յառաջդիմէ, անոնք իրենց երկրորդ
մանկութեանը հասած կ'ըլլան:

Քելվիլ .— Տարակոյս չկայ թէ շատ ապականու-
թիւն կայ ամերիկեան քաղաքականութեան մէջ,
Կարծեմ ատոր կ'ակնարկէք:

Լօրս Իլինուօրին .— Կը տարակուսիմ:

Լեյսի Հընսրէնըրն .— Քաղաքականութիւնը ամէն
տեղ ախուր վիճակի մը մէջ է, կ'ըսեն: Անշուշտ
Անգլիոյ մէջ ալ այսպէս է: Սիրելի պարոն Գարսուն
երկիրը կը կործանէ: Կը զարմանամ թէ տիկին Գար-
տուն ինչպէս կը թոյլատրէ իրեն: Վատահ եմ, Լորտ
Իլինուօրթն, որ կը մտածէք թէ պէտք չէ թոյլատրել
չպարզացած մարդոց, որ քուէ տան:

Իլինուօրին .— Կարծեմ միակ մարդիկն են որ
պէտք է քուէ տան:

Քելվիլ .— Արդի քաղաքականութեան կողմնակից
չէք ուրեմն, Լորտ Իլինուօրթն:

Լօրս Իլինուօրին .— Մարդ պէտք չէ ունէ բանի
կողմնակից ըլլայ, պարոն Թէլվիլ: Կողմնակցութիւն
ընկը՝ անկեղծութեան սկզբնաւորութիւնն է, որուն
շուտով կը յաջորդէ լրջութիւնը որով մորդկային ա-
րարածը ձանձրացուցիչ բան մը կ'ըլլայ: Թէպէտ և
քաղաքականութիւնը շատ քեզ վնաս կը պատճառէ:
Կարելի չէ մարդոց բարիք ընել խորհրդարանի գոր-
ծակցութեամբ, — այդ ալ բան մըն է:

Քվիլ .— Անշուշտ չէք կրնար ուրանալ թէ քա-
ղաքականութիւնը միշտ մեծ համակրութեամբ վերա-
բերուած է աղքատաց տառապանքներուն հանդէպ:

Լօրս Իլինուօրին .— Այդ իր մասնաւոր մոլութիւնն
է: Ատիկա ներկայ դարսու ամենամեծն մոլութիւնն է:
Մարդ պէտք է համակիր ըլլայ ուրախութեան: զե-
ղեցկութեան, կեանքին երանդներուն հանդէպ կեան-
քի վէրքերուն վրայ որքան քիչ խօսուի այնքան լաւ
կ'ըլլայ, պարոն Թէլվիլ:

Քելվիլ .— Այսուհանդերձ մեր Արեւելակողմին հա-
րցը շատ կարեւոր ինողիր մըն է:



Լօրս Իլինուօրբի . — Այսպէս է : Ան գերսւթեան խնդիր մըն է : Եւ մենք կը ջանանք լուծել զայն՝ գերիները զուարճացնելով :

Լեյսի Հընքինը . — Անշուշտ , չատ բան կարելի է ընկը աժան զուարճութիւններու միջոցաւ , ինչպէս որ կ'ըսէք . Լօրտ Իլինուօրթհ . — Մեր այստեղի երիցապեալ սիրելի Տօքթ . Տօպէնին , իր փոխանորդներուն օգնութեամբ՝ հիանալի զրոսանքներ կը հայթայթէ ձըմեռ աղքատներուն համար : Եւ չատ աղեկութիւն կարելի է ընկը մոգական լապտերով , կամ քարոզութեամբ , կամ այդ տեսակ ո և է ժողովրդական զրոսանքով :

Լեյսի Գարօլին . — Ես բնուե համամիտ չիմ որ աղքատներուն համար զուարճութիւններ ստեղծուին ձէյն Անկողնի ծածկոցները և ածուխը բաւական են : Կը բաւէ որքան հաճոյքի սէրը կը տիրէ բարձր զասակարգին մէջ : Ներկայ դարուն մէջ առողջութեան պէտք ունիք : Հաճոյքը բնաւ , բնաւ առողջապահիկ չէ :

Քելվիլ . — Շատ իրաւունք ունիք , Լեյտի Գարօլին :

Լեյսի Գարօլին . — Կարծեմ թէ սովորաբար իրաւունք կ'ունենամ :

Տիկին Էլլնալի . — Սարսափելի բառ մըն է «առողջութիւնը» :

Լօրս Իլինուօրբի . — Ան ամէնէն ապուշ բառն է մեր լեզուին մէջ , և մարդիկ այնքան լու գիտեն թէ սովորաբար առողջութիւն ըսելով ինչ կը հասկցուի : Ան կը նշանակէ թէ գիւղը բնակող անդլիացի ազնուականը սրարշաւ որսի կ'ելլէ աղուէս մը որսալու համար , — անխոստովանելին որ կը հաւածէ անմորսելին : (Չուտուելիք երէները) :

Քելվիլ . — Կրնա՞մ հարցնել Լօրտ Իլինուօրթհ թէ դուք լորտերու տունը լաւագո՞յն հաստատութիւն մը կը նկատէք քան քաղաքապետարանը :

Լօրս Իլինուօրբի . — Շատ աւելի լու հաստատութիւն մըն է անշաւշտ : Մենք լորտերու ժողովին մէջ բնաւ կարեւորութիւն չենք տար ժողովրդեան կարծիքին : Այդ բանը մեզ քաղաքակրթեալ մարմին մը կ'ընէ :

Քելվիլ . — Լըջօրէ՞ն այդպիսի աեսութիւն մը կը յայտնէք :

Լօրս Իլինուօրբի . — Շատ լուրջ , պարոն Քելվիլ : (Տիկին Էլլնալին) : Շատ զռեհիկ է այժմու մարդոց այն սովորութիւնը . երբ կը հարցնեն թէ՝ լուրջ կը խօսիս կամ ոչ , քու գաղտփարգ իրենց յայտնելէ ետք : Ոչ մէկ բան լուրջ է կիրքէն զտաւ : Իմացականութիւնը լուրջ բան մը չէ , և չէ եղած բնաւ : Ան գործիք մըն է , որուն վրայ կը նուտգես , այդ է ամէնը : Իմացականութեան միակ լուրջ ձեւը որ զիտեմ , բրիտանական մատաւորականութիւնն է , որուն վրայ Ռուսերը թըմբուկ կը զարնեն :

Լեյսի Հընքինը . — Թմբուկին մասին ի՞նչ կը խօսիք , Լօրտ Իլինուօրթհ :

Լօրս Իլինուօրբի . — Տիկին Էլլնալիին հետ կը խօսէի Լոնտոնի թերթերուն խմբագրականներուն մասին :

Լեյսի Հընքինը . — Բայց կը հաւատա՞ք թերթերուն մէջ գրուած բոլոր բաներուն :

Լօրս Իլինուօրբի . — Կը հաւատամ : Մեր օրերը միայն չկարդացուելիք բաներն են որ տեղի կ'ունենան : (Վեր կ'ուլէ Տիկին Էլլնալիին հետ) :

Լեյսի Հընքինը . — Կ'երթա՞ք , Տիկին Էլլնալի : Տիկին Էլլնալի . — Մինչեւ ծաղկանոցը կ'երթամ միայն Լօրտ Իլինուօրթհ այս առաւօտ ինձ ըսաւ որ հոն օռքիտէ մը կը գտնուի որ հօթը մահացու մեղքերուն չափ գեղեցիկ է :

Լեյսի Հընքինը . — Սիրելիս , կը կարծեմ թէ

այդպիսի բան մը չկայ հոն։ Անշուշտ պարտիզանին պիտի հարցնես։

(Տիկին ելընպիշե Լօրտ իլինուօրթն կը մեկնին)։ Լեյսի Գարօլին։—Զարժանալի տիպուր մըն է Տիկին ելընպին։

Լեյսի Հրեսրենդըն։—Ան երբեմն թոյլ կու տայ որ իր խելացի լեզուն փախչի իր անձին հիտ միասին։

Լեյսի Գարօլին։—Միայն ոյդ բա՞նն է, ձէյն, որ Տիկին ելընպին թոյլ կու տայ որ փախչի իր անձին հիտ։

Լեյսի Հրեսրենդըն։—Այնպէս կը յուսամ Գարօլին, վստահ եմ։ (Ներս կը մանէ Լօրտ Սլֆրէտ)։ սիրելի Լօրտ Սլֆրէտ, եկէք մեզի միացէք։ (Լօրտ Սլֆրէտ կը նոսի Լէյտի Սթրդֆիլտին քովր)։

Լեյսի Գարօլին։— ձէյն, միշտ լաւ կը մտածես ամէնուն մասին։ Այդ մեծ յանցանք մըն է։

Լեյսի Սրբդժիլս։—Լէյտի Գարօլին, իրա՞ւ կը խորհիք թէ մարդ պէտք է գէշ մտածէ ամէնուն մասին։

Լեյսի Գարօլին։—Կարծեմ այդպէս ընելը աւելի ապահով է, Լէյտի Սթրդֆիլտ։ Անշուշտ մինչև որ ստուգուի թէ մարդիկ բարի հոն։ Բայց ատիկա շատ մը խուզարկութիւն կը պահանջէ մեր օրերը։

Լեյսի Սրբդժիլս։—Բայց այնքան անիբաւ բամբուսնք տեղի կ'ունենայ արդի կետնքին մէջ։

Լեյսի Գարօլին։—Երէկ իրիկուն ճաշի միջացին Լօրտ իլինուօրթն ինձ ակնարկեց թէ՝ ամէն գայթակդութեան հիմ՝ թէպէտ անբարոյ ոյլ իրական և բացարձակ ճշմարտութիւն մը կը կուզմէ։

Քէլվիլ։—Լօրտ իլինուօրթն անշուշտ շատ փայլուն մարդ մըն է, բայց ինձ այնպէս կը թուի թէ անոր քով կը պակսի այն գեղեցիկ հաւատքը կեանքին

ազնուութեան և անբծութեան մասին, որ այնքան կարեւոր է այս դարսու մէջ։

Լեյսի Սրբդժիլս։—Այո՛, խիստ շտա կարեւոր, այնպէս չէ։

Քէլվիլ։—Լօրտ իլինուօրթն իմ վրաս այն տը-պաւուութիւնը կը թողու թէ, ան չի գնահատեր մեր Անգլիոյ անական կեանքին ողեղցկութիւնը։ Պէտք է ըսեմ թէ այդ մասին ան ազգուած է օտար գաղա-փարներէ։

Լեյսի Սրբդժիլս։—Զկայ, չկայ բան մը, որ տը-նական կեանքին չափ գեղեցիկ ըլլայ, այնպէս չէ։

Քէլվիլ։—Անգլիոյ մէջ, հիմն է ան մեր բարոյա-կան գրութեան, Լէյտի Սթրդֆիլտ։ Առանց անոր մենք մեր գրացիներուն պիտի նմանէինք։

Լեյսի Սրբդժիլս։—Ատիկա շատ ու շտա տիսուր պիտի ըլլար, այնպէս չէ։

Քէլվիլ։—Կը վախնամ նաև, թէ Լօրտ իլինու-օրթն կինը պարզապէս խաղալիք մը կը նկատէ։ Ահա, ես երեխք կինը խաղալիք մը նկատած չեմ։ Հան-րային ինչպէս նաև մասնաւոր կեանքի մէջ՝ կինը մարդուն մտաւորական օգնականն է։ Առանց անոր՝ մենք պիտի մոռնայինք ձշմարիտ իտէալները։ (Կը նստի Լէյտի Սթրդֆիլտի քովր)։

Լեյսի Սրբժիլս։—Ուքան ուրախ եմ որ այդպէս կ'ըսէք։

Լեյսի Գարօլին։—Ամուսնացա՞ծ էք, Պրն. Պէտրը։ Սրբ ծօն։— Պէլվիլ, սիրելիս, Քէլվիլ։

Քէլվիլ։—Ամուսնացած եմ, Լէյտի Գարօլին։

Լեյսի Գարօլին։— Բազմանդա՞մ էք։

Քէլվիլ։— Այո՛։

Լեյսի Գարօլին։— Բանի՞ հոգի։

Քելվիլ .— Ութը:

Լեյսի Գարօլին .— Տիկին Քէդրըւ և տղաք կարծեմ ծովեզերքն են: (Սըր Ճօն իր ուսերը կը թոթուէ) :

Քելվիլ .— Կինս տղոցը հետ ծովեզերքն են, լէյտի Գարօլին:

Լեյսի Գարօլին .— Տարակոյս չկայ թէ անոնց պիտի միտնաք, աւելի ետքը:

Քելվիլ .— Եթէ իմ հանրային յանձնառութիւններս ինձ թոյլատրեն:

Լեյսի Գարօլին .— Զեր հանրային կեանքը՝ մեծ գոհունակութեան աղբիւր մը ըլլալու է Տիկին Քէդրըւին:

Սըր Ճօն .— Քէլվիլ, սէրս, Քէլվիլ:

Լեյսի Սըրդֆիլս .— (Լօրտ Ալֆրէտին): Որքա՞ն զեղցիկ են ձեր այդ ոսկեզօծ գաղաթով սիկառէթները, Լօրտ Ալֆրէտ:

Լօրտ Ալֆրէտ .— Զափաղանց սուզ են; Զանոնք կրնամ գործածել երբ պարտքի մէջ ըլլամ միայն:

Լեյսի Սըրդֆիլս .— Ի՞նչ սոսկալի անձկութիւն մը ըլլալու է պարտքի մէջ ըլլալը:

Լօրտ Ալֆրէտ .— Մարդ պէտք է որ զբաղում մը ունենալ հիմակուան ատենները: Եթէ իմ պարտքերս չունենայի բան մըն ալ չը պիտի ունենայի վրան խորհելու համար: Բոլոր տղաքն ալ զոր կը ճանչնամ պարտքի մէջ են:

Լեյսի Սըրդֆիլս .— Բայց այն մարդիկը որոնց պարտական էք՝ ձեզի շատ, շատ մեծ նեղութիւն չի՞ն պատճառեր: (Սպասաւորը կուգայ.)

Լօրտ Ալֆրէտ .— Ո՞չ, ոչ, կը գրեն անոնք, իսկ ես չեմ պատասխաներ:

Լեյսի Սըրդֆիլս .— Որքա՞ն շատ, շատ զարմանալի:

Լեյսի Հընսրէնդըն .— Ահ, Գարօլին, նամակ մը եկաւ սէրելի Տիկին Արպըթհնօթէն: Ճաշին չը պիտի մասնակցի եղար: Շատ կը ցաւիմ: Բայց իրիկունը պիտի գայ: Շատ դո՞ւ եմ յիրաւի: Ամէնէն անուշ կիներէն մին է ան: Նաև հիանալի գիր մը ունի, խոշոր և զօրաւոր: (Նամակը Լէյտի Գարօլինին կուտայ):

Լեյսի Գարօլին .— (Նամակին նայելով): Կանացիութեան պակաս կայ անոր մէջ ձէն: Կանացիութիւնը այն յատկութիւնն է որ ամէնէն աւելի կը սիրեմ տեսնել կիներուն մօտ:

Լեյսի Հընսրէնդըն .— (Նամակը ետ առնելով սեղանին վրայ կը դնէ): Օ՞չ, շտո կանացի է ան, Գարօլին և այնքան ալ բարի: Պէտք ես լսել թէ Արքերէցը ինչ կ'ըսէ իր մասին: Ան իր աջ բազուկը կը նկատէ զանի թեմին մէջ: (Սպասաւորը կը խօսի իրեն համ): «Դեղին հիւրանոցին մէջ»: Ամէնքս ալ ներս երթա՞նք: Լէյտի Սթըդֆիլտ, ներս երթա՞նք թէյ առնելու համար:

Լեյսի Սըրդֆիլս .— Հածոյքով, Լէյտի Հընսթէնտըն: (Ոտքի կ'ելլեն և կը պատրաստուին մեկնելու): Սըր Ճօն կ'առաջարկէ Լէյտի Սթըդֆիլտին վերակուն տանիի):

Լեյսի Գարօլին .— Ճօն, թոյլ առւր որ քու քեռորդիդ Լէյտի Սթըդֆիլտին վերարկուն տանի, պէտք է օդնես ինձի իմ ձեռագործի կողովս առնելով: (Լօրտ Իլինուօրթէ և Տիկին կլընպի կուգան):

Սըր Ճօն .— Անշո՞ւշտ սէրս:

(Կը մեկնին):

Տիկին Էլլընպի .— Զարմանալի բան, ագեղ կիները միշտ կը նախանձին իրենց ամուսիններէն, իսկ գեղեցիկները բնաւ երբեք:

Լօրտ Իլինուօրթի .— Գեղեցիկ կիները բնաւ ժա-

մանակ չեն ունենար նոխանձելու համար։ Միշտ այն-քա՞ն զբաղած կ'ըլլան ուրիշ կիներու ամուսիններէն նախանձելով։

Տիկին Ելրնպի. — Ես կը կարծէի թէ Լէյտի Գարովին այլես յոպնած պիտի ըլլար ամուսնական անձկութիւններու մէջ։ Աըր ձօնը իր չորրորդ ամուսինն է։

Լօրս Ելինուօրփի. — Այդքան շատ անգամներ ամուսնանալը անչուշտ շատ վայելուչ չէ։ Բառն ապրուան Ռօմանու կինը աւերակ մը կը գարծնէ։ Բայց քսան ատրուան ամուսնական կեանք մը զինքը հանրային չէնքի մը պէս կ'ընէ։

Տիկին Ելրնպի. — Քառն ուսրուան Ռօմանու, Ատանկ բան մը կ'այց։

Լօրս Ելինուօրփի. — Ոչ մեր օրերը, կիները շատ խելացի եղած են այժմ։ Ոչ մէկ բան կ'աւրէ Ռօմանո մը այնքան, որքան սրամառնեան ոգին կնոջ քով։

Տիկին Ելրնպի. — Կառ անոր պակասը երիկ մարդուն քով։

Լօրս Ելինուօրփի. — Շատ իրուունք ունիք, Աղօթատեղի մէջ ամէն մարդ պէտք է որ լուրջ ըլլայ, բացի այն բանէն որուն կ'երկրպացին։

Տիկին Ելրնպի. — Եւ երիկմա՞րդը պէտք է ըլլայ այդ բան։

Լօրս Ելինուօրփի. — Կիները այնքան չնորեալիութեամբ ծունկի կու գան։ Երիկ մարդիկ այնպէս չեն։

Տիկին Ելրնպի. — Տիկին Սթըղֆիլտին վրա՞յ կը մը-տածէք։

Լօրս Ելինուօրփի. — Զեզ կը վատահցնեմ թէ այս վերջին քառորդ ժամէն ի վեր Լէյտի Սթըղֆիլտի վրայ չեմ խորհած։

Տիկին Ելրնպի. — Այդքա՞ն մեծ գաղանիք մընէ ան։

Լօրս Ելինուօրփի. — Անիկա գաղանիքէ աւելի բան մըն է — անիկա երազալին է։

Տիկին Ելրնպի. — Երազները երկար չեն տեւեր։

Լօրս Ելինուօրփի. — Իրենց գլխաւոր հրապոյրն է այդ։

(Եսթըր և Ճէրըլտ ներս կը մտնեն)։

Ճէրըլտ. — Լօրս Ելինուօրփին ամէնքն ոլ զիս կը շնորհաւորեն, Լէյտի Հընսթէնզըն և Լէյտի Գարովին, և... ամէնքն ոլ։ Կը յուսամ թէ լաւ քարտուղար մը պիտի ըլլամ։

Լօրս Ելինուօրփի. — Դան օրինակելի քարտուղար մը պիտի ըլլաս, Ճէրըլտ։ (Կը խօսակցիանոր հետ։

Տիկին Ելրնպի. — Գիւզի կեանքէն հաճոյք կը զգա՞ք, Օրիորդ Աւըրսի։

Էսրըր. — Խիստ շտա, իրաւ որ։

Տիկին Ելրնպի. — Լոնտանեան հացկերոյթի մը կարուք չէ՞ք զգար։

Էսրըր. — Անհաճոյ են ինձ Լոնտոնի հացկերոյթ-ները։

Տիկին Ելրնպի. — Ես կը պաշտեմ զանոնք, ինելացի մարդիկը երբեք մտիկ չեն ըներ, իրենք կը խօսին, և ապուշ մարդիկն ալ բառու չեն խօսիր։

Էսրըր. — Կարծեմ թէ ապուշ մարդիկը խիստ շտա կը խօսին։

Տիկին Ելրնպի. — Ո՞չ, ես բնաւ մտիկ չեմ ըներ։

Լօրս Ելինուօրփի. — Սիրեի աղաս, եթէ քեզի չի հաւնէի քեզի առաջարկած չպիտի ուլայի։ Բեզ շտա հաւնած ըլլալուս համար է որ կ'ուզիմ իմ մօսա ունենած քեզ։

(Եսթըր և Ճէրըլտ կը մեկնին)։

Ի՞նչ պատուական երիտասարդ մըն է Ճէրըլտ Ար-պըթնըթը։

Տիկին էլլենպի—Շատ աղնիւ է, չափազանց աղնիւ իրապէս։ Բայց չեմ կընար հանդուրժել ամերիկացի երիտասարդուհին։

Լօրս Իլինուօրփի.—Ի՞նչո՞ւ։

Տիկին էլլենպի.—Երէկ ինծի բարձր ձայնով մը ըստ որ տասն և ութը տարու էր։ Իրաւ որ անհանդուրժելի բան էր տափկա։

Լօրս Իլինուօրփի.—Պէտք չէ երբեք վասահիւ այն կնոջ որ իր բուն տարիքը կ'ըսէ մէկու մը։ Կին մը որ տափկա կը յայնէն, կրնայ տմէն բան ալ ըսել ուրիշն։

Տիկին էլլենպի.—Ատկէ գատ մաքրակրօն ալ է։

Լօրս Իլինուօրփի.—Ո՛չ, այդ աններելի է։ Հոգս չեմ ըներ երբ ագեղ կիները մաքրակրօն ըլլան։ Ատփկայ իրենց միակ արդարացումն է ագեղ ըլլալնուն համար։ Բայց տափկա բացարձակապէս գեղեցիկ է։ Անհունօրին կը հիանամ իր վրայ։ (Ուշադրութեամբ Տիկին էլլենպիին կը նայի)։

Տիկին էլլենպի.—Որքա՞ն դէշ մորդ մը ըլլալու էք դուք։

Լօրս Իլինուօրփի.—Ի՞նչ տեսակ մարդիկը դէշ կը կոչէք։

Տիկին էլլենպի.—Այն տեսակ մարդիկը որ անմռութիւնը կը հաւապնդին։

Լօրս Իլինուօրփի.—Եւ դէշ կի՞ն մը։

Տիկին էլլենպի.—Ա՛չ, այն տեսակ կինը որ մարդքնաւ չի ձանձրանար անկէ։

Լօրս Իլինուօրփի.—Եխստ էք...ձեր անձին հանդէպ։ Տիկին էլլենպի.—Սահմանեցէ՛ք մեր սեռը։

Լօրս Իլինուօրփի.—Սփինքսներ՝ տռանց դադանիքի։

Տիկին էլլենպի.—Մաքրակրօն կիներն ալ մէջը ըլլալով։

Լօրս Իլինուօրփի.—Դիտէք, ես չեմ հաւատար որ մաքրակրօն կիներ գոյութիւն ունենան։ Չեմ կարծեր որ աշխարհիս վրայ գտնուի կին մը՝ որ քիչ մը հպարտ զգայ ինքզինքը երբ մարդ մը իրեն հետ սիրաբանէ։ Այդ է որ կիները այնքան անդիմադրելիօրէն հրապուրիչ կ'ընծայէ։

Տիկին էլլենպի.—Կը կարծէք թէ աշխարհիս վրայ չի գտնուի կին մը որ պիտի արդիւնք երբ զինքը համարուրել ուզեն։

Լօրս Իլինուօրփի.—Շատ քիչեր։

Տիկին էլլենպի.—Օրիորդ Ուըլլալին չի պիտի թռողուր որ զինքը համբուրէիք։

Լօրս Իլինուօրփի.—Վատա՞ն էք։

Տիկին էլլենպի.—Շատ վատան։

Լօրս Իլինուօրփի.—Ի՞նչ կը կարծէք որ ընէր եթէ զինքը համբուրէի։

Տիկին էլլենպի.—Կամ պիտի ամուսնանար ձեզի հետ եւ կամ իր ձեռնոցով ձեր երեսին պիտի զարնէր։ Ի՞նչ պիտի բնէիք եթէ ձեր երեսին զարնէր։

Լօրս Իլինուօրփի.—Հաւանաբար իրեն սիրահարուէի։

Տիկին էլլենպի.—Ուրեմն բախտաւորութիւն մընէ որ չպիտի համբուրէք զինքը։

Լօրս Իլինուօրփի.—Ատիկա տաղաբէղկարդաւէ։

Տիկին էլլենպի.—Օդին մէջ արձակուած նետ մընէ է ան։

Լօրս Իլինուօրփի.—Զէ՞ք զիտեր թէ ինչ բան որ փորձել ուզենմ միշտ կը յաջողիմ։

Տիկին էլլենպի.—Շատ կը ցաւիմ այդպէս ըլլալը իմասնով։ Մենք կիներս տկարութիւնները կը պաշտենք։ Անոնք մեզի կը կրթնին։

Լօրս Իլինուօրփի .— Դուռք յաղթանակներուն կ'եր-
կրպագէք : Կը կ'առչիք անոնց :

Տիկին Ելրնապի .— Մենք իրենց համարձակութիւնը
քողարկող դափնիներն ենք :

Լօրս Իլինուօրփի .— Աւ անոնք միշտ պէտք ունին
ձեզի , յաղթանակի վայրկեանէն դուրս :

Տիկին Ելրնապի .— Այդ պահուն հետաքրքրական չեն
անոնք :

Լեյսի Իլինուօրփի .— Որքա՞ն փորձիչ էք : (Լոռւ-
թիւն մը) :

Տիկին Ելրնապի .— Լօրտ Իլինուօրփի , բան մը կայ
որուն համար միշտ պիտի հաւանիմ ձեզի :

Լօրս Իլինուօրփի .— Միայն մէկ բան : Եւ ես այն-
քան չատ գէշ յատկութիւններ ունիմ որ :

Տիկին Ելրնապի .— Ահ , այնքան հաւանինուամբ ըլլաք
անոնց մասին : Կրնաք կորսնցնելու զանոնք երբ ծերա-
նա՞ք :

Լօրս Իլինուօրփի .— Բնաւ միտք չունիմ ծերանա-
լու : Հոգին ծեր կը ծնի բայց կ'երտասարդանայ : Ա-
տիկա կեանքին կատակերգութիւնն է :

Տիկին Ելրնապի .— Աւ մարմինը երիտասարդ կը ծնի
և կը ծերանայ : Ատիկա կեանքին ողբերգութիւնն է :

Լօրս Իլինուօրփի .— Երբեմն ալ կատակերգութիւնն է
ան : Բայց ի՞նչ է խորհրդաւոր պատճառը որ միշտ ին-
ձի պիտի հասնիք :

Տիկին Ելրնապի .— Այն է թէ երբեք ինձի հետ սի-
բորանած չէք :

Լօրս Իլրնուօրփի .— Ատկից զատ ուրիշ բան ըրած
չունիմ երբեք :

Տիկին Ելրնապի .— Իրա՞ւ , Զեմ նշմարած ատիկայ :

Լօրս Իլինուօրփի .— Ի՞նչ բարեբախտութիւն , ան

կրնար երկուքիս համար ալ ողբերգութիւն մը ըլլաւ :
Տիկին Ելրնապի .— Մենք իւրաքանչիւրս վերապրուծ
պիտի ըլլային :

Լօրս Իլինուօրփի .— Արդի ժամանակները մարդ կըր-
նայ ամէն բան վերապրել , բաց ի մահէն և ամէն բան
տպրել , բաց ի բարի համբաւէն :

Տիկին Ելրնապի .— Բնաւ փորձած էք բարի համբաւ
մը ունենալ :

Լօրս Իլինուօրփի .— Ան շատ մը տաղտուկներէն մին-
է որուն ենթարկուած չեմ երբեք :

Տիկին Ելրնապի .— Կրնայ գալ ստկայն :

Լօրս Իլինուօրփի .— Ինչու կ'ապառնաք ինծի :

Տիկին Ելրնապի .— Պիտի ըսկոմ ձեզի երբ մաքրակը-
րոնը համրուրէք : (Սպասաւորը ներս կը մտնէ) :

Ֆրանսիս .— Թէյլ պատրաստ է Դեղին հիւրանո-
ցին մէջ , աէր իմ :

Լօրս Իլինուօրփի .— Բաէք իր ազնուափայլութիւնը
որ հիմա ներս կուգանք :

Ֆրանսիս .— Այս , աէր իմ : (Կը մեկնի) :

Լօրս Իլինուօրփի .— Ներս երթա՞նք թէյլ :

Տիկին Ելրնապի .— Այդպիսի պարզ հաճոյքնե-
րը :

Լօրս Իլինուօրփի .— Կը պաշտեմ պարզ հաճոյքնե-
րը : Անոնք վերջին ապաստանն են բարդ հաճոյքնե-
րուն : Բայց , եթէ կը փափոքիք հոս կենանք : Այս ,
հոս կենանք : Կեանքին զիրքը կ'սկսի մարդու մը և
կնոյ մը միասին պարտէզը զանուելով :

Տիկին Ելրնապի .— Կը վերջանայ յայտնութիւն նե-
րով :

Լօրս Իլինուօրփի .— Ինքինքնիդ պաշտելիօրէն կը
պաշտպանէք : Բայց կոճակը իր բանելիքէն ելած է
այլեւ :

Լօրս Իլինուօրին.— Դուք յաղթանակներուն կ'երագրպադէք : Կը կառչիք անոնց :

Տիկին Ելրնպի .—Մենք իրենց համարձակութիւնը քողարկող դափնիներն ենք :

Լօրս Իլինուօրին .—Ռւ անոնք միշտ պէտք ունին ձեզի , յաղթանակի վայրկեանէն դուրս :

Տիկին Ելրնպի :—Եյդ պահուն հետաքրքրական չեն անոնք :

Լեյսի Իլինուօրին .—Ուքան փորձիչ էք: (Լսութիւն մը) :

Տիկին Ելրնպի .— Լօրտ Իլինուօրին , բան մը կայ որուն համար միշտ պիտի հաւանիմ ձեզի :

Լօրս Իլինուօրին .—Միայն մէկ բան: Եւ ես այնքան շատ գէշ յատկութիւններ ունիմ որ:

Տիկին Ելրնպի .— Ոհ , այնքան հատակնոտ մի ըլլաք անոնց մասին: Կընաք կորսնցնելու զանոնք երբ ծերանա՞ք :

Լօրս Իլինուօրին .—Բնաւ միտք չունիմ ծերանաւու: Հոգին ծեր կը ծնի բայց կ'երտասարդանայ: Ատիկա կեանքին կատակերգութիւնն է :

Տիկին Ելրնպի .— Ռւ մարմինը երիտասարդ կը ծնի և կը ծերանայ: Ատիկա կեանքին ողբերգութիւնն է :

Լօրս Իլինուօրին .—Երբեմն ալ կատակերգութիւնն է ան Բայց ի՞նչ է խորհրդաւոր պատճառը որ միշտ ինծի պիտի հասնիք :

Տիկին Ելրնպի .— Եյն է թէ երբեք ինծի հետ սիրութիւնած չէք:

Լօրս Իլինուօրին .— Ատկից զատ ուրիշ բան ըրած չունիմ երբեք :

Տիկին Ելրնպի .— Իրա՞ւ: Չեմ նշմարած ատիկայ:

Լօրս Իլինուօրին .— Ի՞նչ բարեբախտութիւն , ան

կրնար երկուքիս համար ալ ողբերգութիւն մը ըլլալ Տիկին Ելրնպի .— Մենք իւրաքանչիւրս վերապրած պիտի ըլլային :

Լօրս Իլինուօրին .— Երդի ժամանակները մարդ կըրնայ ամէն բան վերապրել , բաց ի մահէն և ամէն բան ապրել , բաց ի բարի համբաւէն :

Տիկին Ելրնպի .— Բնաւ փորձա՞ծ էք բարի համբաւմը ունենալու:

Լօրս Իլինուօրին .— Ան շատ մը տաղտուկներէն մինչ է որուն ենթարկուած չեմ երբեք:

Տիկին Ելրնպի .— Կրնայ գալ սակայն :

Լօրս Իլինուօրին .— Ինչո՞ւ կ'ապառնաք ինծի:

Տիկին Ելրնպի .— Պիտի ըսեմ ձեզի երբ մաքրակըրօնը համբուրէք: (Սպասաւորը ներս կը մտնէ):

Ֆրանսիս .— Թէ յը պատրաստ է Դեղին հիւրանոցին մէջ , տէք իմ:

Լօրս Իլինուօրին .— Բաէք իր ազնուափայլութիւնը որ հիմա ներս կուգանք:

Ֆրանսիս .— Եյո , տէք իմ: (Կը մեկնի):

Լօրս Իլինուօրին .— Ներս երթա՞նք թէի:

Տիկին Ելրնպի .— Եյդպիսի պարզ հաճոյքները կը սիրէք:

Լօրս Իլինուօրին .— Կը պաշտեմ պարզ հաճոյքները: Անոնք վերջին ապաստանն են բարդ հաճոյքներուն: Բայց , եթէ կը փափաքիք հոս կենանք: Եյո , հոս կենանք: Կեանքին զիրքը կ'սկսի մարդու մը և կնոջ մը միասին պարտէզը զանուելովը :

Տիկին Ելրնպի .— Կը վերջանայ յայտնութիւն ներով:

Լօրս Իլինուօրին .— Ինքինքնիդ պաշտելիօրէն կը պաշտպանէք: Բայց կոճակիը իր բանելիքէն ելած է այլիս :

Տիկին Ելրնպի .— Տակաւին գիմակը ունիմ :
Լօրս Իլինուօրին .— Զեր աչքերը աւելի գեղեցիկ
կը ցուցնէ ան :

Տիկին Ելրնպի .— Ծնորհակալ և Եկէք :
Լօրս Իլինուօրին .— (Տիկին Արարթնըթին նամակը
սեղանին վրայ կը տեսնէ , և վեր վեցնելով պահարա-
նին կը նայի) : Ի՞նչ տարօրինակ ձեռագիր : Ինձ կը յի-
շեցնէ կնոջ մը գիրը որ տարիներ առաջ կը ճանչնայի :

Տիկին Ելրնպի .— Ո՞գ :

Լօրս Իլինուօրին .— Ո՞հ , ոչ մէկը , մասնաւոր մէկը
չէր : Կարեւորութենէ զուրկ կին մը : (Նամակը վար կը
նետէ , և Տիկին Ելրնպիին հետ պատշգամին սան-
դուխներէն վեր կ'ելեն : Իրարու կը ժպտին) :

Վերջ առաջին արարուածին

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Տեսարանը .— Հընսթընտրնի հիւրանոցը , ընթրիքէն
յետոյ , լոյսերը վառուած : Աջ կողմը դուռ մը , ձախ
կողմը դուռ մը :

(Տիկինները բաղմոցներու վրայ նստած) :

Տիկին Ելրնպի .— Ի՞նչ հանգստութիւն մըն է պահ
մը այրերէն հեռու գտնուիլը :

Լեյսի Սրբդիլիս .— Այս' , այրերը մեղ սոսկալի կը
հետապնդեն , այնպէս չէ :

Տիկին Ելրնպի .— Մեզ կը հետապնդեն : Երանի թէ
այնպէս ընէին :

Լեյսի Հընսրինը .— Ո՞հ , սիրելիս :

Տիկին Ելրնպի .— Տակաւին գիմակը ունիմ :

Լօրս Իլինուօրին .— Զեր աչքերը աւելի գեղեցիկ
կը ցուցնէ ան :

Տիկին Ելրնպի .— Ծնորհակալ և Եկէք :

Լօրս Իլինուօրին .— (Տիկին Արարթնըթին նամակը
սեղանին վրայ կը տեսնէ , և վեր վեցնելով պահարա-
նին կը նայի) :

Տիկին Ելրնպի .— Ի՞նչ տարօրինակ ձեռագիր : Ինձ կը յի-
շեցնէ կնոջ մը գիրը որ տարիներ առաջ կը ճանչնայի :

Տիկին Ելրնպի .— Ո՞գ :

Լօրս Իլինուօրին .— Ո՞հ , ոչ մէկը , մասնաւոր մէկը
չէր :

Տիկին Ելրնպիին հետ պատշգամին սան-
դուխներէն վեր կ'ելեն : Իրարու կը ժպտին) :

Վերջ առաջին արարուածին

Տիկին Ելրնպի .— Անախորժ բանը այն է թէ ,
թշուաները կարող են կատարելագիս հոջանիկ ըլլալ
առանց մեզի : Ատոր համար է որ , կը մտածեմ թէ ա-
մէն կնոջ պարտականութիւնն է երբեք զիրենք առան-
ձին չթողուլ , ոչ իսկ մէկ վարկեան , բացի ճաշէն
յնտոյ քիչ մը շունչ առնելու կարճ միջոցէ մը , առանց
սրուն կը կարծիմ թէ մենք խեղճ կիներս՝ շուքերու
պէս պիտի հալէինք բացարձակագէս :

(Սպասաւորները սուրճով ներս կը մանեն) :

Լեյսի Հընսրինը .— Զուրի պէս պիտի հալէինք ,
սիրելիս :

Տիկին Ելրնպի .— Այս , Լէյտի Հընսթէնտըն : Ո-
րովհետեւ այնքան գժուար է այրերը մեր ազդեցու-
թեան տակ պահելը : Անոնք կը ջանան շարունակ մեզ-
մէ խուսափիլ :

Լեյսի Սրբժիլս .— Ինձ այնպէս կը թուի թէ մենք
ենք որ շարունակ կ'ստիպուինք խուսափիլ անոնցմէ :
Երիկ մարդիկ այնքան շատ անսիրտ են , դիտեն ի-
րենց ոյժը և կը գործածեն զայն :

Լեյսի Գարօլին .— (Սուրճը կ'առնէ սպասաւորին
ձեռքէն) . այս որքան պարապ ու անխմաստ խօս-
քեր կ'ըլլան էրիկ մարդոց շուրջ : Մեր ընելիք միակ
բանը այն է թէ , էրիկ մարդիկը իրենց յատուկ տե-
ղը պէտք ենք պահել :

Տիկին Ելրնպի .— Բայց ո՞րն է իրենց յատուկ տե-
ղը . Լէյտի Գարօլին :

Լեյսի Գարօլին .— Իրենց կիներով զբաղիլ , Տիկին
Ելրնպի :

Տիկին Ելրնպի .— (Սուրճը կ'առնէ սպասաւորէն) :
Իրաւ : Եթէ ամուսնացած չեն :

Լեյսի Գարօլին .— Եթէ ամուսնացած չեն , պէտք

է որ կին մը փնտոելու ելլեն։ Շատ գայթակղեցուցիչ բան է որ այսքան մեծ թուով ամուրիներ զտնուին ընկերութեան մէջ։ Պէտք էր որ օրէնք մը հաստատուէր, զիրէնք պարտագրելու համար որ տասներկու ամսուան մէջ ամուսնանային ամէնքն ալ։

Լեյսի Սրբդիլ։— (Սուրճը կը միրժէ)։ Բայց եթէ կը սիրեն մէկը, որ թերեւ կապուած է ուրիշի մը։

Լեյսի Գարօլին։—Այդ պարագային, Լեյտի Սթըդու Փելտ, զտնոնք մէկ շաբթուան մէջ պէտք է ամուսնացընել պարզ և պատուաւոր աղջկան մը հետ, իրենց սորվեցնելու համար թէ, ուրիշին ստացուածքին պէտք չէ որ աչք անկին։

Տիկին Ելրնպի։—Կարծեմ թէ պէտք չէ որ ըսուի մեզի համար թէ ուրիշին ստացուածքն ենք։ Բոլոր այլ հրեն ալ կնոջ ունեցած ստացուածքին հետ կ'ամուսնուան։ Այդ է միակ ու ճշմարիտ սահմանումը ամուսնացած կունանց ստացուածքին։ Իսկ մենք և ոչ մէկուն կը պատկանինք։

Լեյսի Սրբդիլ։—Ո՞հ, որքան շատ ուրախ եմ որ այդպէս կ'ըսէք։

Լեյսի Հընսրէնըն։— Բայց կը կարծեմ, սիրելի Գարօլին, թէ օրէնողրութիւնը պիտի կարենար բարեփոխել իրերը ու է կերպով։ Այնպէս կ'ըսեն թէ, հիմակուան տանիները բոլոր ամուսնացած այրերը ամուրիւներու պէս կ'առարին, և բոլըր ամուրիւները ամուսնացած մարդոց պէս։

Տիկին Ելրնպի։—Անշուշտ ես երկուքն ալ իրաբմէ չեմ կրնար զտնագանել երբեք։

Լեյսի Սրբդիլ։—Ո՞հ, կարծեմ մարդ անմիջապէս կրնայ հասկնալ թէ այր մը տան հոգեր ունի՞ իր կեանքին մէջ, թէ ոչ։ Ես նշմարած եմ խիստ տխուր արտա-

յայտութիւն մը շատ մը ամուսնացած մարդոց աչքերուն մէջ։

Տիկին Ելրնպի։—Ոհ, բոլոր իմ նշմարածս այն է թէ սարսափելիօրէն ձանձրացուցիչ կ'ըլլան անոնք, երբ բարի ամուսնուներէն, և աններելիօրէն յաւակնուտ երբ այնպէս չեն։

Լեյսի Հընսրէնըն։—Դաւ, կարծեմ ամուսնոյ տիպարը բոլորովին փոխուած է իմ երիտասարդութենէս ի վեր, բայց ստիպուած եմ ըսել թէ խեղճ սիրելի Հընսթէնտընը ամէնէն սքանչելի արարածն էր, և ոսկի սիրտ մը ունէր։

Տիկին Ելրնպի։—Ոհ, իմ ամուսինս տեսակ մը խոստմագերի կը նմանի։ Ալ յոզնած եմ զինքը տեսնալէ։

Լեյսի Գարօլին։—Բայց երբեմն երբեմն զինքը կը նորողէք, այնպէս չէ։

Տիկին Ելրնպի։—Ոհ, ոչ, Լեյտի Գարօլին։ Մէկ ամուսին ունեցած եմ տակաւին։ Կարծեմ զիս կատարեալ ամաթէօս մը կը նկատէք։

Լեյսի Գարօլին։—Կեանքի վրայ ձեր ունեցած այդ տեսութիւններովը՝ չեմ կրնար հաւատալ որ ամուսնացած ըլլաք։

Տիկին Ելրնպի։—Ես ալ այնպէս։

Լեյսի Հընսրէնըն։— Սիրելի զաւակս, ես այնպէս կը հաւատամ թէ դուն շտո երջանիկ ես քու ամուսնական կեանքիդ մէջ։ Բայց կը սիրես ծածկել քու երջանկութիւնդ ուրիշներէն։

Տիկին Ելրնպի։—Ձեզ կը վստահեցնեմ թէ ոսսկալի խարուած եմ էրնըսդը առնելով։

Լեյսի Հընսրէնըն։—Ոհ, չեմ կարծեր սիրելիս և իր մայրը շատ լաւ կը ճանչնայի։ Ան Սթըրաթը

ններէն էր, Գարօլին, Լորտ Վրոլէնարի աղջկներէն
մին:

Լեյսի Գարօլին.—Վիքթօրիա՞ Սթրէդընը: Զինքը
կատարելապէս կը յիշեմ: Խենդուկ խարտիչուհի մըն
էր, առանց թուշի:

Տիկին Ելբնպի.—Ահ, Էրնըսթը թուշ ունի: Շատ
զօրաւոր կզակ մը ունի, քառակուսի կզակ մը: Էրնէս-
տին կզակը չտփաղանց քառակուսի է:

Լեյսի Սրբֆիլս.—Բայց կը կարծէ՞ք թէ էրիկ մար-
դու մը թուշը կրնայ շատ քառակուսի ըլլալ: Կարծեմ
թէ էրիկ մարդ մը պէտք է որ շատ, շատ զօրաւոր
երեւոյթ մը ունենայ, և թէ իր կզակն ալ պէտք է
որ խիստ շատ քառակուսի ըլլայ:

Տիկին Ելբնպի.—Ուրեմն պէտք է որ Էրնէսթը
անպայման տեսնէք, 'Լէյտի Սթրդֆիլտ: Միայն թէ
ուղիղ կ'ըլլայ ձեղի առաջուց ըսել թէ, բնաւ խօսակցու-
թիւն չունի ան:

Լեյսի Սրբֆիլս.—Կը պաշտեմ լռակեաց էրիկ մար-
դիկը:

Տիկին Ելբնպի.—Ոհ, Էրնըսթը լռակեաց չէ: Ան-
դադար կը խօսի: Բայց խօսակցիլ չզիտեր: Ինչ բանի
վրայ կը խօսի չեմ գիտեր: Տարիներէ ի վեր զինքը
մտիկ ըրած չեմ:

Լեյսի Սրբֆիլս:—Իրեն երբեք չէ՞ք ներած ուրեմն:
Որքա՞ն տիսուր բան է այդ: Բայց ամբողջ կեանքը
շատ, շատ տիսուր է, այնպէս չէ:

Տիկին Ելբնպի.—Կեա՞նքը, Լէյտի Սթրդֆիլտ, պար-
զապէս տասքան քառակուսի մըն է սքանչելի վայր-
կեաններէ կազմուած:

Լեյսի Սրբֆիլս,—Այո՛, երջանիկ վայրկեաններ
կան անշուշտ: Բայց պարոն Ելբնպին շա՞տ շա՞տ անի-

թաւ բան մը ըրած է: Զեզի դէմ բարկացած և անազնիւ
ու անարդար բա՞ն մը ըսած է:

Տիկին Ելբնպի.—Ոհ, սիրելիս, ոչ: Էրնըսթը ան-
փոփոխելիօրէն հանդարտ է, և այդ բանը իմ ջիղերուա
դպչող պատճառներէն մին է: Ոչինչ այնքան կը գրգռէ,
որքան հանդարտութիւնը: Իրապէս անրաւական բան
մը կայ շատ մը արդիական մարդոց հանդարտ բընա-
ւորութեանը մէջ: Կը զարմանամ թէ մենք կիներս ինչ-
պէ՞ս կրնանք հանդուրժել:

Լեյսի Սրբդֆիլս.—Այո, այրերուն հանդարտ բը-
նաւորութիւնը կը ցուցնէ թէ մեզի չափ զգույնն չեն,
ոչ ալ շատ նուրբ: Ատիկա մեծ խոչընդուն մըն է յա-
ճախ այր ու կնոջ միջն, այդպէս չէ՞ Բայց ես շատ
պիտի ուղեկի գիտնալ թէ պարոն Ելբնպին գործած
յանցանքը ի՞նչ էր:

Տիկին Ելբնպի.—Լա՛ւ, պիտի ըսեմ ձեզի: Կթէ
Ոջօրէն խոստանաք որ ամէնուն ալ պիտի պատմէք:

Լեյսի Սրբդֆիլս.—Շատ չնորհակալ եմ: Ուշադիր
պիտի ըլլամ զայն ուրիշներուն կրնելու մասին:

Տիկին Ելբնպի.—Երբ Էրնըսթ և ես նշանուած
էինք՝ ան ծունկի եկած ինծի երգուընցաւ թէ ամբողջ
եր կեանքի ընթացքին, և ոչ մէկը սիրած էր: Շատ
երիտասարդ էի այն տան, պէտք չկայ ըսելու որ
չհաւտացի իրեն: Դժբախտաբար ուեէ հարցուվորձ չըրի
մինչեւ որ չորս հինգ ամսուան ամուսնացած էի: Այն ա-
տեն միայն երեւան հանեցի թէ ինչ որ ըսած էր ինծի
կատարելապէս ծշմարիտ էր: Եւ այդ բանը՝ էրիկ մարդ
մը հետաքրքրական չընծայեր, բացարձակալէս:

Լեյսի Հընսրէնըըն:—Ոհ, սիրելիս:

Տիկին Ելբնպի.—Էրիկ մարդիկ միշտ կ'ուզեն
կնոջ մը առաջին սէրը ըլլալ: Ատիկա իրենց ձղճիմ

ունայնամտութիւնն է։ Մենք կիներս աւելի սուր բըսնազումով կ'ըմբռնենք իրերը։ Մեր ուզած բանը՝ էրիկ մարդու մը վերջին ոօմանսը ըլլալն է։

Լեյսի Սրբնֆիլս. — Կը հասկնամ թէ ինչ ըսի կ'ուզէք։ Շատ, շատ գեղեցիկ բան է ան։

Լեյսի Հընարենը. — Սիրելի զաւակս, ըսի չես ուզեր անշուշտ թէ քու ամուսնոյդ չպիտի հետեւիս, քենէ զատ ուրիշ մէկը սիրած չըլլալուն համար։ Այս պիտի բան լսած էիր Գարօլին։ Շատ կը զարմանամ։

Լեյսի Գարօլին. — Օհ, ձեյն, կիները այժմ այնքան շատ զարգացան որ, և ոչ մէկ բան պէտք է զարմանք պատճառէ մեզի, բացի երջանիկ ամուսնութիւններէն։ Անոնք աչքառու կիրազվ հազուաղէպ կ'ըլլան հետզհատէ։

Տիկին Ելրնպի. — Ո՞հ, անոնց տաենը այլես անցած է։

Լեյսի Սրբնֆիլս. — Բացի միջակ դասակարգին մէջ, այնպէս կ'ըսին։

Տիկին Ելրնպի. — Ի՞նչ միջակ բան, ի՞նոնց դասակարգին նման։

Լեյսի Սրբնֆիլս. — Այս այնպէս չէ — ձիշտ իւրենց պէս։

Լեյսի Գարօլին. — Լեյտի Սթըդֆիլտ, եթէ ձիշտ է, ինչ որ կ'ըսէք միջին դասակարգին համար՝ ան շատ նպաստաւոր է իրենց։ Շատ ցաւալի է որ մեր դասակարգին մէջ կինը այնքան անփոփոխելիօրէն թեւթեւոլիկ է, երեւցածին նայելով անոնք այնպէս կը մտածեն թէ այնպէս ըլլալը աւելի ձիշտ բան մըն է։ Ես ատոր կը վերագրեմ մեզի ծանօթ շատ մը ամուսնութիւններու տպերջանկութիւնը։

Տիկին Ելրնպի. — Գիտէ՞ք, Լեյտի Գարօլին, ես

չեմ կարծեր որ կնոջ թեթեսօլիկութիւնը ատոր հետ ուեէ կապ ունենայ։ Հիմակուան ամուսնութիւններէն շատերը կործանած են ամուսնոյն ողջախոհ ըլլալէն քան թէ ուրիշ ուեէ բանէ։ Ինչպէս կարելի է ակնկալել թէ կին մը կարենայ երջանիկ ըլլալ մարդու մը հետ որ կը յամառի կնոջմէն պահանջել որ կատարելապէս տրամաբանող արարած մըը լլայ ան։

Լեյսի Հընարենը. — Ո՞հ, սիրելին։

Տիկին Ելրնպի. — Սիրիոնաւոր տարիներէ ի վեր աղքատ, ձախաւեր, վստահելի և պիտանի էրիկ մարդիկը միայն արամաբանող եղած են։ Ան չի կրնար ուրիշ կերպ ըլլալ։ Իր սեռին մէջն է ան։ Կնոջ պատմութիւնը շատ տարբեր է սակայն։ Մենք միտքանաստեղծական բողոքողները եղած ենք, ողջախոհութեան գոյութեանը դէմ իսկ։ Մենք առաջուընէ տեսած ենք անոր վասանգները։

Լեյսի Սրբնֆիլս. — Այո՛, ամուսիններու ողջախոհութիւնը անշուշտ խիստ շատ գժուար է հանդուրժել։ Ըսէ՛ք ինձի ձեր անձնական կարծիքը իտէալ ամուսնոյն մասին։ Կարծեմ խիստ շատ օգտակար պիտի ըլլայ ան ինձի։

Տիկին Ելրնպի. — Իտէալ ամուսինը։ Ատանկ բան չի կրնար ըլլալ։ Այդ բառին գոյութիւնն սխալ է։

Լեյսի Սրբնֆիլս. — Իտէալ մարդը, ուրեմն մեզի հետ իր յարաբերութեանցը մէջ։

Լեյսի Գարօլին. — Հաւանաբար չափազանց իրապաշտ պէտք է ըլլայ ան։

Տիկին Ելրնպի. — Իտէալ մարդը։ Ոհ, իտէալ մարդը պէտք է խօսի մեզ հետ իր թէ մենք չաստուածունեներ ըլլայինք, և վարուի մեզի հետ իր թէ տղաներ ըլլայինք։ Ան պէտք է մերժէ մեր բոլոր ոչինչ փա-

փաքները։ Ան պէտք է հարցնէ մեր բոլոր ոչինչ փափաքները։ Ան պէտք է մեզ քաջալերէ որ քմահաճոյքներ ունենանք, բայց արգիլէ մեզի պատղամներ ունենալէ։ Ան պէտք է միշտ իր խորհածէն շատ աւելին ըսէ, և միշտ իր ըսածէն շատ աւելին խորհի։

Լեյսի Հընսրենտրն։—Բայց երկուքը մէկ ի՞նչպէս կրնայ ընել, սիրելիս։

Տիկին Ելրնալի։—Ան պէտք չէ որ ուրիշ զեղեցիկ կիներու ետեւէն վազէ սանձարձակ։ Այդ պիտի ցուռ ցընէ թէ ճաշակ չունի, կամ կարծել պիտի տայ թէ շատ ճաշակ ունի ան։ Ո՛չ, այլ պէտք է որ ամէսնուն հետ ալ համակրութեամբ վարուի, բայց ճեւով մը հասկցնէ մեզի թէ անոնք զինքը չեն շահազըրգուեր։

Լեյսի Սբրդֆիլս։—Այո՛, ուրիշ կիներու մասին այդպէս խօսուիլը իմանալը՝ կանանց խիստ շատ հաճոյք կը պատճառէ։

Տիկին Ելրնալի։—Եթէ իրեն հարցում մը ընենք ուրիշ կնոջ մը մասին՝ ան պէտք է որ միայն մեր վրայ խօսի։ Պէտք է որ անգագար զմեզ գովէ այն յատկութիւններուն համար որ ինք գիտէ թէ չունինք։ Բայց պէտք է որ շատ անշառօրէն գանգատի չունենանալնուս համար այն առաքինութիւնները՝ որ երբեք պէտք չէ հաւատայ որ օտտակար բաները գործածել գիտենք։ Այդ աններելի պիտի ըլլար։ Բայց պէտք է մեզ ողողէ բոլոր այն բաներով որ չենք ուզեր։

Լեյսի Գարօլին։—Որքան որ կրնամ հասկնալ, ան մեր հաշիւները վճարելէն և գովեստներ չուզելէն զատ ուրիշ բան պէտք չէ ընէ։

Տիկին Ելրնալի։—Ան պէտք է որ միշտ մեզի հետ եր վերաբերմունքովը կասկածելի երեւի ընկերութեան

մէջ, և կատարեալ յարգանքով վարուի հետերնիս երբ առանձին ըլլանք։ Եւ միեւնոյն միջոցին միշտ պատրաստ պէտք է ըլլայ ան՝ իրապէս սոսկալի վէճի մը բռնուելու հետերնիս, երբ որ կռուիլ ուզենք։ Բայց վայրկենապէս թշուառ պէտք է զգայ ինքզինքը, բացարձակապէս թշուառ, և մեզ ողողէ արդարացի գանգատներով քսան վայրկեանը չի լրացած, և պէտք է կատարելապէս բռնու ըլլայ կէս ժամ վերջ, և ութնին քառորդ մնացած՝ որ ընթրիքի համար մեր հագուելու միջոցն է՝ մեզ լրէ առ յաւէտ։

Եւ երբ, քանի մը օր ետքը, զինքը վերջին անգամ ըլլալով տեսնել ուզենք, և ան մերմէ ետ առնել այն պղտիկ առարկաները որ մեզի նուիրուծ է, և կ'երդնու որ այլևս հազորգակցութիւն չպիտի ունենայ մեզի հետ, և խենթ նամակներ չպիտի գրէ՝ բայց բոլոր ասոնք ըսելէ վերջ պէտք է որ կատարելապէս սրտաբեկ ըլլայ և ամբողջ օրը հեռագրէ, և կէս ժամը անգամը պղտիկ երկտողներ զրկէ մասնաւոր թըզթատարով մը, և քլիւով առանձին ճաշէ, այնպէս որ ամէն մարդ տեսնէ իր դժբախտութիւնը։ Եւ ամբողջ սարսափելի շտրաթ մը անցնելէն ետքը՝ որու միջոցին ամէն տեղ կ'երթաս, ցուցնելու համար թէ որքան առանձին ես, — բաժանման վերջին տեսակցութիւն մըն ալ պէտք է տալ իրեն, իրիկուն մը, և եթէ իր վարմունքը շատ անթերի ըլլայ և դուն ալ հետո խստօրէն վարուելով գիտել կուտաս թէ ինքը բոլորովին անիրաւ էր, և երբ այդպէս ըլլալը կը խոստավանի՝ այն տաեն կնոջ մը պարտականութիւնը կ'ըլլայ ներելը։ Եւ ասիկա կարելի է միշտ կրկնել, սկիզբէն մինչև վերջը, զանազան ձևերու տակ։

Լեյսի Հընսրեն։—Որքան խելացի ես, սիրեւ

Միս : Բայց քու ըստածներուդ և ոչ մէկ բառը լլջօրէն
կ'ըսես :

Լեյսի Սրբդֆիլս.—Շատ շնորհակալ եմ: Այդ շատ
ու շատ հիանալի էր: Պիտի ջանամ ամէնքն ալ միտքս
պահել: Այնքան շատ մանրամասնութիւններ կան որ,
խիստ շատ կարեւոր են:

Լեյսի Պարօլին.—Բայց մեզի չըսիք տակաւին թէ
իտէալ մարդուն փոխարինութիւնը ի՞նչ պիտի ըլլայ:

Տիկին Էլլնապի.—Իր փոխարինութիւնը, անհուն
ակնկալութիւններ: Ատիկայ բաւական է իրեն:

Լեյսի Սրբդֆիլս.—Բայց էրիկ մարդիկը այնքան
սոսկալիօրէն պահանջնոտ կ'ըլլան, այնպէս չէ միթէ:

Տիկին Էլլնապի.—Ատիկայ կարեւորութիւն չունի:
Երբեք պէտք չէ զիջում ընել:

Լեյսի Սրբդֆիլս.—Ոչ իսկ իտէալ մարդուն:

Տիկին Էլլնապի.—Անո՞ր, անշուշտ ոչ: Բացի այն
պարագային որ կ'ուզես անկէց ձանձրանալ:

Լեյսի Սրբդֆիլս.—Ո՞հ... այս, կը հասկնամ: Խիստ
շատ օգտակար է այս: Կը կարծէք, Տիկին ելլնալի,
թէ իտէալ մարդու մը պիտի հանդիպիմ երբեք: Կամ
թէ մէկ հատէն աւելին գոյութիւն չունի:

Տիկին Էլլնապի.—Լոնտոնի մէջ միայն չորս հատ
կան, Լէյտի Սթըրգֆիլտ:

Լեյսի Հրնարկներն.—Ոհ, սիրելիս...

Տիկին Էլլնապի.—(Անոր մօտ երթալով) ի՞նչ պա-
տահեցաւ, ըսէք ինձի:

Լեյսի Հրնարկներն (ցած ձայնով).—Ես կատարե-
լապէս մոռցած էի թէ Ամերիկացի օրիորդը սենեկակին
մէջ կը գտնուէր ամբողջ տտենք: Կը վախնամ որ այս
սրամիս խօսակցութեան մէկ մասը կրնայ զինքը
գայթակեցուցած ըլլալ:

Տիկին Էլլնապի.—Ոհ, անիկայ իրեն շատ օգտակար
պիտի ըլլայ:

Լեյսի Հրնարկներն.—Յուսանք թէ շատ բան հաս-
կըցած չըլլայ: Կարծեմ լաւ պիտի ըլլայ եթէ քովը
երթամ և խօսիմ հետք: (Ոտքի կ'ելլէ և եսթըր Ուըրա-
լիին քով կ'երթայ): Ուըրեմն, սիրելի օրիորդ Ուըրսլի
(նստելով իր քովը): Որքան հանդարտ էիք ամբողջ
ատենը ձեր այս սիրուն անկիւնը նստած: Կարծեմ
գի՞րք մը կը կարդայիք: Այնքան շատ գիրքեր կան հոս-
գրադարանին մէջ:

Էսրըր.—Ոչ, խօսակցութիւնը մտիկ կ'ընէի:

Լեյսի Հրնարկներն.—Գիտէք որ սիրելիս, պէտք չէ
հաւատալ բոլոր ըսածներուն:

Էսրըր.—Եւ ոչ մէկուն հաւատացի ես:

Լեյսի Հրնարկներն.—Շատ իրաւունք ունիք սիրե-
լիս:

Էսրըր (շարունակելով).—Կարող չէի հաւատալ թէ
ուեէ կին կրնար ունենալ այնպիսի տեսութիւններ
կեանքի մասին, ինչ որ այս գիշեր ունեցայ ձեր մէկ
քանի հիւրերէն: (Անհաճոյ լուսութիւն մը):

Լեյսի Հրնարկներն.—Իմացած եմ թէ շատ հա-
ճելի ընկերութիւն մը ունիք Ամերիկացի մէջ: Տեղ
տեղ ճիշտ մերինին նման գրեց որդիս:

Էսրըր.—Ամերիկացի մէջ ալ ուրիշ տեղերու պէս
անջատ խումբեր կան, Լէյտի Հրնաթէնտըն: Բայց բուն
իսկ Ամերիկան ընտրեալ ընկերութիւնը կը բաղկա-
նայ մեր ունեցած բոլոր բարի կիներէն և բարի այ-
րերէն միայն:

Լեյսի Հրնարկներն.—Ի՞նչ զգայուն դրութիւն և
կը համարձակիմ ըսել շատ ալ հաճելի: Կը վախ-
նամ որ Անգլիոյ մէջ շատ մը կեղծ գասակարգային

Խոչընդունելու ունինք : Պէտք եղածին չափ շփման մէջ չենք միջին և վար դասակարգին հետ :

Էսքըր .—Ամերիկայի մէջ վար դասակարգ չունինք մենք :

Լէյսի Հընսըրէնտըն .— Իրա՞ւ , ի՞նչ տարօրինակ կարդու սարք :

Տիկին Ելըրպի .— Այդ սոսկալի աղջիկը ի՞նչի վրայ կը խօսի :

Լէյսի Սըրդթիլ .— Յաւալիօրէն պարզ է , այնու պէս չէ :

Լէյսի Գարօլին .— Կ'ըսեն թէ Օրիորդ Ռւըրսլի , Ամերիկայի մէջ շատ մը բաներ չունիք : Կ'ըսեն թէ աւերակներ չկան հոն , ոչ ալ հետաքրքրաշարժ բաներ :

Տիկին Ելըրպի .— (Լէյտի Սթըդֆիլտին) : Ի՞նչ պարագ խօսք : Անոնք իրենց մայրերը ունին և իրենց շարժուձեւերը :

Էսքըր .— Անդլիական ազնուականութիւնն է որ հետաքրքրաշարժ բաներուն տեղը կը բռնէ , Լէյտի Գարօլին : Ամէն ամսու կանոնաւորաբար լեցուն նաւերով մեղի կը զրկեն անոնցմէ , և անոնք ցամաք ելլալնուն յաջորդ օրն իսկ մեր ձեռքը կը խնդրին ։ Գալով աւերակներուն , մենք կը ջանանք չինել այնպիսի շէնքեր որ տղիւսէ և քարէ աւելի երկար տաեն զիման : (Վեր կ'իլէ իր հովահարը առնելու համար սեղանին վրայէն) :

Լէյսի Հընսըրէնտըն .— Ո՞րն էր ան , սիրելիս : Ոչ , այո՛ , երկաթի ցուցահանդէսը , այնպէս չէ՞ . այն տեսլը տարօրինակ անուն մը ունի :

Էսքըր .— (Սեղանին քով կեցած) : Մենք կը ջանանք հիմնել կհանքը , Լէյտի Հընսթէնաըն , լաւագոյն

այստեղ գոյութիւն ունեցող կեանքէն , աւելի անկեղծ աւելի անբիծ հիմերու վրայ հաստատուած : Ասիկա անտարակոյս զարմանալի կը թուի ամէնուդ ալ : Զարա մանքէ զատ ուրիշ բան չի կրնար առթել որ :

Անդլիոյ մէջ դուք հարուստներդ չէք գէտեր թէ ինչպէս ապրիլ պէտք է . ի՞նչպէս կրնաք գիտնալ : Կ'արգիլէք աղնիւ և բարի մարդոց մուտքը ձեր լնկերութեան մէջ : կը ծաղրէք պարզ և անբիծ մարգիկը : Ամէնքդ ալ ուրիշին աշխատութեամբը ապրելնուդ համար՝ կը հեգնէք անձնագոհութիւնը : Եւ եթէ աղքատաներուն երեսին հաց կը նետէք՝ պարզապէս զանոնք քիչ մը ատեն եւս լուցնելու համար է : Հակառակ բոլոր ձեր ճոխութեան և գեղարուեստին՝ չէք գիտեր ինչպէս ապրիլ , ոչ իսկ այդ բանը գիտէք : կը սիրէք միայն այն գեղեցկութիւնները զոր կրնաք տեսնել , չօշափել և բռնել . գեղեցկութիւնը որ կրնաք ոչնչացնել , և զոր կ'ոչնչացնէք ալ , բայց գաղափար չունիք կեանքի անտեսանելի գեղեցկութեան վրայ բան մը չէք գիտեր : Դուք կորուսած էք կեանքին գաղտնիքը : Ոչ , ձեր անդլիական ընկերութիւնը ինձ թեթեւ կը թուի , անձնասէր ու ապուշ : Ան իր աչքերը կուրցուցած և ականջները խուլացուցած է Ան բորսաի կը նմանի որ ծիրանի հագուած կը պառկի : Ան կը նմանի մեռեալ բանի մը որ նստած է ոսկիով պատած : Ամբողջութեամբը սիսալ է ան , սիսալ ամբողջ :

Լէյսի Սըրդթիլ .— Չե՞ կարծեր թէ մարդ պէտք է գիտնայ այդ բաները : Յատ աղուոր չեն անոնք , այնպէս չէ :

Լէյսի Հընսըրէնտըն .— Սիրելի Օրիորդ Ռւըրսլի , ես կարծէի թէ Անդլիական ընկերութեան շատ կը հաւնէիք : Եւ անոր մէջ այնքան յաջողութիւն գտած

էք։ Այնքան հաւանուած էրք լաւագոյն մարդոցմէն։ Բոլորովին մոռցայ թէ Լօրտ Հէնրի Ուէսթընը ինչ ըսաւ ձեր մասին, բայց իր ըսածը շատ գնահատական էր, և գիտէք թէ ան որպիսի հեղինակութիւն մըն է գեղեց կութիւն գնահատելու մասին։

ԷՍԹԸՐ. — Լօրտ Հէնրի Ուէսթընը։ Կը յիշեմ զի՞նքը, Լէյտի Հընսթէնտըն։ Մարդ մը որ զզուելի ժպիտ մը ունի և գարշելի անցեալ մը Ան ամէն տեղ կը փնտըռուի։ Եւ ոչ մէկ հացկերոյթ կատարեալ կը նկատուի առանց իր ներկայութեանը։ Խոկ անո՞նք զոր ինքը կործանած է։ Անոնք ընկերութենէ վատրուածներ են։ Անանուն են անոնք։ Եթէ փողոցը հանդիպիս անոնց, զլուխըդ անդին կը դարձնես։ Առարկութիւն չեմ ըներ անշուշտ անոնց պատժուած ըլլալուն մասին։ Թող պատժուին բոլոր այն կիները որ մեղանչած են։

(Տիկին Արպլթնըթ պատշգմէն ներս կը մտնէ վերարկուի մը մէջ պլլուած և զլխուն վրայ ալ մանեակէ շղարշ մը առած։ Վերջին բառերը կը լսէ և կը ցնցուի։)

Լէյտի Հընսրենըն։ — Ո՞հ, սիրելի օրիորդս։

Էսքըր. — Արդար է որ անոնք պատժուին, բայց պէտք չէ որ թօղուք մի միայն անոնք տառապին, Եթէ այր մը եւ կին մը միասին մեղանչած են, թող երկուքն ալ անապատը երթան, հոն միայն զիրար սիրելու կամ տառելու համար։ Բայց թող երկուքն ալ մատնանշուին։ Խւրաքանչիւրին վրայ ալ նշան մը դրէք եթէ այնպէս կը փափաքիք, բայց մի պատժէք միայն մին և միւսը ազատ թողուք։ Էրիկ մարդոց համար մէկ օրէնք և կանանց համար տարբեր օրէնք մը մի ունենաք։ Անիւրաւ էք կամանց հանդէպ Անգլիոյ մէջ։ Եւ մինչեւ որ ըմբռնէք թէ ինչ բան որ ամօթ մըն է կնոջ համար՝

անպատութիւն մըն է։ Էրիկ մարդուն համար ալ՝ միշտ անիրաւ պիտի ըլլաք, արգարութիւնը և անարդարութիւնը տարտամօրէն պիտի տեսնէք, և կամ բնաւ չի պիտի տեսնէք, և կամ եթէ տեսնէք ալ, չը պիտի ուզէք նկատի առնել։

Լէյտի Գարոլին. — Սիրելի օրիորդ Ուըրսլի, մինչ ուաքի վրայ էք կրնա՞մ խնդրել ձենէ որ իմ բուրդուինծի տալ հաճիք, ճիշդ ձեր ետին կը դըտնուի։ Շնորհակալ եմ։

Լէյտի Հընսրենըն։ — Սիրելի Տիկին Արպլթնըդ։ Որքա՞ն գոն եմ որ եկաք։ Բայց իմաց չի տուին ձեր գալուսար։

Տիկին Արպլթնըդ. — Ոհ, ուղղակի պատշգամէն ներս եկայ, և չյարդարուած վիճակի մէջ, չըսիք ինծի որ ընդունելութիւն մը ունէիք, Լէյտի Հընսթէնտըն։

Լէյտի Հընսրենըն։ — Բնդունելութիւն մը չէ։ Միայն մի քանի հիւրեր որ հոս մեր տունը կը կւնան և զորս պէտք է դուք ալ ճանչնաք։ Թոյլ տուէք սր օգնեմ ձեզի, (կը ջանայօգնել իրին որ վերարկուն հանէ, ու զանգակը կը հնչեցնէ)։

Գարօլին, Տիկին Արպլթնըդն է, իմ առենէն անուշ բարեկամուհիներէս մինու Լէյտի Գարօլին Բօնթֆրէքդ, Լէյտի Սթրդֆիլտ, Տիկին էլէնափի, և Ամերիկացի երիտասարդ բարեկամուհիս, Օրիորդ Ուըրսլի, որ ճիշտ հիմայ ամէնուս կ'ըսէր թէ որքան գէշ ենք։

Էսքըր. — Կը վախնամ թէ կը մտածէք որ շատ ուժգնօրէն խօսեցայ, Լէյտի Հընսթէնտըն։ Բայց Անգլիոյ մէջ մի քանի բաներ կան . . .

Լէյտի Հընսրենըն։ — Սիրելի Օրիորդս, կը համար ձակիմ ըսել թէ ձեր լսած բաներուն մէջ շատ ճշմարտութիւն կար, և թէ շատ գեղեցիկ կ'երեւնայիք խօսած

ատենակող, որ շատ աւելի կարեւոր էր պիտի ըսէր մեղի Հօրտ իլինուորթհ։ Միակ կէտը որուն մէջ կը կարծեմ թէ քիչ մը խիստ էիք՝ Լէյտի Գարօլինի եղբօր՝ խեղճ Հօրտ Հէնրիին մասին էր։ Ան այնքան լաւ ընկերութիւն մը ունի։

(Սպասաւորը ներս կը մտնէ։)

(Տիկին Արպօթնըդի բաները առէք.)

(Սպասաւորը վերաբկուն առած կը քաշուի։

Էսրըր. — Լէյտի Գարօլին, մտքէս չանցաւ թէ ձեր եղբայրն էր։ Կը ցաւիմ ձեզի վշտացուցած ըլլալուս համար... ես...։

Լէյտի Գարօլին. — Սիրելի օրիորդ Ուըրսլիս ձեր պղտիկ speech ին միակ մասը որուն բոլորովին համակարծիք եղայ, իմ եղբօրս մասին խօսուածն էր։ Իրեն համար ինչ որ ալ ըսէիք շատ չէր կրնար ըլլալ։ Ես Հէնրին վատահամբաւ մէկը կը նկատեմ, բացարձառ կապէս վատահամբաւ բայց ստիպուած եմ հաստատելու, ինչպէս որ գուն ալ կ'ակնարկէիր ձէյն, թէ գերազանցօրէն ընկերական է, և լոնտոնի ամէնէն լաւ խոհարաբներէն մին վարձած է, լաւ ճաշէ մը ետք մարդ կրնայ ներել մէկու մը, ոոյն իսկ իր ազգականին։

Լէյտի Հընսրենըրն. — (Օրիորդ Ուըրսլին մօտենալով)։

Եկէք այժմ սիրելիս, և Տիկին Արպօթնըդի հետ բարեկամացէք։ Անիկա այն բարի, անուշ և պարզ անձերէն մին Ե՝ զոր քիչ առաջ կ'ակնարկէիք թէ մեր ընկերութեան մէջ չենք մտցներ։ Կը ցաւիմ ըսկելու որ Տիկին Արպօթնըդը շատ հազուադէպօրէն կուգայ ինծի։ Բայց տարկա իմ յանցանքս չէ։

Տիկին Ելլնապի. — Ինչ ձանձրացուցիչ բան որ էրիկ մարդիկը ճաշէն յետոյ այսքան երկար ատեն ներսը կը

մեան։ Կը կասկածիմ թէ անոնք ամենէն գէշ բաները կ'ըսեն մեր վրայ։

Լէյտի Սրբդիլիս. — Իրա՞ւ այդպէս կը խորհիք։

Տիկին Ելլնապի. — Վատահ եմ ատոր։

Լէյտի Սրբդիլիս. — Որքա՞ն սոսկալի են անոնք, պարշտամը հլիկնք։

Տիկին Ելլնապի. — Ոչ, ո եւ է տեղ կ'երթամ հետանալու համար այրի ու գէշ հագուած կիներէ, (վեր կ'ելլէ և Լէյտի Սթբաֆիլտի հետ գէպի աջակողմեան դուռը կը յառաջանայ)։ Լէյտի Հընտըլսթըն, պատշաճ կ'ելլենք աստղերը դիտելու համար։

Լէյտի Հընսրենըրն. — Անոնցմէ խիստ շատ պիտի տեսնէք, խիստ շատ։ Բայց չի մսիք։ (Տիկին Արպօթնըդին)։ Ամէնքս ալ շատ պիտի փընտոենք ձէրըլտը, սիրելի Տիկին Արպօթնըդ։

Տիկին Արպըրնըդի. — Բայց իրաւ Լօրտ Իլինուաթէր առաջարկեց ձէրըլտը իր քարտուղարըընել։

Լէյտի Հընսրենըրն. — Ոչ, այո՛, շատ ազնիւ եղաւ այդ մասին։ Անիկա ձեր աղուն վրայ բարձր գաղափար մը կազմած է։ Կարծեմ չէք ճանչնար Լօրտ իլինուորթհ սիրելիս։

Տիկին Արպըրնըդ. — Երբեք չեմ հանդիպած իրեն։ Լէյտի Հընսրենըրն. — Անունով կը ճանչնաք դինքը, անտարակոյս։

Տիկին Արպըրնըդ. — Չեմ կարծեր։ Այնքան աշխարհքէն քաշուած կ'ապրիմ, և քիչ մարդոց կը հանդիպիմ։ Կը յիշեմ թէ տարիներ առաջ լսած եմ ծեր Լօրտ Իլինուորթհի մը մասին որ Եօրքշալը կը բնակէր, կարծեմ։

Լէյտի Հընսրենըրն. — Ոչ, այո՛, Անիկա ընտանիքին վերջին կոման էր։ Շատ տարօրինակ մարդ մէր ան-

Կ'ուզէր իրմէ վար մէկու մը հետ ամուսնանալ, կամ չէր ուզեր, չեմ յիշեր թէ որն էր : Այդ մասին քիչ մը գախ թակութիւն ելաւ այն ատեն : Ներկայ Լօրտ Իլինու օրթհը բոլորպին տարբեր մէկն է : Շատ ազնիւ է : Անիկա... այս... դատապարտելի Ընթացք մը չէ ունեցած երբեք : Եւ կարծեմ թէ մեր գեղեցիկ Ամերիկացի հիւրը սիսաւ կը դատէ ուրիշները : Նաեւ չեմ դիտեր թէ կը հետաքրքրութի՝ այն բաներով որ դուք կը հետաքրքրութիք, սիրելի Տիկին Սրպըթնըդ : Կը կարծէս Գարօլին, թէ Լօրտ Իլինու օրթհ հետաքրքրութի աղքատ ները պատսպարելու ինդրով :

Լեյսի Գարօլին .— Կ'ենթադրեմ թէ բնաւ երբեք, ձեյն :

Լեյսի Հընսրէնըն .— Ամէնքս ալ տարբեր ճաշակներու տէր ենք, այնպէս չէ՞ : Բայց Լօրտ Իլինու օրթհը շատ բարձր դիրք մը ունի, և չկայ բան մը որ չի կարենայ ունենալ եթէ ուզէ ան անշուշտ, բաղդատաբար երիտասարդ մարդ մըն է տակաւին և շատ չըներ իր տիտղոսը ժառանգելը Գարօլին, ճշդիւ որքան ատեն է որ Լօրտ Իլինու օրթհը յաջորդած է :

Լեյսի Գարօլին .— Գրեթէ չորս տարիէ ի վեր կարծեմ ձեյն : Գիտեմ թէ նոյն տարին էր որ եզրօս ալ վերջին գայթակղութիւնը երեւցած է երեկոյեան թերթերուն մէջ :

Լեյսի Հընսրէնըն .— Ոչ, կը յիշեմ : Չորս տարի առաջ ըլլալու է ան : Անշուշտ, ուրիշ շատեր կային որ արդի Լօրտ Իլինու օրթհին տեղը, անոնք պիտի ժառանգէին տիտղոսը, Տիկին Սրպըթնըդ : Անոնցմէ մէկն էր ո՞վ էր, ան Գարօլին :

Լեյսի Գարօլին .— Խեղճ Մարկարէթին մանկիկը :

Կը յիշես անշուշտ թէ որքան կը փափաքէր որ զաւակը մանչ ծնի, մանչ մը ունեցաւ, բայց մեռաւ, և քիչ ետքն ալ ամուսինը մեռաւ, և ինքը գրեթէ անմիջապէս վերամուսնացաւ Լօրտ էսքօթի որդիներէն մէկուն հետ, որ կըսեն թէ կը ծեծէ զինքը :

Լեյսի Հընսրէնըն .— Ոչ, ատիկա իրենց ընտանիքին յատուկ է, սիրելիս, ժառանգական է : Կը յիշեմ թէ կար նահեւ ժառանգորդ մըն ալ, կղերական մը որ խենթ ձեւանալ կը սիրեր, կամ թէ խենթ մը որ կղերական ըլլալ կ'ուզէր, մոոցած եմ թէ որն էր, բայց գիտեմ թէ դատարանը խնդիրը երեւան հանեց որ անոր խելքը գլուխն էր : Անկէց ետքը տեսայ զինքը խեղճ Լօրտ Բլըմոթէտին տունը, մազերուն մէջ յարդ ցանած էր կամ անոր պէս տարօրինակ բան մը : Զեմ յիշեր թէ ինչ էր, յաճախ ցաւ կ'զգամ, Լեյսի Գարօլին, թէ սիրելի Լեյտի Սէսելեան շապրեցաւ և իր որդւոյն տիտղոսը ստանալը չի տեսաւ :

Տիկին Արարենըդ .— Լեյտի Սէսելի՞ա :

Լեյսի Հընսրէնըն .— Լօրտ Իլինու օրթհի մայրը՝ սիրելի Տիկին Սրպըթնըդ, գքսուհի ձերնինկամի գեղեցիկ աղջիկներէն մին էր, որ ամուսնացաւ Սըր Թօմաս Հարֆորտի հետ, որ իրեն համար շատ յարմար ամուսնութիւն մը չի նկատուեցաւ այն ատեն, թէեւ կ'ըսէին թէ Լոնտոնի ամէնէն գեղեցիկ էրիկ մարդոցմէն մին էր : Զանոնք ամէնքն ալ շատ մտերմօրէն կը ճանչնայի, նաեւ իրենց որդիները Սըրթըրը և ձօրճը :

Տիկին Արարենըդ .— Անշուշտ մեծ որդին էր որ յաջորդեց, Լեյտի Հընսթէնտըն :

Լեյսի Հընսրէնըն .— Ոչ, սիրելիս, զանի սպաննեցին որսորդութեան միջոցին կամ թէ ձկնորսութեան միջոցին էր, Գարօլին, մոոցած եմ բայց ձօրճը ժառանգեց ամէն բան :

Միշտ կ'ըսեմ իրեն թէ և ոչ մէկ կրտսեր որդի ի-
րենինին չափ մեծ բախտի մը արժանացած է :

Տիկին Արարթնը .— Լէյտի Հընսթէնտըն , կ'ուզեմ
անմիջապէս ձէրըլտին հետ խօսիլ , Կրնա՞մ զինքը
տեսնել : Կարելի՞ է զինքը կանչել տալ :

Լէյտի Հընսրինը .— Անշուշտ սիրելիսուր Սպասաւոր-
ներէն մէկը ճաշարան պիտի զրկեմ զինքը կանչելու
համար . չեմ զիտեր ինչ բան պարոններուն հոս գալը
այսքան կ'ուշացնէ : (Զանգակը կը հնչեցնէ) : Երբ Լօրտ
իլինուորթէլ առաջին անգամ ճանչցայ , պարզ ձօրմ
Նարֆօրտ մը եղած միջոցին՝ ան շատ փայլուն երի-
տասարդ մըն էր քաղաքին մէջ , առանց դրամի , տաս-
նոց մը իսկ չունէր , խեղճ սիրելի Լէյտի Սէսիլիսին
իրեն տուածէն զատ : Ան շատ անձնուէր էր իր որդ-
ւոյն : Կ'ենթաղրեմ թէ , զլիսաւորաբար իր հօրը հետ
անոր յարաբերութիւնները լաւ չըլլալուն համար : Օհ ,
ահաւասիկ սիրելի Արքերէցը : (Սպասաւորին դաւնալով) ,
վնաս չունի :

(Աըր ձօն և Տօքթ . Տօպլնի ներս կը մըտնեն ,
Աըր ձօն Լէյտի Սթըդիլտին քով կ'երթայ , և Տօքթ ,
Տօպլնի Լէյտի Հընսթէնտընին) :

Արթերէցը .— Լօրտ իլինուորթէլ շատ զուարճալի
էր : Երբեք այսքան զուարճացած չէի : (Տիկին Արարթ-
նըլը կը տեսնէ) : Ոհ , Տիկին Արարթնըզ :

Լէյտի Հընսրինը .— (Տօքթ . Տօպլնին) , կը տես-
նէք , զերջապէս Տիկին Արարթնըլը համոզեցի որ ինձի
դայ :

Արթերէցը .— Այդ մեծ պատիւ մըն է , Տիկին Հընս-
թէնտըն : Տիկին Տօպլնին ձեզմէ շատ պիտի նախանձի ,
Լէյտի Հընսրինը .— Ոհ , շատ կը ցաւիմ որ Տի-

կին Տօպլնին չի կրցաւ ձեզի ընկերանալ այս զիշեր :
Կ'ենթագրեմ թէ սովորական զլիսացաւովը կը տառա-
պի :

Արթերէցը .— Այո , Լէյտի Հընսթէնտըն , կատարեալ
մարտիրոս մը : Բայց առանձնութեան մէջ աւելի եր-
ջանիկ է ան , աւելի երջանիկ :

Լէյտի Գարօլին .— (Իր ամուսնոյն) : Ձօ՞ն , (Աըր
ձօն իր կնոջը քով կ'երթայ : Տօքթ . Տօպլնին Լէյտի
Հընսթէնտընին և Տիկին Արարթնըլին հետ կը խօսա-
ցի) :

(Տիկին Արարթնըլը ամբողջ ատենը Լօրտ իլինու-
որթէլ կը դիտէ : Ոհ , առանց զինքը նըշմարելու սեն-
եակ մտած է , և Տիկին էլընպիին կը մօտենայ , որ
Լէյտի Սթըդիլտին հետ կտյնած է պատշգամին վրայ
նայող դրանը մէջ) :

Լօրտ իլինուորթի .— Ինչպէս է աշխարհիս ամէնէն
հրապուրիչ կինը :

Տիկին էլընպի . — (Լէյտի Սթըդիլտին ձեռքը
բռնելով) : Երկուքս ալ շատ լաւ ենք , շնորհակալ
ենք , Լօրտ իլինուորթէլ : Բայց որքա՞ն քիչ ատեն մնա-
ցիք ճաշարանը... Կարծես թէ այս վայրկանին իսկ
մեկնած էինք հոնկէ :

Լօրտ իլինուորթի .— Մահու չափ ճանձրացայ : Շըրթ-
ներս չւացի ամբողջ միջոցին : Չափազանց կը բաղձայի
ձեզի մօտ դալ :

Տիկին էլընպի . — Գալու էիք : Ամերիկացի աղջիկը
մեզի գասախօսութիւն մը ըրաւ :

Լօրտ իլինուորթի .— Իրա՞ւ : Կարծեմ բոլոր Ամերի-
կացիներն ալ կը գասախօսեն : Կարծեմ թէ ատիկայ
իրենց կլիմային մէջ գոյութիւն ունի : Ի՞նչ նիւթի
վրայ գասախօսեց :

Տիկին Ելրնպի. — Ո՞հ, մաքրակրօնութեան անշուշտ:

Լօրս Իլինուօրփի. — Դարձի պիտի բերեմ զինքը, այնպէս չէ:

Որչա՞փ ատեն կու տաք ինծի:

Տիկին Ելրնպի. — Շաբաթ մը:

Լօրս Իլինուօրփի. — Մէկ շաբաթը պէտք եղածէն աւելի է:

(Ճէրըլտ և Լօրտ Ալֆրէտ կը մտնեն):

Ճէրըլտ. — (Տիկին Արպլթնըդին քով երթալով): Սիրելի մայրու:

Տիկին Արպրենը. — Ճէրըլտ, բնաւ աղեկ չեմ զգար ինքինքս: Զիս տուն տար ճէրըլտ: Պէտք չէի դալ:

Ճէրըլտ. — Շատ կը ցաւիմ, մայր: Անշուշտ կը տառնիս: Բայց նախ պէտք է որ Լօրտ Իլինուօրփին ճանչնաք: (Սենհակին միւս ծայրը կը յառաջանայ):

Տիկին Արպրենը. — Ոչ այս գիշեր, ճէրըլտ:

Ճէրըլտ. — Լօրտ Իլինուօրփի, այնքան կը փափաքիս որ մայրու ճանչնաք:

Լօրս Իլինուօրփի. — Ամենամեծ համոյքով: (Տիկին Ելրնպիին): Վայրկեանէ մը կը վերադառնամ: Մարդոց մայրելը կը ճանձրացնեն զիս, մեռնելու տստիճան, և բոլոր կիներն ալ իրենց մայրերուն պէս կ'ըլլան: Աւտիկայ իրենց ողբերգութիւնն է:

Տիկին Ելրնպի. — Եւ էրիկ մարդիկ չեն ըլլար: Այդ ալ անոնց ողբերգութիւնն է:

Լօրս Իլինուօրփի. — Ի՞նչ հիանալի արամադրութեան մը մէջ էք այս գիշեր: (Ետին կը դառնայ և ճէրըլտի հետ Տիկին Արպլթնըդին կը մօտենայ: Երբ զանի կը տեսնէ, զարմացած ետ կը քաշուի, յետոյ կամաց մը իր տէքերը կը դարձընէ ճէրըլտին կողմը):

Ճէրըլտ. — Մայր, Լօրտ Իլինուօրփին, որ առաջարկած է ինձ իր անձնական քարտուղարը ընել: (Տիկին Արպլթնըդ կը բարեւէ պաղութեամբ): Ինծի համար հիանալի սկզբնաւորութիւն մըն է, չէ՞: Կը յուսամ թէ ինձմով յուսախաբ չը պիտի ըլլայ: Ծնորհակալութիւն պիտի յայտնէք Լօրտ Իլինուօրփին այնպէս չէ՞ մայր:

Տիկին Արպրենը. — Լօրտ Իլինուօրփին շատ բարի է այժմ քեզմով հետաքրքրուելու համար:

Լօրս Իլինուօրփի. — (Իր ճէրըլտին ուսին վրայ դնելով): Ոհ, Տիկին... Արպլթնըդ, ճէրըլտ և ես արդէն մեծ բարեկամներ ենք:

Տիկին Արպրենը. — Զեր և իմ որդւոյս միջև ոչ մէկ շահեկան բան կրնայ գոյաւթիւն ունենալ, Լօրտ Իլինուօրփի:

Ճէրըլտ. — Սիրելի մայր, ինչպէս կրնաք տրդպէս ըսել: Անշուշտ Լօրտ Իլինուօրփին չափաղանց խելացի է: Զկայ բան որ Լօրտ Իլինուօրփի չգիտնայ:

Լօրս Իլինուօրփի. — Սիրելի տղաս:

Ճէրըլտ. — Իմ հանդիպած մարդոցս մէջ՝ չեմ տեսած մէկը որ իրեն չափ լաւ ճանչնայ կեանքը: Ինքինքս ապուշ կը զգամ ճէր ներկայութեանը, Լօրտ Իլինուօրփի: Անշուշտ, այնքան քիչ առիթներ ունեցած եմ որ: Ես ուրիշ տղոց պէս կթըն կամ Օքսֆօրտ չեմ յաճախած: Բայց այնպէս կ'երեւի թէ Լօրտ Իլինուօրփին հոգը չըներ ատիկա: Ոհ չափաղանց բարի եղաւ ինձնկատմամբ, մայր:

Տիկին Արպրենը. — Թերեւս Լօրտ Իլինուօրփին իր միաքը փոխէ: Կրնայ ըլլալ որ իրապէս չուզեր քեզ իր քարտուղարը ընել:

Ճէրըլտ. — Մայր:

Տիկին Արպրենը. — Պէտք է մտածես, ինչպէս որ ալ ըսեր արդէն թէ շատ քիչ առաւելութիւններ ունիս:

Տիկին Ելրնպի .— (Լօրտ Իլինուօրթհի մօտենալով ,) Լօրտ իլինուօրթհ , կ'ուզեմ ձեզի հետ խօսիլ վայրկեանի մը համար , եկէք քիչ մը :

Լօրտ իլինուօրթի .— Կը ներէք ինծի Տիկին Արպըթնը : Այժմ ձէրըլտ , թոյլ մի տար այլեւս որ քու պատուակոն մայրդ գուտարութիւններ յարուցանէ : Խնդիրը բոլորովին կարգադրուած է , չէ :

Ճերլիս .— Այնպէս կը յուսամ : (Լօրտ իլինուօրթհ Տիկին Ելինպիին քով կ'երթայ :)

Տիկին Ելրնպի .— Կարծեցի թէ ալ բնաւ չպիտի թողէք այն տիկինը որ սեւ թաւէչէ հազուստ հագած է : Լօրտ իլրնուօրթի .— Ան չափազանց գեղանի է : (Տիկին Արպըթնըդին կը նայի :)

Լեյսի Հընսրենըրն .— Գարօլի՛ն , նուագի սրահը երթանք ամէնքս ալ : Օրիորդ Ուըրսլին պիտի նուագէ : Դուք ալ պիտի գաք , սիրելի Տիկին Արպըթնըդ , այնպէս չէ : Զէք կրնար երեւակայել թէ ինչ անակնկալներ վերապահուած են ձեզի : (Տօքթ . Տօպէնիին) Անշուշտ պէտք է որ Օրիորդ Ուըրսլին յետմիջօրէ մը ժողովրդապետան բերեմ : Այնքան պիտի ուզէի որ սիրելի Տիկին Տօպէնին լսէր իր ջութակ նուագելը : Ա՞ , մոռցայ : Սիրելի Տիկին Տօպէնիին լսողութիւնը քիչ մը խսթար- ուած է , այնպէս չէ :

Արթերէցը .— Իր խլութիւնը մեծ զրկանք մըն է իրեն համար նոյն իսկ իմ քարոզներս չի լսեր այլեւս , Զանոնք տունը կը կարդայ : Բայց անիկա շտա մը հը- նարքներ կը ստեղծէ զբաղելու համար :

Լեյսի Հընսրենըրն .— Շատ կը կարդայ , կ'ենթադ- րեմ :

Արթերէցը .— Խոշոր տպուած գիրերը միայն : Իր տեսողութիւնը հետզհետէ կը տկարանայ : Բայց բնաւ յուսանատած չէ ան , բնաւ երւեքի :

Ճերլիս .— (Լօրտ իլինուօրթհին) , իմ մօրս հետ խօսեցէք , Լօրտ իլինուօրթհ , նուագի սրահը երթալէ առաջ : Ան այնպէս կը խորհի թէ , ինծի ըսածնիդ լուրջ բան մը չէ :

Տիկին Ելրնպի .— Զպիտի՞ գաք , Լօրտ իլինուօրթհ : Լօրտ իլինուօրթի .— Քանի մը բոպէէն : Լէյտի Հընս- թէնըլն , եթէ Տիկին Արպըթնըդը ինձ թոյլատրէ , կը փափաքիմ քանի մը խօսք ըսել իրեն , քիչ մը ետ- քը ձեզի կը միանանք :

Լեյսի Հընսրենըրն .— Ահ , անշուշտ : Շատ բան պիտի ունենանք իրեն ըսելիք , և ինքն ալ շատ բաներու համար ձեզի շնորհակալ պիտի ըլլայ անշուշտ : Ամէն տղայ այսպիսի առաջարկներ չընդունիր , Տիկին Ար- պըթնըդ : Բայց գիտեմ թէ կը գնահատէք այդ , սի- րելիս :

Լեյսի Գարօլին .— Ճօ՛ն :

Լեյսի Հընսրենըրն .— Ուրեմն , Լօրտ իլինուօրթհ , շատ երկար ատեն ձեզի մի պահէք Տիկին Արպըթնըդը : Չենք ուզեր իրմէ զրկուիլ :

(Կը մեկնի միւս հիւրերուն հետեւելով : Զութակի ձայն կուգայ նուագի սրահէն) :

Լօրտ իլինուօրթի .— Ուրեմն , Ռաշէլ , մեր որդին է ան : Շատ հպարտ եմ իրմով : Ան նոր ֆօրտ մըն է , իր ամէն տեսակ ինչէզովը : Սակայն ինչո՞ւ Արպըթնըդ անունը տուիր իրեն , Ռաշէլ :

Տիկին Արպըթնըդ .— Ու է անուն լաւ է մէկու մը համար որ ո և է անուն կրելու իրաւունք չունի :

Լօրտ իլինուօրթի .— Այնպէս կ'ենթադրեմ... Բայց ինչո՞ւ ձէրըտ գրիր անունը :

Տիկին Արպըթնըդ .— Անունը այն մարդուն , որուն սիրտը ցաւցուցած եմ... իմ հօրս անունը :

Լօրս Իլինուօրին.—Լաւ, Ռաշէլ, եղածը եղած է։
Ինչ որ ունիմ ըսելիք այժմ, ան է թէ՝ շատ ու շատ
գոհ եմ մեր տղայէն։ Աշխարհը զինքը իմ անձնական
քարտուղարս միայն պիտի գիտնայ, բայց ան ինձի
համար շատ մօտիկ և շատ սիրելի բան մը պիտի
ըլլայ։ Զարմանալի բան է Ռաշէլ։ Իմ կեանքս կա-
տարեալ կը թուէր Բայց այնպէս չէր։ Անոր բան մը
կը պակսէր, որդի մը կը պակսէր անոր։ Այժմ գտած
եմ իմ որդիս, ուրախ եմ գտած ըլլալուս համար։

Տիկին Արագրնըրդ.—Դուն իրաւունք չունիս զանի
պահանջելու, ոչ իսկ իր ամենապպոիկ մէկ մասը։
Տղան ամբողջովին իմս է, և իմս պիտի մնայ։

Լօրս Իլինուօրին.—Սիրելի Ռաշէլս, քսան տարիէ
ի վեր միայն քուկդ էր ան։ Ինչո՞ւ չես թողուր որ
քիչ մըն ալ իմս ըլլայ։ Անիկա որքան քուկդ՝ նոյնքան
ալ իմս է։

Տիկին Արագրնըրդ.—Դուն կը խօսիս ա՞յն տղուն
վրայ որ լքեցիր։ Այն աղուն վրայ որ որքան գիտես,
կրնար մեռնիլ անօթութենէ և զրկանքէ։

Լօրս Իլինուօրին.—Կը մռանաս, Ռաշէլ, թէ դուն
էիր զիս լքողը, ես քեզ չթողուցի։

Տիկին Արագրնըրդ.—Ես քեզ ձգեցի, ինչու որ
մերժեցիր անուն մը տալ մանկիկին։ Իմ որդիս ծնելէ
առաջ՝ աղաչեցի քեզի որ ինձ հետ ամուսնանաս։

Լօրս Իլինուօրին.—Այն ատեն ապագային մասին
յոյսեր չունէի։ Ատկէց զատ, Ռաշէլ, քենէ քիչ մը ա-
ւելի մեծ էի, քսան երկու տարեկան, քսան և մէկ տա-
րու էի կարծեմ։ Երբ ամբողջ ինդիրը սկսաւ քու հօրդ
պարտէզին մէջ։

Տիկին Արագրնըրդ.—Երբ մարդ մը բաւական մեծ
է սխալ մը գործելու համար, ան պէտք է որ բաւա-
կանմեծ ըլլայ նաև ուղիղն ալ ընելու համար։

Լօրս Իլինուօրին.—Միրելի Ռաշէլս, ընդհանրապէս
մտաւորական ասացուածքները հետաքրքրական կ'ըլ-
լան, բայց անոնք բարոյականի մէջ՝ բացարձակապէս
ոչինչ կ'արժին։ Իսկ գալով քու ըսածիդ թէ մեր զա-
ւակը անօթի թողուցի, ատիկա անշուշտ ճիշդ չէ և
իսենթ խօսք է։ Մայրս տարեկան 600 ոսկի յատկացնել
ուղեց քեզի, բայց դուն բան մըն ալ առնել չուզեցիր։
Դուն պարզապէս անյայտ եղար, և մանկիկն ալ հետ
տարիիր։

Տիկին Արագրնըրդ.—Իրմէ տասնոց մը իսկ չէի
կրնար ընդունիլ։ Քու հայրդ տարեկեր էր։ Երբ Բարիդ
կը գտնուէինք, ան իմ ներկայութեանս քեզի ըսաւ որ
քու պարտականութիւնդ էր հետս ամուսնանալ։

Լօրս Իլինուօրին.—Օհ, պարտականութիւնը այն
բանն է որ մարդ ուրիշներէն կ'ակնկալէ, այդպէս չէ
երբ իր վրայ ըլլայ խնդիրը։ Անշուշտ մայրս իմ վրաս
ազդեցութիւն բանեցուց։ Ամէն մարդ ալ մօրմէն
կ'ազդուի երբ չատ երիտասարդ ըլլայ։

Տիկին Արագրնըրդ.—Ուրախ եմ որ այդպէս կ'ըսես։
Ճէրըլոը անշուշտ քեզի հետ չպիտի մնկնի։

Լօրս Իլինուօրին.—Ի՞նչ իսենթութիւն Ռաշէլ։

Տիկին Արագրնըրդ.—Կը կարծես որ թող տամ իմ
որդւոյս...։

Լօրս Իլինուօրին.—Մե՛ր որդին։

Տիկին Արագրնըրդ.—Ի՞մ որդիս... (Լօրտ Իլի-
նուօրթ։ ուսերը կը թօթուէ) ... որ մեկնի այն մար-
դուն հետ որ իմ երիտասարդութիւնս փճացուցած
է, որ իմ կեանքս քայքայած է, որ իմ կեանքիս ամէն
մէկ օրը աղարտած է։ Զի հասկրնար թէ ինչ եղած
կրնայ ըլլալ տառապանքով և ամօթով լեցուն անցեալս։

Լօրս Իլինուօրին.—Միրելի Ռաշէլս, պէտք է պազ-

բապէս ըսեմ որ ձէրըլտին ապագան շատ աւելի կառեւոր է քան թէ քու անցեալդ:

Տիկին Արարբնլդ. — ձէրըլտը չի կրնար իր ապագան բաժնել իմ անցեալէս:

Լօրս Իլինուօրին. — Ատիկայ ճիշդ այն բանն է որ պէտք է ընէ ան, և ճիշդ այդ բանին մէջ է որ պէտք է օգնես իրեն: Ի՞նչ ինքնատիպ կին մըն ես դուն, Զգացումով կը խօսիս և սակայն կատարեալ անձնասիրութեամբ կը գործես: Բայց պէտք չէ որ կոռուփնք: Ռաշէլ, Կ'ուզեմ որ այս խնդիրը նկատի առնես ողջ մտութեամբ, այն տեսակէտով՝ ինչ որ լաւ պիտի ըլլայ մեր որդւոյն համար: առանց նկատի ունենալու քու անձդ և զիս: Ներկայիս ի՞նչ է մեր որդին: Քիչ վճարումով գըագիր մը՝ անզլիական երկրորդական քաղաքի մըպզտիկ դրամատան մը մէջ: Կը սխալիս եթէ կ'երեւակայես թէ շատ երջանիկ է ան իր այդ դիրքին մէջ: Ան բոլորովին դժգոհ է:

Տիկին Արարբնլդ. — Ան դժգոհ չէր քեզի հանդիպելէն առաջ: Դուն զինքը այնպէս ըրիր:

Լօրս Իլինուօրին. — Անշուշտ ես ըրի զինքը այնպէս, Դժգոհութիւնը տոաջին քայլն է մարդու մը և ազգի մը յառաջացումին: Բայց ես չխողուցի զինքը անիրագործելի բաղձանքներով: Ո՛չ, այլ իրեն պատուական առաջարկ մը ըրի: Պէտք չկայ ըսելու թէ երբ իմացաւ ան վեր ցատկեց: Ո և է երիտասարդ այդպէս պիտի ընէր անշուշտ: Խսկ այժմ, պարզապէս հասկցուելուն համար որ ես տղուն բուն հայրն եմ և ինքն ալ իմ բուն որդիս՝ կ'ուզես գործնականօրէն կործոնել իր ապագան: Հսել կ'ուզես թէ եթէ ես կատարեալ օտարական մը ըլլայի, պիտի ձգէիր որ ձէրըլտը հետո մեկնէր, բայց իմ բուն միսս ու արիւնս ըլլալուն

համար, չես թողուր: Որքա՞ն ծայրայեղօրէն անտրամաբանական ես:

Տիկ. Արարբնլդ. — Զգիտի թողում որ երթայ: Լօրս Իլինուօրին. — Ինչպէս կարող ես արգիլել: Ի՞նչ պատճառ կրնաս ցուցնել իրեն, իմինիս պէս առաջարկ մը իրեն մերժել տալու համար: Հարկ չկայ ըսելու թէ, անշուշտ ես ալ պիտի ըսեմ իրեն հետ ի՞նչ կապակցութիւն ունենալս: Հարկ չկայ ըսելու: Բայց անշուշտ դուն ալ չը պիտի համարձակիս ըսել իրեն, Տես ինչպէս մեծցուցած ես զինքը:

Տիկին Արարբնլդ. — Ես մեծցուցած եմ զինքը բարի մարդ մը ըլլալու համար:

Լօրս Իլինուօրին. — Ճիշտ այդպէս: Եւ ի՞նչ եղաւ արդիւնքը: Դուն այնպէս կրթեցիր զինքը որ երբ քու գաղտնիքդ իմանայ, քու դատաւորդ ըլլայ: Եւ դառնու անիրաւ դատաւոր մը պիտի ըլլայ ան քեզի հանդէպ: Մի խարուիր, Ռաշէլ: Տղաքը իրենց ձնողքը սիրելով կ'սկսին: Ատեն մը ետքը կը դատեն զանոնք, և հազուադէպօրէն — եթէ երբեք — կը ներեն անոնց:

Տիկին Արարբնլդ. — Ճօրճ, իմ որդիս մի առներ ինձմէ: Քան տարի վշտի մէջ ապրած եմ: Միայն մէկ բան ունիմ որ զիս կը սիրէ և միայն մէկ բան զոր ես կը սիրեմ: Դուն ուրախութեան, հաճոյքի և յաղթանակի կեանք մը ունեցած ես: Շատ երջանիկ եղած ես, առանց երբեք մեր վրայ խորհելու: Կեանքի սինամքու տեսութիւններդ նկատի առնելով՝ պատճառ մը չկար որ մեզ յիշէիր երբեք: Քու մեզի հանդիպիլով՝ պատահար մըն էր միայն, սոսկալի պատահար, մը: Մոռցիր զան: Մի գար այժմ և գողնար ինձմէ... միակ բանը որ ունիմ ամբողջ աշխարհիս վրայ: Դուն ուրիշ բաներու մէջ այնքա՞ն հարուստ ես: Ինձի ձգէ

Իմ կեանքիս փոքրիկ այդին, ինծի ձգէ այն պարտէզը, ջուրի աղբիւրը և գառնուկը որ Աստուած դրկած է ինծի, գութի՞ թէ բարկութեան մէջ, ո՛հ, ինծի ձգէ զայն ծօրճ, ինծմէ մի առներ ծէրըլտը:

Լօրս Իլինուօրին.—Ռաշէլ, այս միջոցիս գուն անհրաժեշտ չես ծէրըլտի ապագային համար, բայց ես պէտք եմ իրեն: Այլեւս ուրիշ բան չկայ ըսելիք այս խնդրոյն վրայ:

Տիկին Արպրենըդ.—Զը՛ պիտի թողում որ երթայ:

Լօրս Իլինուօրին.—Ահաւասիկ ծէրըլտը: Իրաւունքը իրն է իր մասին որոշում տալու համար:

(Ճէրըլտ ներս կը մտնէ:)

Ճէրըլտ.—Լաւ ուրեմն, սիրելի մայրս, կը յուսամ թէ ամէն բան կարգադրեցիք լորտ Իլինուօրթէի հետ:

Տիկին Արպրենըդ.—Զեմ կարգադրած, ճէրըլտ:

Լօրս Իլինուօրին.—Այնպէս կ'երեւի թէ քու մայրդ ուզեր որ հետա զաս, ուեէ պատճառաւ:

Ճէրըլտ.—Ինչո՞ւ մայր:

Տիկին Արպրենըդ.—Ես կը կարծէի թէ հոս ինծի հետ շատ երջանիկ էիր, ճէրըլտ: Զէի գիտեր թէ այդքան ինձմէ հեռանալ կը փափաքիս:

Ճէրըլտ.—Մայր, ինչպէ՞ս կարող էք այդպէս խօսքը: Անշուշտ ձեզի հետ շատ երջանիկ եղած եմ: Բայց մարդ մը չի կրնար միշտ իր մօրը հետ կենալ: Եւ ոչ մէկ տղայ այդպէս կ'ընէ: Կ'ուզեմ որ ինծի զիրք մը շինեմ, բան մը ընեմ: Ես կը կարծէի թէ հպարտ պիտի գգայիք ինքզինքնիդ լորտ Իլինուօրթէի քարտուղարը ըլլալս տեսնելով:

Տիկին Արպրենըդ—Զեմ կարծեր որ դուն յարմար ըլլաս լորտ Իլինուօրթէին իրը անձնական քարտուղարը: Պահանջուած յատկութիւնները չունիս:

Լօրս Իլինուօրին.—Զեմ ուզեր այնպէս երեւնալ թէ կը միջամտեմ, Տիկին Արպրենըդ, բայց ձեր վերջին առարկութիւնը նկատի առնելով՝ անշուշտ ես աւելի լաւ կրնամ դատել այդ: Եւ կրնամ ձեզի ըսել թէ ձեր որպին ունի բոլոր այն բարեմասնութիւնները որոնց կ'սպասէի: Իրականին մէջ իմ սպասածէս աւելին ունի ան, շատ աւելի: (Տիկին Արպրենըդ լուռ կը կենայ): Ուրիշ պատճառ ունի՞ք, Տիկին Արպրենըդ, չուզելու համար ձեր որդին ընդունի այս պաշտօնիք:

Ճէրըլտ.—Ունի՞ք, մայր, Պատասխան տուէք,

Լօրս Իլինուօրին.—Եթէ ունիք, Տիկին Արպրենըդ, խնդրեմ ըսէք: Հոս առանձին ենք, ինչ որ ըլլայ ան, հորդկ չկայ ըսելու թէ ուրիշին չպիտի ըսել:

Ճէրըլտ.—Մայր:

Լօրս Իլինուօրին.—Եթէ կը փափաքիք առանձին ըլլալ ձեր որդւոյն հետ, ես հեռանամ, Թիրես ուրիշ պատճառ մը ունիք զոր չէք ուզեր լսել:

Տիկին Արպրենըդ.—Ուրիշ պատճառ չունիք:

Լօրս Իլինուօրին.—Ուրեմն սիրելի տղաս կրնաք խնդիրը կարգադրուած նկատել: Եկուր, միասին մէյմէկ սիկառ ծիսենք պատշգամին վրայ: Եւ Տիկին Արպրենըդ, խնդրեմ թոյլ տուէք ինձ ըսելու թէ, շատ շատ իմաստութեամբ զործեցիք:

(Ճէրըլտի հետ կը մեկնին: Տիկին Արպրենըդ առանձին կը մնայ: Ան անշարժ կը կենայ գէմքին վրայ անբացատրելի վշտի արտայալառութեամբ մը:)

Վերջ երկրորդ արարուածին

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

ՏԵՍԱՐԱՆ Հ

Հընաբեկնութիւնի նկատերու գալիքը: Ետին դուռ մը
որ պաշզամ կը տանի:

(Լորտ Խլինուօրթհ և ձէրըլտ: Լորտ Խլինուօրթհ
կը թնած բազմոցի մը վրայ: ձէրըլտ աթոռի մը վրայ
նստած):

Լօրտ Խլինուօրթհ.—Շատ զգայուն կին մըն է քու
մայրդ, ձէրըլտ: Գիտէի որ վերջապէս պիտի համաձայ-
նէր:

Ճերլիտ.—Մայրս չափազանց խղճամիտ, է Լորտ
Խլինուօրթհ, զիտեմ, ան կը մտածէ թէ պէտք եղածին
չափ զարգացած չեմ ճեր քարտուղարը ըլլալու հա-
մար: Եւ կատարելապէս իրաւունք ունի: Սոսկալի ծոյլ
էի դպրոցը եղած ատենս, և հիմակ ալ չը պիսի կա-
րենայի քննութիւն մը իսկ անցնել կեանքս փրկելու
համար:

Լօրտ Խլինուօրթհ.—Սիրլի ձէրըլտո, քննութիւն-
ները ուեէ արժէք չունին: Եթէ մարդ մը ազնուական
է, ան արգէն բաւական բան զիտէ, և եթէ ազնուական
չէ իր զիտացածը վասակար է իրեն:

Ճերլիտ.—Բայց ես այնքա՞ն անգիտակ եմ աշխար-
հքէն, Լորտ Խլինուօրթհ:

Լօրտ Խլինուօրթհ.—Մի վախնար ձէրըլտ: Մտա-
ծէ թէ աշխարհիս ամենէն սքանչելի բանը ունիս...
երիտասարդութիւնը: Երիտասարդութեան պէս ոչինչ
կայ: Միջին տարիք ունեցողները զանազան հիւան-

գութիւններով կապուած են կեանքին: Ծերերը՝ կեան-
քին անպէտ կարասիներու սենեակին մէկ մասը կը
կազմեն: Բայց երիտասարդութիւնը կեանքին տէրն է:
Իմ երիտասարդութիւնս կրկին շահելու համար, ձէրըլտ
չկայ բան մը որ չընեմ... բացի վարժութիւն ընելէն,
առատուն կանուխ ելլելէն և կամ հասարակութեան մէջ
օգտակար անդամ մը ըլլալէն:

Ճերլիտ—Բայց ինքզինքնիդ ծե՞րը նկատէք, Լորտ
Խլինուօրթհ:

Լօրտ Խլինուօրթհ.—Ես քու հայրդ ըլլալու չափ ծեր
եմ ձէրըլտ:

Ճերլիտ.—Չեմ յիշեր իմ հայրս, ան տարիներ առաջ
մեռած է:

Լօրտ Խլինուօրթհ.—Լէյտի Հընթէնդընն ալ այնպէս
ըսաւ ինձ:

Ճերլիտ.—Շատ զարմանալի է. մայրս երբեք չի
խօսիր իմ հօրս վրայ: Երբեմն կը մտածեմ թէ իրմէ
վար մէկը առած ըլլալու է:

Լօրտ Խլինուօրթհ.—(Քիչ մը խոժոռելով), Իրա՞ւ:
(ձէրըլտին քով կ'երթայ և իր ճեռքը անոր ուսին վրայ
կը դնէ): Կարծեմ հօր մը պակասը չես զգացած, այն-
պէս չէ ձէրըլտ:

Ճերլիտ.—Օ՞հ, ոչ, մայրս ինծի հանդէպ այնքա՞ն
բարի էր որ: Եւ ոչ մէկը իմ մօրս պէս մայր մը ու-
նեցած է երբեք:

Լօրտ Խլինուօրթհ.—Շատ վասահ եմ այդ մասին:
Այսուհանդերձ կ'երեւակայեմ թէ մայրերէն շատերը
իրենց որդիները շատ լաւ չեն հասկնար: Բաել կ'ուզեմ
թէ չեն հասկնար թէ տղայ մը փառասիրութիւններ
ունի, կեանքը տեսնելու և իրեն անուն մը շինելու
փափաքը ունի: Վերջապէս, ձէրըլտ, կարելի չէ յու-

սալ թէ դուն կարենաս ամբողջ կեանքդ անցնել մոք-
լիի պէս ծակի մը մէջ, կրնա՞ս:

Ճերլս.—Ա՛հ, ոչ, սոսկալի բան պիտի ըլլար
այդ:

Լօրս իլինուօրին.—Մօք մը սէրը շատ յուզիչ է
անշուշտ, բայց տարօրինապէս անձնասէր կ'ըլլայ ան-
աճախ: Բաել կ'ուզեմ թէ, շատ անձնասիրութիւն կայ
անոր մէջ:

Ճերլս.—(Կամաց մը). Կ'ենթագրեմ թէ այնպէս է: և
Լօրս իլինուօրին. —Քու մայրդ կատարելապէս բա-
րի կին մըն է: Բայց բարի կիները այնքա՞ն սահմա-
նափակ տեսութիւններ կ'ունենան կեանքի մտսին, ի-
րենց հորիւննը այնքան պզտիկ կ'ըլլայ, անոնք այն-
քան ճղճիմ բաներով կը հետաքրքրութիւն, այնպէս չե՞ն:

Ճերլս.—Անոնք անշուշտ շատ կը հետաքրք-
րութիւն այնպիսի բաներով, որոնց մենք կարեւորութիւն
չենք ընծայեր:

Լօրս իլինուօրին.—Կարծեմ թէ քու մայրդ շատ
կրօնասէր է:

Ճերլս.—Ահ, այս, միշտ եկեղեցիկ'երթայ ան: և
Լօրս իլինուօրին.—Ահ, արդիական չէ ան, և ար-
դիական ըլլալը միակ բանն է որ կ'արժէրլլալ հիշ-
մակուան ատենները: Դուն կ'ուզես արդիական ըլլալ,
այնպէս չէ, ճէրըլտ: Կ'ուզես կեանքը ճանչնալ ինչպէս
որ է ան իրականին մէջ, և ոչ թէ ետ մնալ հինցած
տեսութիւններով կեանքի մասին: Լաւ, այժմ քու ը-
նելիքդ է, յարմարցնել ինքզինքդ լաւագոյն ընկերու-
թեան համար: Մարդ մը որ կրնայ իշխել լոնտոնեան
հացկերոյթի մը, կրնայ նաև իշխել բոլոր աշխարհին:
Ապագան dandyինն է: կատարեալ ճաշակ ունեցողներն
են որ պիտի իշխեն:

Ճերլս.—Շատ պիտի ուզէի գեղեցիկ բաներ հագ-
նիւ: Բայց ինծի միշտ ըսուած է թէ մարդս պէտք չէ
շատ զբաղի իր հագուստներով:

Լօրս իլինուօրին.—Այժմ մարդիկը այնքան բա-
ցարձակապէս մակերեսային են որ չեն հասկնար
մակերեսայինին փիլիսոփայութիւնը: Ուրեմն, Ճերլս,
պէտք է որ քու փողկապդ աւելի լաւ կապել սորվիս:
Զգացումը կը յարմարի կոճակի օղակին միայն: Բայց
գլխաւոր բանը որ կը պահանջուի փողկապէն, ոճն է:
Աղէկ կապուած փողկապդ մը՝ առաջին լուրջ քայլն է
կեանքի մէջ:

Ճերլս.—(Խնդալով), թերեւս կարենամ փողկապ-
մը կապել սորվիլ, Լօրտ իլինուօրթն, բայց երբեք
չպիտի կարենամ ձեզի պէս իսսիլ: Խօսիլ չեմ գիտեր:

Լօրս իլինուօրին.—Օհ, խօսէ ամէն կնոջ հետ
իբր թէ կը սիրես զինքը, և խօսէ ամէն էրիկ մար-
դու հետ, իբր թէ ան քեզ կը ճանձրացնէ, և քու
առաջին տարւոյդ վերջաւորութեանը՝ պիտի ունենայ
այն համբաւը թէ ընկերային ամենակատարեալ վար-
ուելակերպի մը տէրն ես:

Ճերլս.—Բայց շատ զժուարէ է ընկերութեան մէջ
մանել, այնպէս չէ:

Լօրս իլինուօրին.—Անոր մէջ ըլլալը ճանձրոյթ
մըն է միայն: Բայց անկէ դուրս ապրիլը պարզապէս
ողբերգութիւն մըն է: Ընկերութիւնը անհրաժեշտ բան
մըն է, եւ ոչ մէկ մարդ կատարեալ յաջողութիւն
կ'ունենայ այս աշխարհիս վրայ, եթէ զինքը պաշտպա-
նող կիներ չունենայ, և կիներն են որ կ'իշխեն ընկե-
րութեան մէջ, եթէ քու կողմէ կիներ չունենամ բան
մը չես կրնար շահիլ: Ըլլաս փաստաբան, ըլլաս փո-
խանակութեան գործակալ և միեւնոյն միջոցին խըմ-
բագրապետ:

Ճերլս. — Շատ դժուար է կիները հասկնալ, այնպէս չէ՞ :

Լօրս Իլինուօրին. — Երբեք պէտք չէ ջանալ զանոնք հասկնալու: Կիները պատկերներ են: Երիկ մարդկեր առեղծուածներ: Եթէ կ'ուզես գիտնալ թէ կին մը ինչ լսել կ'ուզէ իրապէս — թէև միշտ վտանգաւոր բան մը փորձել է այդ — անոր դէմքը դիտէ, զինքը մտիկ մի ընկը:

Ճերլս. — Բայց կիները չափազանց խելացի են, այնպէս չէ՞ :

Լօրս Իլինուօրին. — Մարդ միշտ պէտք է այնպէս ըսէ իրենց: Բայց փիլիսոփային համար, սիրելի ձերըլտս, կիները կը ներկայացնեն նիւթին յաղթանակը մտքին վրայ... ինչպէս որ այրերն ալ կը ներկայացնեն մտքին յաղթանակը բարոյականին վրայ:

Ճերլս. — Ինչպէս ուրեմն կիները այնքան իշխանութիւն կրնան ունենալ, ինչ որ դուք կ'ըսէք թէ ունին անոնք:

Լօրս Իլինուօրին. — Կանանց պատմութիւնը՝ պատմութիւնն է ամէնէն գէշ տեսակ բոնապետութեան որ երբեք աշխարհը ճանչցած ըլլայ: Տկարներու բըռնապետութիւնը զօրաւորներուն վրայ: Միակ տեւական բոնապետութիւնն է այն:

Ճերլս. — Բայց կիները միթէ մեր վրայ չունին նրբացնող ազդեցութիւն մը:

Լօրս Իլինուօրին. — Միմիայն մտաւորականութիւնն է որ մարդը կը նրբացնէ:

Ճերլս. — Ստկայն, շատ տեսակ կիներ կան, այնպէս չէ՞ :

Լօրս Իլինուօրին. — Ընկերութեան մէջ միայն երկու տեսակ կիներ կան, պարզերը և չպարուածները:

Ճերլս. — Բայց կան ընկերութեան մէջ բարի կիներ: Այնպէս չէ՞ :

Լօրս Իլինուօրին. — Պէտք եղածէն աւելի կան: Ճերլս. — Բայց դուք կը մտածէք թէ կիները պէտք չէ որ բարի ըլլան:

Լօրս Իլինուօրին. — Երբեք պէտք չէ լսել անոնք այդ բանը, ինչու որ ամէնքն ալ բարի կը դառնան յետոյ: Կիները հրապուրիչ յամառութիւն մը ունեցող սեռն են: Ամէն կին ապստամբ մըն է, և սովորաբար կատաղի ըլմբոստ մը իր անձին հանդէպ:

Ճերլս. — Դուք երբեք ամուսնացած չէք, Լօրտ Իլինուօրթէ, այնպէս չէ՞ :

Լօրս Իլինուօրին. — Այրեը կ'ամուսնանան ինչու որ յոզնած են, կիները կ'ամուսնանան ինչու որ հետաքրքիր են: Երկուքն ալ յուսախափ կ'ըլլան:

Ճերլս. — Բայց չէք կարծեր որ մարդ կրնայ երջանիկ ըլլալ եթէ ամուսնանայ:

Լօրս Իլինուօրին. — Կատարելապէս երջանիկ: Բայց ամուսնացած մարդու մը երջանկութիւնը կախեալ է այն կիներէն, որոնց հետ չէ ամուսնացած, սիրելի ձերըլտս:

Ճերլս. — Բայց եթէ մարդ սիրահարուած ըլլա՞յ:

Լօրս Իլինուօրին. — Մարդ միշտ պէտք է սիրահարւած ըլլայ: Եւ այդ է պատճառը որ երբեք պէտք չէ ամուսնանայ:

Ճերլս. — Աէրը սքանչելի բան մըն է, այնպէս չէ՞ :

Լօրս Իլինուօրին. — Երբ մարդ սիրահար է՝ ինքը զինքը խարելով կը սկսի և կը վերջացնէ ուրիշները խերելով: Աշխարհին ումանը կոչուածը այդ է: Բայց իրական մեծ սէր մը՝ բազդատաբար հազուագիւտ է ներկայ ժամանակները: Ատիկա գործ չունեցող մարդոց

առանձնաշնորհումն է: Գիւղը ապրող ծոյլ դասակարգին միակ զբաղումն է այդ, և միայն ատով կարելի է բացատրել մեր Հարֆօրտներուն ալ ընթացքը:

Ճերլիս, — Հարֆօրտներուն, Լորտ Իլինուօրթի:

Lors Իլինուօրթի. — Իմ ընտանիքիս անունն է այդեՊէտք է սորվիս ազնուականութեան ցեղագրութիւնը, Ճէրըլտ: Պէտք է որ ընկերութեան մէջ գտնուող երետասարդ մը կատարելապէս գիտնայ այդ գիրքը, և Անգլիացւոց տեսած լաւագոյն գործը զայն նկարագրելն է վէպերուն մէջ: Այժմ, Ճէրըլտ, նոր կեանք մը պիտի սկսիս ինծի հետ, և ես կ'ուզեմ որ ապրելու կերպը գիտնաս: (Տիկին Արպըթնըդ կ'երեւի պատրշամին խորէն): ինչու որ աշխարհքը ապուշները չինած են որ խելացիները ապրին անոր մէջ: (Զախ կողմէն կը մտնեն Լէյտիլզընոթէնտըն և Տօքթ. Տօպէնի:

Լէյսի Հընսրէնտըն. — Ա՛հ, հոս էք, սիրելի Լորտ Իլինուօրթի: Լաւ ուրեմն, կ'ենթադրիմ թէ, մեր երետասարդ բարեկամ Ճէրըլտին շատ մը խրատներ տուիք իր նոր պարտականութիւններուն մասին, միեւնոյն միշտին հաճելի սիկառէթ մըն ալ ծխելով:

Lors Իլինուօրթի. — Խրատներուս լաւագոյնը տուիք իրեն, Լէյտի Հընոթէնտըն, և սիկառէթներուն ալ լաւագոյնը:

Լէյսի Հընսրէնտըն. — Այնքան կը ցաւիմ որ հոս չէի ձեզ մտիկ ընելու համար, բայց կարծեմ թէ այլևս շատ ծեր եմ բան սորվելու համար: Բացի ձեզմէ, սիրելի Արքերէց, երբ ձեր աղուոր բեմին վրայէն կը խօսիք: Բայց այն ատեն ալ միշտ կը գիտնամ թէ ինչ բանի վըրայ պիտի խօսիք, այնպէս որ բնաւ չեմնեղուիր: (Տիկին Արպըթնըդը կը տեսնէ): Ա՛հ, սիրելի Տիկին Արպըթնըդ, եկէք մեղի միացէք, եկէք սիրելիս: (Տիկին

Արպըթնըդ կու գայ): Ճէրըլտ շատ երկար խօսակցութիւն մը ունեցած է Լորտ Իլինուօրթին հետ: Վստահ եմ որ շատ հպարտ կ'զգաք ինքզինքնիդ որ իրեն համար այնքան նպաստաւոր կերպով վերջացած է ամէնքան: Եկէք նստինք: (Կը նստին): Զեր գեղեցիկ ասեղնագործութիւնը ի՞նչպէս կ'երթայ կոր:

Տիկին Արպըթնըդ. — Միշտ կ'աշխատիմ, Լէյտի Հընոթէնտըն:

Լէյսի Հընսրէնտըն. — Տիկին Տօպէնին ալ քիչ մը կ'ասեղնագործէ, այնպէս չէ:

Արեւերէցը. — Ատեն մը շատ ճարտար էր ասեղնագործութեան մէջ, Տօրքասի մը չափ, բայց կաթուածը իր մատները անդամալուծած է: Ինը կամ տասը տարիէ ի վեր՝ շրջանակ կարկանին ձեռք չէ դպցուցած: Բայց ուրիշ շատ մը ժամանցներ ունի ան: Շատ կը զբաղի իր առողջութեամբը:

Լէյսի Հընսրէնտըն. — Ահ, ատիկայ միշտ լաւ ըզբաղում մըն է, այնպէս չէ: Այժմ, ի՞նչ բանի վրայ կը խօսիք, Լորտ Իլինուօրթի: Լսէք մեզի:

Lors Իլինուօրթի. — Ես Ճէրըլտին բացատրելու վըրայ էի թէ աշխարհքը միշտ ծիծաղած էիր ողբերգութիւններուն վրայ, ատիկա միակ միջոցն է զանոնք կարենալ տամնելի ընելու համար: Եւ թէ ինչ բան որ աշխարհքը լուրջ կը նկատէ՝ անիկա կատակերգութեան ասախին կը պատկանի միայն:

Լէյսի Հընսրէնտըն. — Հիմակ այլես ինքզինքն դուրս կ'ելլամ: Սովորաբար այսպէս կ'ըլլամ երբ Լորտ Իլինուօրթի կը խօսի: Եւ մարդկային ընկերութիւնը շատ անհոգ է: Անոնք երբեք չեն ազատեր զիս: Կը թողուն որ խեղդուիմ: Տարտամ կարծիք մը ունիմ, սիեելի Լորտ Իլինուօրթի, թէ միշտ մեղաւորներուն

Կողմը կը բռնէք դուք, իսկ ես ալ միշտ կը ջանամ սուրբերուն կողմը բռնել, բայց միայն այդքանը կրնամ ընել: Վերջապէս, կրնայ ըլլալ որ ատիկայ խեղզուելու վրայ եղող անձի մը երեւակայութիւնը ըլլայ միայն:

Լօրս իլինուօրին.— Միակ տարբերութիւնը սուրբին կամ մեղաւորին միջև այն է թէ՝ ամէն սուրբ անցեալ մը ունի, և ամէն մեղաւոր ապագայ մը:

Լեյսի Հընսրենըն. — Ահ, այլեւս չափը անցաւ ինծի համար: Բառ մը չունիմ ըսելիք: Դուք և ես, սիրելի տիկին Արպըթնըդ, այս դարուն չնոք պատշաճը: Զենք կրնար լորտ իլլինուօրթի խօսակցութեան հետեւել: Կը վախնամ որ շատ հոգ տարուած է մեր գաստիարակութեանը: Եւ կրթուած ըլլալը՝ ետ մնալ է, հիմակուան ատենները: Ատով մարդ շատ բաներէ կը զրկուի:

Տիկին Արպըթնըդ.— Պիտի ցաւէի եթէ լորտ իլլինուօրթի ուեէ մէկ գաղափարին հետեւէի:

Լեյսի Հընսրենըն. — Շատ իրաւունք ունիք, սիրելիս:

(Ճէրըլտ ուսերը կը թօթուէ և ջղաղրգութեամբ մօրը կը նայի: Լէյտի Գարօլին ներս կը մտնէ:)

Լեյսի Գարօլին. — Ճէ՛յն, տեղ մը ձօնին հանչ գիպեցա՞ր:

Լեյսի Հընսրենըն. — Պէտք չէ հոգ ընես իր մասին սիրելիս: Լէյտի Սթըղֆիլտին հետ ան, քիչ մը առաջ տեսայ զերենք գեղին հիւրանոյինմէջ: Իրարու հետ շատ երջանիկ կ'երեւէին: Զես երթար կոր Գարօլին, այնպէս չէ: Խնդրեմնստէ:

Լեյսի Գարօլին. — Կարծեմ աւելի լաւ կ'ըլլայ եթէ ձօնը փնտուելու երթամ:

(Լէյտի Գարօլին կը մեկնի:)

Լեյսի Հընսրենըն.— Լաւ բան չէ որ այրերուն այդքան ուշաղրութիւն ընծայուի: Եւ Գարօլին ալ ատճառ մը չունի այդքան հոգ ընելու համար: Լէյտի Սթըղֆիլտ շատ համակրելի է: Ամէն տհսակէտով համակրելի է: Հիանալի բնաւորութիւն մը ունի:

(Սըր ձօն և Տիկին ելլնպի ներս կը մտնէն:) Ահ, ահաւասիկ սըր ձօնը, և Տիկին ելլնպիին հետ: Այժմ յիշեցի թէ Տիկին ելլնպիին հետ էր որ տհսալ զինքը: Սըր ձօն, Գարօլինը ամէն կողմ ձեզ կը փնտոէ:

Տիկին ելլնպի.— Իրեն կ'սպասէինք երաժըշտութեան սրահին մէջ, սիրելի լէյտի Հընսրէնտըն:

Լեյսի Հընսրենըն.— Ահ, երաժշտութեան սրահը անշուշտ: Ես ալ գեղին սենեակը կարծեցի, յիշողութիւնս այնքան պակսած է որ: (Արքերէցին): Տիկին Տօպէնին հիանալի յիշողութիւն մը ունի, այնպէս չէ:

Արեւեկցը.— Հիանալի յիշողութիւն մը ունէր, բայց եր վերջին տագնապէն ի վեր՝ գրեթէ իր աղայութեան պատահարները կը յիշէ սիրայն: Բայց շատ հաճոյք կ'ըզգայ այդ հին յիշատակները վերաիշելով:

(Լէյտի Սթըղֆիլտ և պարոն Քէլվի ներս կը մտնէն):

Լեյսի Հընսրենըն.— Ահ, սիրելի լէյտի Սթըղֆիլտ, Պրն. Քէլվիը ինչ բանի վրայ խօսեցաւ ձեզի հետ:

Պիմէթալիզմի վրայ, որքան որ կ'ընամ յիշել:

Լեյսի Հընսրենըն.— Պիմէթալիմ: Ատիկու միթէ շա՞տ աղուոր նիւթ մըն է: Թէև, մարդիկ այժմ ամէն բանի վրայ աղատորէն կը վիճաբանին: Իսկ Սըր ձօնը՝ ինչ բանի վրայ խօսեցաւ ձեզի հետ, սիրելի Տիկին ելլնպի:

Տիկին ելլնպի.— Բաթաքօնեաի վրայ:

Լեյսի Հընսրենըն.— Իրա՞ւ: Ի՞նչ օտարուաի նիւթ:

Բայց շատ շահեկան էր անտարակոյս:

Տիկին էլլնպի.—Բաթաքօնեաի մասին խօսած՝
ները շատ հետաքրքրական էին: Այնպէս կ'երեւի թէ
վայրենիները՝ ճիշդ զարգացած մարդոց տեսութիւնները
ունին գրեթէ ամէն բանի մասին: Զափազանց յա-
ռաջադիմած են անոնք:

Լեյսի Հընսրենտըն.—Ի՞նչ կ'ընեն:

Տիկին էլլնպի.—Երեւցածին նայելով ամէն բան:

Լեյսի Հընսրենտըն.—Սիրելի Արքերէց, միթէ շատ
գոհունակութիւն չի՞ պատճառեր մարդկային բնու-
թեան անփոփոխ ըլլալ:—Ամէն բանի մէջ աշխարհքը
նոյն աշխարհքն է, այնպէս չէ:

Լօրս Խլինուօրին.—Աշխարհք պարզապէս երկու
դասակարգի բաժնուած է—անոնք որ անհաւատալիին
կը հաւատան, ժողովուրդին նման — և անոնք որ
անօրինակ բաները կ'ընեն....

Տիկին էլլնպի.—Չե՞զի պէս:

Լօրս Խլինուօրին.—Այո՛, միշտ ինքոյնքիս վը-
րայ կը զարմանամ: Միակ բանն է որ կեանքը տա-
նելի կ'ընէ:

Լեյսի Սրբդիլս.—Եւ դուք զձեղ զարմացնող ի՞նչ
բան ըրած էք վերջիրո:

Լօրս Խլինուօրին.—Շատ մը գեղեցիկ յատկու-
թիւններ երեւան կը հանեմ իմ բնութեանս մէջ:

Տիկին էլլնպի.—Ոհ, շատ կատարեալ մի ըլլաք
մէկէնիմէկ: Աստիճանաբար յառաջ դացէք:

Լօրս Խլինուօրին.—Երբեք նպատակ չունիմ կա-
տարեալ ըլլալու: Գոնէ այնպէս կը յուսամ թէ կատար-
եալ չը պիտի ըլլամ: Շատ անպատեն բան պիտի ըլլար
այդ: Կիները մեզ կը սիրեն մեր թերութիւններուն
համար: Եթէ բաւական ունենանք անոնցմէ՝ անոնք

ամէն բան պիտի ներեն մեզի, նոյն իսկ մեր ունեցած
կարծիքը իրենց մասին:

Տիկին էլլնպի.—Շատ կանխակալ է կարծել թէ
մենք ներողամիտ կը գտնուինք մեզ վերուժողնե-
րուն: Մինք կը ներենք մեզ պաշտողներուն: Ատիկայ
արդէն բաւական մեծ բան մըն է մեզմէ ակնկալիլը:
(Լօրտ Ալֆրէտ ներս կը մտնէ և Լեյտի Սթըդիլտին
կը մտենայ):

Լեյսի Հընսրենտըն.—Ա՛հ, մենք կիներս ամէն բանի
ներեւ պէտք ենք, պէտք չէ՞ որ այնպէս ընենք, սիրելի
Տիկին Արպլթնըդ: Վատահ եմ որ ատոր մէջ ինծի հա-
մաձայն էք:

Տիկին Արպլթնըդ.—Համաձայն չեմ, Լեյտի Հընս-
թէնտըն: Կարծեմ թէ շատ բաներ կան որ կիները պէտք
չէ որ ներեն:

Լեյսի Հընսրենտըն.—Ի՞նչ տեսակ բաները:
Տիկին Արպլթնըդ.—Այրերուն՝ ուրիշ կոոչ մը
կեանքը քայքայելնին: (Եւ յամբարար բեմին խորը կը
քաշուի):

Լեյսի Հընսրենտըն.—Ա՛հ, այդ բաները շատ տիսուր
են անտարակոյս, բայց կարծեմ հրանտիկ հաստատու-
թիւններ կան ուր այդ տեսակ մարդիկը կը նայուին և
կը բարելաւուին: Նաև կարծեմ թէ ամէն բան լրջօրէն
չառնելը կեանքին գաղտնիքն է:

Տիկին էլլնպի.—Կեանքի գողտնիքն է երբեք չու-
նենալ այնպիսի յուղում մը որ չի վայլեր մարդուս դէմ-
քին:

Լեյսի Սրբդիլս.—Կեանքի գաղտնիքն է գոհա-
ցուցիչ սոսկալիօրէն խարուած ըլլալուն հաճոյքը:

Քէլլիլ.—Կեանքի գաղտնիքն է փորձութեան դի-
մաղբելը, Լեյտի Սթըդիլտիւ:

Լօրս իլինուօրին.—Կեանքի գաղտնիք չկայ: Կեանքին նպատակը՝ եթէ ունի նպատակ՝ պարզապէս միշտ փորձութիւններու հետամուտ ըլլալն է: Գրեթէ շատ փորձութիւններ չկան: Երբեմն ամբողջ օր մը կ'անցնիմ առանց ոչ իսկ մէկ փորձութեան հանդիպելու: Շատ սոսկալի է այս: Ասիկայ մարդս այնքա՞ն կը ջղայնացնէ ապագան խորհելով:

Լէյսի Հընսրենըն: — (Իր հովահարը անոր շարժելով): Զը գիտեմ թէ ինչպէս, սիրելի Լօրտ իլինուօրթէ այսօրուան ձեր բոլոր ըսածներն ալ ծայրայեղօրէն անբարոյական կ'երեւին ինձ: Բայց շատ հետաքրքրական էր ձեզ մտիկ ընկլը:

Լօրս իլինուօրին.—Ամէն մտածում անբարոյական է: Իր բուն իսկ ոգին քանդել է: Եթէ բանի մը վրայ խորհիք, զայն կը մեռցնէք: Եւ ոչ մէկ բան կը վերապրի երբ անոր վրայ շատ խորհիս:

Լէյսի Հընսրենըն: — Բառ մըն ալ չեմ հասկընար, Լորտ իլինուօրթէ: Բայց տարակոյս չունիմ որ ամբողջ ձշմարիտ է: Ես անձնապէս, շատ քիչ մեղադրելի եմ, խորհելու տեսակէտով: Չեմ հաւատար որ կիները շատ խորհող կ'ըլլան: Կիները պէտք է չափաւոր ըլլան իրհնց մտածումներուն մէջ, ինչպէս որ պէտք է չափաւոր ըլլան իրենց գործերուն մէջ:

Լօրս իլինուօրին.— Չափաւորութիւնը չարաշուք բան մըն է, Լէյտի Հընսթէնարն և ոչ մէկ բան այն-քան կը յաջողի որքան ծայրայեղութիւնը:

Լէյսի Հընսրենըն: — Կը յուսամթէ միտքս պիտի կարենամ պահել ատիկայ: Հիտնալի խորհրդածութիւն մը կը թուի ան: Բայց կ'սկսիմ ամէն բան մոռանալ: Մեծ դժբախտութիւն մըն է այդ:

Լօրս իլինուօրին.— Ատիկա Զեր ամէնէն հրապու-

թիչ յատկութիւններէն մին է, Լէյտի Հընսթէնարն և ոչ մէկ կին պէտք է յիշողութիւն ունենայ: Յիշուղութիւնը՝ կնոջ մը քով, արդուղարդի զանցառութեան սկզբնաւորութիւնն է: Մարդ կնոջ մը գգակը միայն տեսնելով, միշտ կարող կ'ըլլայ ըսել թէ ան յիշողութիւն ունի՞ թէ ոչ:

Լէյսի Հընսրենըն: — Որքա՞ն սիրուն էք, լօրտ իլինուօրթէ: Միշտ այնպէս կը գտնէք թէ մարդու սամենէն աչքի զարնող թերութիւնը՝ անոր սամենակարեւոր առաքինութիւնն է: Կեանքի մասին շատ մխիթարական տեսութիւններ ունիք գուք:

(Թուրքուհար ներս կուգայ):

Ֆուրեխուար.— Տօքթ. Տօպէնիին կառքը եկած է: Լէյսի Հընսրենըն: — Սիրելի Արքերէցս ժամը տասն ու կէսն է միայն:

Արքերէցը.— (Վեր ելլելով:) Կարծեմ թէ պէտք է որ երթամ, Լէյտի Հընսթէնարն: Երեշշաբթին միշտ Տիկին Տօպէնիին գէշ գիշերներէն մին է:

Լէյսի Հընսրենըն: — (Վեր ելլելով) Լաւ, ձեզ պիտի զրկեմ իրմէ: (Անոր հետ դէպի դուռը կ'երթայ:) Ֆուրքուհարին ըսած եմ որ զոյգ մը կաքաւ դնէ կառքին մէջ: Տիկին Տօպէնին կրնայ ըլլալ որ փափաքի անոնց:

Արքերէցը.— Շատ աղնիւ էք, բայց Տիկին Տօպէնին կարծր բաներ չուտեր այլեւս: Միայն անուշեղէնով կը սնանի: Բայց զարմանալիօրէն զուարթ է ան և ոչ մէկ բանի մասին չի դանգատիր:

(Լէյտի Հընսթէնարնի հետ գուրս կ'ելլէ:)

Տիկին Ելլենպի: — (Լօրտ իլինուօրթէի մօտ երթալով:) Այս գիշեր հիանալի լուսին մը կայ:

Լօրս իլինուօրին: — Դիտելու երթանք, շատ հա-

Ճելի է դիտելը բան մը որ անյարատեւ է հիմակուան առաենները:

Տիկին Ելքնպի.—Ատիկայ ճեր իսկ հայելին է :

Լօրտ Իլինուօրին.—Շատ չար էք: Անիկա միայն իմ կնծիռներս կը ցուցնէ:

Տիկին Ելքնպի.—Իմ աւելի լաւ կը վերաբերի ինձ հետ: Բնաւ ճշմարտութիւնը չըսեր ինծի:

Լօրտ Իլինուօրին.—Ուրեմն ան ճեղի սիրահար ւած է :

(Սըր Ճօն, Լէյտի Սթըդֆիլտ, Պրն, Քէլվիլ, և Լօրտ Ալֆրէտ դուրս կ'ելլեն:)

Ճերը (Լօրտ Իլինուօրթհին): Ես ալ գա՞մ:

Լօրտ Իլինուօրին.—Եկուր սիրելի տղաս: (Դէպի գուռը կ'երթայ Տիկին Ելքնպիին և Ճէրըլտին հետ):

(Լէյտի Գարոլին ներս կուգայ, տճապարանօք շուրջը կը նայի և հակառակ ուղղութեամբ դուրս կ'ելլէայն կողմէն որ Սըր Ճօնը և Լէյտի Սթըդֆիլտը մնկնած են):

Տիկին Արագրնըր. — Ճէրըլտ:

Ճերը (— Ի՞նչ է . մայր :

(Լօրտ Իլինուօրթն և Տիկին Ելքնպի դուրս կ'ելլեն:)

Տիկին Արագրնըր. — Ուշ է : Տուն երթանք:

Ճերը (— Սիրլի մայրս, քիչ մըն ալ կենանք, լորտ Իլինուօրթնը այնքան հաճելի է, և յետոյ մայր, մեծ անակնակ մը ունիմ ճեղի համար : Այս ամսուան վերջերը ճամբայ պիտի ելլեն Հընդկաստան երթալու համար :

Տիկին Արագրնըր. — Տուն երթանք:

Ճերը (— Քանի որ այդքան կ'ուզէք կ'երթանք անշուշտ, բայց նախ Լօրտ Իլինուօրթհին պէտք է հրաժեշտ առնեմ : Հինգ վայրկեանէն կը վերադառնամ (Կը մեկնի):

Տիկին Արագրնըր. — Թող բաժնուի ինձմէ եթէ այնպէս կ'ուզէք, բայց անոն հետ չերթայ... Ո՛չ անոր հետ . չեմ կրնար հանդուրժել ատոր : (Վեր վար կը քալէ): (Էսթըր ներս կը մտնէ):

Տիկին Արագրնըր. — Ես լսեցի ճեր ըսածը : Համաձայն եմ անոր Օրիորդ Ուըրսլի:

Էսթըր. — Զէի գիտեր որ լսեցիք: Բայց գիտէի թէ ինծի համամիտ պիտի գտնուիք: Կին մը որ մեղանչած է պէտք է պատժուի, այնպէս չէ՞ :

Տիկին Արագրնըր. — Այո՛ :

Էսթըր. — Պէտք չէ թոյլատրել անոր որ բարի

մարդոց ընկերութեան մէջ մտնէ :

Տիկին Արագրնըր. — Պէտք չէ թոյլատրել :

Էսթըր. — Եւ մեղանչող էրիկ մարդն ալ պէտք չէ

որ նոյն կերպով պատժուի:

Տիկին Արագրնըր. — Նոյն կերպով: Եւ տղաքը,

եթէ ըլլան տղաք, նոյն կերպով պէտք է պատժուին :

Էսթըր. — Այո՛, ճիշտ կ'ըլլայ եթէ ծնողացը յան-

ցանքը տղաքն ալ քաւեն: Այդ արդար օրէնք մըն է +

Աստուծոյ օրէնքն է ան:

Տիկին Արագրնըր. — Աստուծոյ սոսկալի օրէնքնե-

րէն մին է ան: (Դէպի կրակարանին կողմը կ'երթայ):

Էսթըր. — Կը ցաւի՞ք ճեր որդուոյն ճեղմէ հեռանա-

լուն համար, Տիկին Արագրթնըդ :

Տիկին Արագրնըր. — Այո՛:

Էսթըր. — Գո՞չ էք Լօրտ Իլինուօրթհին հետ մեկ-

նելուն համար: Անշուշտ դիրք և դրամ պիտի ունենայ-

անտարակոյս, բայց դիրքը և դրամը ամէն բան չեն,

այնպէս չէ՞ :

Էսթըր. — Ի՞նչ դեղեցիկ դիշեր մըն է, Տիկին Ար-

ագրթնըդ :

Տիկին Արագրնըր. — Այնպէ՞ս է :

Էսքըր. — Տիկին Արագըթնըդ, կը փափաքիմ թոյց-
լատրէք որ բարեկամաննք իրարու հետ: Դուք այն-
քա՞ն տարբեր էք հոս գտնուող միւս կիներէն: Երբ
այս իրիկուն հիւրանոցէն ներս մտաք ձեզի հետ բե-
րիք ինչ որ կայ բարի և անբիժ, կետնքի մէջ: Ես
յիմարութեամբ վարուեցայ: Բաներ կան որ պէտք է
ըսել՝ բայց անոնք երբեմն կ'ըսուին տնպատեհ ատեն
մը և անյարմար մարդոց:

Տիկին Արագըթնըդ. — Անոնք ոչինչ են, դժբախ-
տութիւն կը բերեն միայն:

Էսքըր. — Ուրեմն ինչո՞ւ թոյլ կուտաք որ ձեր
որդին մեկնի անոր հետ:

Տիկին Արագըթնըդ. — Ինքն է որ այնպէս կը փա-
փաքի:

Էսքըր. — Բայց եթէ պահանջէք իրմէ կը կենայ,
այնպէս չք:

Տիկին Արագըթնըդ. — Միտքը գրած է երթալ:

Էսքըր. — Ան ուեւէ բան չպիտի կարենար մեր-
ժել ձեզի: Չեզ շատ կը սիրէ: Խնդրեցէք իրմէ որ կե-
նայ: Երթամ ձեզի զրկեմ զինքը, այս վայրկեանիս
պատշգամին վրայ կը գտնուի Լօրտ իլինուօրթէին
հետ, իրենց խնդալը իմացայ երաժշտութեան սրահէն
անցած ատենս:

Տիկին Արագըթնըդ. — Մի նեղուիք Օրիորդ Ուըրսլի:
Կրնամ սպասել: Կարեւորութիւն չունի:

Էսքըր. — Ոչ, պիտի ըսեմ իրեն որ զինքը կ'ուզէք:
Հսէք... Հսէք իրեն որ կենայ: (Էսթըր կը մեկնի):

Տիկին Արագըթնըդ. — Չպիտի գայ... Գիտեմ թէ
չպիտի գայ:

(Էջտի Գարօլին ներս կը մտնէ: Անձկանօք շուրջը
կը նայի: Ճէրըլտ կու գայ):

Լէյտի Գարօլին. — Պըն. Արագըթնըդ, կրնամ ձեզի
հարցնել թէ Սըր ձօն պատշգամին վրա՞յ է:

Ճէրըլտ. — Ոչ, Լէյտի Գարօլին, պատշգամին վրայ
չէ:

Լէյտի Գարօլին. — Շատ զարմանալի է, իր ելնե-
լու ատենս է:

(Լէյտի Գարօլին կը մեկնի):

Ճէրըլտ. — Սիրելի մայր, վախնամ ձեզ սպասցուցի:
Մոռցայ բոլորովին: Այնքա՞ն երջանիկ եմ այս գիշեր,
մայր, այսքան երջանիկ եղած չէի երբեք:

Տիկին Արագըթնըդ. — Երթալու հեռանկարչօն:

Ճէրըլտ. — Այդպէս մի մեկնէք, մայր: Անշուշտ կը
ցաւիմ ձեզմէ բաժնուելու: Ինչու որ լաւագոյն մայրն
էք ամբողջ աշխարհիս մէջ: Բայց վերջապէս, ինչպէս
որ Լօրտ իլինուօրթն կ'ըսէ, անկարելի է Ռօքլիի պէս
տեղ մը ապրիլ: Դուք հողերնիդ չէք ըներ, բայց ես
փառասէր եմ, ես անկէց աւելի բան մը կ'ուզէմ: Ապա-
գայ մը ունենալ կ'ուզեմ: Կ'ուզեմ ընել այնպիսի բան
մը որ ինձմով հպարտ զգաք ինքզինքնիդ, և Լօրտ
իլինուօրթն պիտի օգնէ ինծի: Ինծի համար ամէն բան
պիտի ընէ ան:

Տիկին Արագըթնըդ. — Ճէրըլտ. Լօրտ իլինուօրթին
հետ մի երթար: Կ'ուզեմ քեզի որ չերթաս: Ճէրըլտ,
կը խնդրեմ քեզմէ:

Ճէրըլտ. — Մայր, որքան փոփոխական էք: Ինչ մը-
տադրութիւն ունենալնիդ դուք ալ չէք զիտեր: Մէ-
կուկէս ժամ առաջ, հիւանդանոցին մէջ՝ ամէն բանի
համաձայնեցաք: Հիմայ միտքերնիդ կը փոխէք և ա-
ռարկութիւններ կ'ընէք, և կը ջանաք ինձ ստիպել որ
հրաժարիմ կեանքիս մէջ ունեցած իմ միակ բախտէս:
Այո՛, իմ միակ բախտէս: Չէք ենթագրեր անշուշտ որ

Լօրտ Իլինուօրթհի պէս մարդիկ ամէն որ կրնան զբոնուիլ, այնպէս կը կարծէք, մայր ։ Շատ զարմանալի՞ էր երբ այսքան հիանալի բախտի մը առջեւ կը գըտնուիմ՝ ճամբուս վրայ դժուարութիւններ յարուցանող միակ անձը իմ բուն մայրս ըլլայ ։ Յետոյ, զիտէք, մայր որ էսթըր Ուըրսլին կը սիրեմ։ Ո՞վ կրնար չը սիրել զինքը։ Զեղի խոստովանածէս շատ, շատ տւելի կը սիրեմ զինքը։ Եւ եթէ դիրք մը ունենամ, եթէ ունենամ ապագայ, կրնամ... կրնամ ինդրել... Այժմ չէ՞ք հասկնար մայր, թէ ինչ ըսել է ինձի համար Լօրտ Իլինուօրթհին քարտուղարը ըլլալը։ Այսպէս գործի սկսիլը առաջքդ պատրաստ ապագայ մը ունենալ ըսել է... Ապահով անոր սպասելով միայն։ Եթէ Լօրտ Իլինուօրթհի քարտուղարը ըլլալը՝ կրնամ էսթըրէն խնդրել որ իմ կինս ըլլայ, Բայց իր դրամատան մը խեղճռւկ քարտուղարը, տարեկան հարիւր ոոկիով՝ ամբարտաւանութիւն պիտի ըլլար այդ։

Տիկին Արագրբնրդ. — Կը վախնամ որ պէտք չէ յոյսեր ունենաւ Օրփորդ Ուըրսլիի վրայ։ Կեանքի մասին իր տեսութիւնները զիտեմ ես։ Ճիշտ հիմայ պարզեց ինձի։ (Լոռութիւն մը),

Ճերլիս. — Ուրեմն գոնէ իմ փառասիրութիւնս կը մնայ ինձ։ Այդ ալ բան մըն է...։ Ուրա՛խ եմ զայն ունենալուս։ Դուք միշտ ջանացած էք, փշրել իմ փառասիրութիւնս մայր... Այնպէս չէ՞ք ըրած։ Ինձի ըսած էք որ աշխարհը գէշ է, թէ յաջողութիւն ունենալ չարժեք, թէ ընկերութիւնը թեթև է, և շատ մը այդ տեսակ բաներ... Լաւ, ես չեմ հաւատար մայր։ Կը կարծեմ թէ աշխարհքը հիանալի պէտք է ըլլայ, կը կարծեմ թէ ընկերութիւնը սքանչելի պէտք է ըլլայ։ Կարծեմ թէ կ'արժէ յաջողութիւն ունենալ։ Բոլոր ինձի

սորվեցուցած բաներնուղ մէջ սխալած էք, մայր, շատ սխալած։ Լօրտ Իլինուօրթհի յաջողած մարդ մըն է, ընկերական մարդ մը. մարդ մը որ ընկերութեան մէջ և անոր համար կ'ապրի։ Լաւ, ամէն բան կու տայի ճիշգ Լօրտ Իլինուօրթհին պէս ըլլալու համար։

Տիկին Արագրբնրդ. — Պիտի նախընտրէի քեզ մեռած տեսնել անմիջապէս։

Ճերլիս. — Մայր, ի՞նչ է պատճառը ձեր հակառակութեան Լօրտ Իլինուօրթհի դէմ։ Բաէք ինձ... անկեղծօրէն ըսէք, ի՞նչ է ան։

Տիկին Արագրբնրդ. — Գէշ մարդ մըն է ան։

Ճերլիս. — Ի՞նչ կերպով գէշ։ Չեմ հասկնար թէ ի՞նչ ըսել կ'ուզէք։

Տիկին Արագրբնրդ. — Պիտի ըսեմ քեզի։

Ճերլիս. — Կ'անթաղբեմ թէ զինքը գէշ կը նկատէք ինչու որ ան չի հաւատար այն բաներուն գուշ կը հաւատաք, էրիկ մարդիկ կիներէն տարբեր են, մայր։ Բնական է որ անոնք տարբեր տեսութիւններ ունենան։

Տիկին Արագրբնրդ. — Լօրտ Իլինուօրթհին ինչ բանի հաւատալը կամ չի հաւատալը չէ որ զինքը գէշացուցած է, այլ իր գէշ ըլլալէն։

Ճերլիս. — Մայր, բան մը գիտէք իր մասին։ Բան մը որ ճշմարտապէս գիտէ՞ք։

Տիկին Արագրբնրդ. — Այո՛, բա՞ն մը որ գիտեմ։ Ճերլիս. — Բան մը որուն վրայ շա՞տ վստահ էք։

Տիկին Արագրբնրդ. — Շատ վստահ։

Ճերլիս. — Որքա՞ն տաենէ ի վեր գիտէք։

Տիկին Արագրբնրդ. — Քան տարիէ ի վեր։

Ճերլիս. — Ճիշտ բան մըն է ուեէ մարդու մը անցեալէն քսան տարի ետ երթալը։ Դուք և ես ինչ գործ ունինք լօրտ Իլինուօրթհի առաջուան կեանքին հետ։ Մերին գործը չէ ան։

Տիկին Արագրբնդ .— Ինչ որ եղած է այս մարդը անցեալին մէջ , հիմայ ալ նոյնն է , պիտի ըլլայ միշտ :

Ճերլիս .— Մայր , ըսէք ինձի ինչ որ ըրած է լորտ Իլինուօրթի : Եթէ ամօթալի բան մը ըրածէ՝ իր հետը չը պիտի երթամ : Դուք զիս շատ լաւ կը ճանչնաք :

Տիկին Արագրբնդ .— Ճէրլըլտ , քովս եկուր : Շատ մօտիկս , ինչպէս որ կ'ընէիր շատ պզտիկ աղայ մը եղած ատենդ , երբ միայն մօրդ տղան էիր : (Ճէրլըլտ գետինը կը նստի իր իր մատները կը սահեցնէ անոր մտզերուն մէջէն , և անոր ճեռքերը կը շոյէ :) Ճէրլըլտ , ժամանակաւ աղջիկ մը կար , շատ դեռատի էր ան , տասնըութը հազիւ լրացուցած էր երբ Ճօրճ Հարֆօրտ — այդ էր լորտ Իլինուօրթի անունը այն ատեն — Ճօրճ Հարֆօրտ հանդիպեցաւ իրեն : Ան կեանքի մասինբան մըն ալ չէր գիտերի : Ճօրճ ամէն բան գիտէր : Ինքզինքը սիրցնել տուաւ այդ աղջկանը : Այնքան շատ սիրցընել տուաւ ինքզինքը որ աղջիկը իր հօրը տունէն հեռացաւ իրեն հետ , առաւօտ մը : Այնքան կը սիրէր զայն , և ան խոստացած էր ամուսնանալ իրեն հետ : Լրջօրէն խոստացած էր ամուսնանալ և ան հաւտացած էր անոր : Շատ դեռատի էր , և... անզիտակ թէ ինչ էր կեանքը իրականին մէջ , Բայց Ճօրճ կը յետաձգէր ամուսնութիւնը շաբաթէ շաբաթ , և ամիսէ ամիս... բայց աղջիկը միշտ կը վստահէր անոր , ինչ որ կը սիրէր զայն... : Իր զաւակը ծնելէն առաջ — ինչու որ զաւակ մը պիտի ունենար — տղաչեց անոր որ ամուսնայ իրեն հետ , մանկիկին սիրոյն համար որպէսզի անուն մը ունենայ ան , որպէսզի իր մեղքը անմեղ մանկիկին վրայ ալ չի ծանրանայ : Ան մերժեց : Մանկիկը ծնելէն ետքը ան թողուց Ճօրճը տղան հետը առնելով , ասանկով իր կեանքը քայլացաւ :

Քայքայուեցաւ : Նաև ինչ որ կար իր մէջը՝ անուշ , բարի և անբիծ ամէնքն ալ քայքայուեցան : Սոսկալի տառապեցաւ... և տակաւին կը տառապի : Եւ միշտ պիտի տառապի : Իրեն համար ուրախութիւն չկայ , ոչ խաղաղութիւն , ոչ քաւութիւն : Ան կին մըն է որ իր ետեւէն շլթայ մը կը քաշքըչէ յանցապարտ բանի մը պէս : Դիմակ մը հագած կին մըն ան , կարծես բորոտ է : Խորոյկը չէ կարող մաքրել զինքը : Զուրերը չեն կրնար մարել իր անձկութիւնը : Եւ ո՛չ մէկ բան կը նայ զինքը ամոքել , ոչ մէկ քնարեր կրնայ իրեն քուն պարզեւել , և ոչ ալ թմրեցուցիչ բոյսեր կրնան իրեն մոռացումտ ալ... : Ան կորսուած է : Ան կորսուած հոգի մըն է... : Ատոր համար է որ Լորտ Իլինուօրթի գէշ մարդ մը կը կոչեմ : Այդ է պատճառը չուզելուս որ իմ տղաս անոր հետ ըլլայ :

Ճերլիս .— Սիրելի մայրս , այդ ամէնը շատ ողբերգական կը թուի անշուշտ : Բայց կը համարձակիմ ըսկելու որ աղջիկն ալ մեղադրելի է այնքա՞ն , որքան է լորտ Իլինուօրթի... : Վերջապէս , իրապէս չնորհքով աղջիկ մը որ լաւ զգացումներ կը կրէ՝ պիտի մեկնէ՞ր իր տունէն մարդու մը հետ որուն հետ ամուսնացած չէր , և ապրէր անոր հետ իբր իր կինը : Եւ ոչ մէկ չնորհքով աղջիկ պիտի ընէր ատիկայ :

Տիկին Արագրբնդ .— (Ըոռութենէ մը ետքը :) Ճէրլըլտ , ետ կ'առնեմ բոլոր իմ առարկութիւններս ալ : Ազատ ես Լորտ Իլինուօրթի հետ երթալու երբ , և ուր որ ուզես :

Ճերլիս .— Սիրելի մայր , գիտէի որ ինձ արգելք չը պիտի ըլլայիք : Դուք Աստուծոյ ստեղծած ամէնէն լաւ կինն էք , եւ գալով լորտ Իլինուօրթի , չեմ հաւատար որ ան կարող ըլլայ ուեէ վատահամբաւ և ցած

բան մը ընել։ Զեմ կրնար հաւատալ այդ իր մասին...
չեմ կրնար։

Էսքըր. — (Դուրսէն։) Զգեցէ՛ք որ երթամ, ձգեցէ՛ք։ (Էսթըր ներս կը մտնէ սարսափած, և ձէրըլտի վրայ կը վազէ ու անոր թեւերուն մէջ կը նետուի։)

Էսքըր. — Ոհ, փրկէ՛ զիս... փրկէ՛ զիս անկէ։
Ճերլիս. — Որմէ՞։

Էսքըր. — Ան զիս նախաւտեց։ Սոսկալիօրէն նախաւտեց, փրկէ՛ զիս։

Ճերլիս. — Ո՞վ։ Ո՞վ համարձակած է...։

(Լօրտ իլինուօրթն կ'երեւի բեմին ետեւի կողմէն, Էսթըր ձէրըլտի թեւերուն մէջէն ինքզինքը կ'ազատէ և զանի կը ցուցնէ։)

Ձէրըլտ (ինքզինքէն բոլորովին դուրս ելած բարկութենէն և արժանապատուութենէն։) Լօրտ իլինուօրթն, դուք նախատած էք աշխարհիս ամէնէն մաքուր արարածը, մէկը որ իմ մօրս պէս անբիծ է։ Դուք նախատած էք այն կինը որ իմ մօրս հետ աշխարհիս վրայ ամէնէն աւելի կը սիրեմ։ Աստուծոյ անուամբ պիտի միացնեմ ձեզ։

Տիկին Արարենրդ. — (Վազելով և զայն բըռնելով։) Բէ, ո՞չ։

Ճերլիս. — (Ետ ժղելով զինքը։) Մի բոնէք զիս, մայր։ Արգելք մի ըլլաք... պիտի մեղոնեմ զինքը։

Տիկին Արարենրդ. — Ձէրըլտ։

Ճերլիս. — Թողէ՛ք որ երթամ, կ'ըսեմ ձեզի։

Տիկին Արարենրդ. — Կեցի՛ր, ձէրըլտ, կեցի՛ր... Անքու բուն հայրդ է...։

(Ձէրըլտ մօրը ձեռքերը ուժով մը կը սեղմէ, և անոր ետեւը կը նայի։ Խսկ մայրը կամաց կամաց կը սահի ամօթահար։ Էսթըր կամացուկ մը դուռնէն

դուրս կը սպրդի։ Լօրտ իլինուօրթ կը խոժոսի և իր ըշթունքը կը խածնէ։ Քիչ մը ժամանակ ետքը ձէրըլտ իր մայրը վեր կը վերցնէ և իր թեւով շրջապատելով զանի սենեակէն դուրս կ'առաջնորդէ։

Վերջ երրորդ արարուածին

ԶՈՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Տեսարան. — Տիկին Արարեթնըդի տան նստելու սենեակը։ Ետեւի կողմը Փրանսական պատուհան մը Հայնօրէն բացուած պարտէզին վրայ։ Աջև ձախ կողմը դուռներ։

(Ձէրըլտ Արարեթնըդ սեղանին առջև նստած կը գրէ։)
(Աջ կողմէն Սլիս ներս կը մտնէ որուն կը հետեւի Ճէյտի Հընսթէնտըն և Տիկին էլընպի։

Ալիս. — Ճէյտի Հընսթէնտըն և Տիկին էլընպի։
(Զախէն դուրս կ'ելլէ)։

Լէյտի Հընսրենըն. — Բարի լոյս, ձէրըլտ։

Ճերլիս. — (Ոտքի ելլելով)։ Բարի լոյս, Լէյտի Հընսթէնտըն, բարի լոյս տիկին էլընպի։

Լէյտի Հընսրենըն. — (Նստելով)։ Եկանք սիրելի մօրդ վրայ տեղեկութիւն առնելու համար, ձէրըլտ, կը յուսամթէ աւելի լաւ է։

Ճերլիս. — Մայրս աակաւին վար չէ իջած, Լէյտի Հընսթէնտըն։

Լէյտի Հընսրենըն. — Ահ, կը կասկածիմ թէ տաքը շատ եկաւ երէկ զիշեր, կ արծեմ փոթորիկ կար օդին մէջ։ Կամ թերեւս երաժշտութենէն էր։ Երաժշտութիւնը մարդս այնքան վիպային կ'ընէ — զոնէ միշտ մարդուս ջրդերուն վրայ կ'ազդէ։

Տիկին էլընպի. — Երկուքս ալ նորէն նոյն բաներն ենք, արդի ժամանակները։

Լեյսի Հընսրէնըրն. — Շատ ուրախ եմ որ չեմ հասկնար թէ ինչ ըսել կ'ուզէք սիրելիս։ Վախնամ գէշ բան մը ըսել կ'ուզես։ Ոչ, կը տեսնեմթէ տիկին Արպըթնըդին գեղեցիկ սենեակը կը քննես։ Դեղեցիկ և հնօրեայ չէ ան։

Տիկին Ելրնպի. — (Իր ձախ ակնոցին մէջէն սենեակը աչքէ անցնելով)։ Անգլիական երջանիկ տան մը երեւոյթը ունի անիկա։

Լեյսի Հընսրէնըրն. — Այդ ճիշդ բան է սիրելիս, այդ է ճիշդ նկարագրութիւնը։ Մարդ կը զգայ քու մօրդ բարի ազգեցութիւնը ամէ բանի մէջ որ զինքը կը շրջապատէ, ձէրըլտ։

Տիկին Ելրնպի. — Լօրտ իլինուօրթն կ'ըսէ թէ բուլու ազգեցութիւններն ալ գէշ են, մանաւանդ բարի ազգեցութիւնը ամէնէն գէշն է աշխարհիս վրայ։

Լեյսի Հընսրէնըրն. — Երբ Լօրտ իլինուօրթ աւելի լաւ ձանչնայ Տիկին Արպըթնըդը, իր կարքը պիտի փոխէ։ Անշուշա պէտք է որ զինքը հոս բերեմ։

Տիկին Ելրնպի. — Կ'ուզէի Լօրտ իլինուօրթնը անգլիական երջանիկ տունի մը մէջ տեսնել։

Լեյսի Հընսրէնըրն. — Այդ շատ նօզտակար պիտի ըլլար իրեն համար, սիրելիս Արդի ժամանակները՝ Լոնտոնի մէջ շատ կիներ իրենց սենեակները կը զարդարեն միմիայն օրքիտէներով, տարականներով, և գըրանսական վէպերով։

Բայց հոս կը տեսնենք քաղցր սուրբի մը սենեակը։ Թարմ բնական ծաղիկներ, դիրքեր որ և ոչ մէշ կը կը գայթակղեցնեն, նկարներ որոնց մարդ կրնայ նայիլ առանց կարմրելու։

Տիկին Ելրնպի. — Բայց ես կը սիրեմ կարմըրիլ։

Լեյսի Հընսրէնըրն. — Բայց շա'տ բան կայ ըսելիք

կարմրելու մասին, եթէ մարդ կարենայ շիկնիլ յարմար վայրկեանին։ Խեղճ սիրելի Հընսրէնտընը ինձ կ'ըսէր թէ շատ յաճախ չէի կարմըրիր, բայց այն ատեն այնքան բծախնդիր էր ան։ Զէր թողուր որ ճանչնամ իր այր բարեկամներէն և ոչ մէկը, բացի անոնցմէ որ եօթանասունը անցած էին, խեղճ Լօրտ Աշթընին պէս, որ սակայն ետքէն ամուսնալուծման գատարանը բերւեցաւ։ Շատ գժրախտ պարագայ մըն էր։

Տիկին Ելրնպի. — Կը հիանամ եօթանասունը անցած այրերուն վրայ։ Անոնք միշտ կը նուբիրեն իրենց մնացած կեանքին ամբողջ անձնուիրութիւնը։ Կարծեմ եօթանասունը իտէալ տարիքն է էրիկ մարդու մը համար։

Լեյսի Հընսրէնըրն. — Շատ անուզզայ է ան, ձէրըլտ, այնպէս չէ։ Ուրեմն, ձէրըլտ, կը յուսամ թէ սիրելի մայրդ այժմ աւելի սոէպ պիտի գայ զիս տեսնելու։ Դուն և Լօրտ իլինուօրթնը գրեթէ տնմիջապէս ճամբայ կ'ելլէք, այնպէս չէ։

Ճերլտ. — Հրաժարած եմ Լօրտ իլինուօրթնին քարտուզարը ըլլալու մտադրութինէս։

Լեյսի Հընսրէնըրն. — Իրաւ որ ո՛չ, ձէրըլտ, շատ սիրելի բան մը ըրած պիտի ըլլաս։ Ի՞նչ պատճառ կը նաս ունենալ։

Ճերլտ. — Զեմ կարծեր որ յարմար ըլլամ այդ պաշտօնին։

Տիկին Ելրնպի. — Երանի թէ Լօրտ իլինուօրթնը ինձմէ խնդրէր որ իր քարտուզարը լլայի։ Բայց կ'ըսէ թէ շատ լուրջ չեմ։

Լեյսի Հընսրէնըրն. — Սիրելիս պէտք չէ որ այդպէս խօսիս այդ տան մէջ։ Տիկին Արպըթնըդ բան մըն ալ չը գիտեր այն գէշ ընկերութեան մասին, որուն մէջ

կ'ապրինք ամէնքսալ։ Ահ չուզեր անոր մէջ մտնել։ Զափազանցբարի է ան։ Երէկ գիշեր ինծի գալը՝ մեծ պատիւ մը կը նկատեմ։ Շատ ակնածելի մթնոլորտ մը ստեղծեց երեկոյթին մէջ։

Տիկին ելրնապի. — Ահ, այդ էր պատճառը որ կարծեցիք թէ փոթորիկ կար օդին մէջ։

Լեյսի Հընսրէնըն. — Սիրելիս, ինչպէս կրնաս այդպէս ըսել։ Երկու բաներուն միջև բնաւ նմանութիւն չկայ։ Բայց իրաւ, ձէրըլտ, ի՞նչ ըսել կ'ուզես այդ պաշտօնին յարմար չեմ» ըսելով։

Ճերլս. — Կեանքի մասին Լօրտ իլինուօրթէին և իմ ունցած տեսութիւնները շատ տարբեր են իրարմէ։

Լեյսի Հընսրէնըն. — Բայց սիրելի ձէրըլտս, քու տարիքիդ մէջ պէտք չէ որ ո և է տեսութիւններ ունենաս կեանքի մասին։ Շատ անյարմար բան է այդ։ Պէտք է որ ուրիշներէն առաջնորդուիս այս բանին մէջ։ Լօրա Իլինուօրթհը քեզի ըրած է ամէնէն բաղձալի առաջարկը, և անոր հետ ճամբորդելով աշխարհը պիտի տեսնես կարելի եղած ամենալաւ պաշտպանութեան տակ, և պիտի ապրիս այնպիսի մարդոց հետ, որ քու ապագայիդ համար շատ կարեւոր է։

Ճերլս. — Զեմ ուզեր աշխարհը տեսնել։ Բաւական տեսայ զայն։

Տիկին ելրնապի. — Կը յուսամ չէք խորհիր թէ կեանքը ապրելով յոգնած էք, պարոն Արպեթնըդ։ Երբ էրիկ մարդ մը այդպէս ըսէ՝ մարդ կը կարծէ թէ կեանքը. յոգնեցուցած է զինքը։

Ճերլս. — Զեմ ուզեր մօրմէս բաժնուիլ։

Լեյսի Հընսրէնըն. — Այժմ, ձէրըլտ, այդ պարզապէս ծուլութիւն է։ Մօրմէդ չքաժնուիլ։ Եթէ ես քու մայրդ ըլլայի, պիտի պնդէի որ երթաս։

(Ալիս ներս կու գայ ձախ կողմէն)։

Ալիս. — Տիկին Արպեթնըդի յարգանքները, իմ լէյտիս, բայց շատ գէշ գլխացաւ մը ունենալուն հասմար, և ոչ մէկը պիտի կարենայ տեսնել այս առաւօտ։ (Կը մեկնի աջ կողմէն)։

Լեյսի Հընսրէնըն. — (Վեր ելլելով)։ Գէշ գըլխացաւ մը, որքան կը ցաւիմ։ Կարելի է որ կարենաս Հընսթէնուըն բերել զինքը կէս օրէն ետքը, եթէ աւելի լաւ զգայ ինքզինքը ձէրըլտ։

Ճերլս. — Զեմ կարծեր այս յետ միջօրէին, Լէյտի Հընսթէնաբըն։

Լեյսի Հընսրէնըն. — Լաւ, վաղը ուրեմն։ Ո՞հ, եթէ հայր մը ունենայիր, ձէրըլտ, չը պիտի թողուր որ կեանքդ պարապը անցնէիր հոս մնալով։ Քեզ անմիջապէս Լօրտ իլինուօրթէին հետ պիտի զրկէր։ Բայց մայրերը այնքան տկար են։ Ամէն բանի մէջ զիջում կ'ընեն իրենց որդիներուն։ Մենք ամբողջ սիրտ ենք, ամբողջ սիրտ։ Եկո՛ւր սիրելիս, պէտք է որ, ժողովրդապիտարանը երթամ և Տիկին Տօպէնիին մասին տեղեկութիւն առնեմ, որ կարծեմ թէ շատ հեռի է եաւ ըլլայէ։ Հիանալի է Արքերէցին վարմունքը, շատ հիանալի։ Անիկա ամուսիններուն ամէնէն համակրեւին է։ Կատարեալ տիպոր մը։ Մնաս բարով, ձէրըլտ, իմ սիրալիր բարեւներս հազորդէ քու մօրդ։

Տիկին ելրնապի. — Մնաք բարով, պարոն Արպեթնըդ։

Ճերլս. — Երթամ բարով։

(Լէյտի Հընսթէնաըն և Տիկին ելրնապի կը մեկնին։ ձէրըլտ կը նստի և կը կարգայ իր զրած նամակը)։

Ճերլս. — Ի՞նչ անուն կրնամ ստորագրել, ես որ ի-

բաւունք չունիմ ո և է անուն կրելու։ (Կը ստորագրե անունը, նամակը պահարանին մէջ կը դնէ, հասցէն կը գրէ անոր վրայ, և կը պատրաստուի կնքել զայն, երբ ձախակողմեան դուռը կը բացուի և Տիկին Արպրթնըդ ներս կը մտնէ։ Ճէրըլտ վար կը դնէ կնքամուը։ Մայր և որդի իրալու կը նային)։

Լեյփի Հընսրենըրն։ — (Ետեւի կողմի ֆրանսական պատուհանին մէջէն)։ Կրկին մնաս բարով, ճէրըլտ։ Ձեր գեղեցիկ պարտէզին մէջէն կարճ ճամբան ընտրեցինք։ Այժմ, յիշէ իմ խրատս։ անմիջապէս ճամբայ ելիր Լօրտ Իլինուօրթհին հետ։

Տիկին Էլբնպի։ — Յտեսութիւն, պարոն Արպրթնըդ։ Մի մոռնաք ո և է գեղեցիկ բան մը բերելու ինձի ձեր ճամբորդութիւններէն վերադարձին — ոչ թէ հնդկական շալ մը անշուշտ։

(Կը մնկնին)։

Ճէրըլտ։ — Մայր, ահա գրեցի անոր։

Տիկին Արպրթնըրդ։ — Որո՞ւ։

Ճէրըլտ։ — Իմ հօրս։ Գրեցի իրեն որ այս կէսօրէն ետքը հոս գայ, ժամը չորսին։

Տիկին Արպրթնըրդ։ — Հոս չը պիտի գայ ան։ Ան իմ տանս սեմէն ներս չպիտի անցնի։

Ճէրըլտ։ — Պէտք է որ գայ։

Տիկին Արպրթնըրդ։ — Ճէրըլտ, եթէ Լօրտ Իլինուօրթհին հետ պիտի մեկնիս՝ անմիջապէս մեկնէ։ Գնա, այդ բանը չես կրնար ընել զիս սպաննելէ առաջ բայց մի պահանջեր ինձմէ որ կրկին տեսնեմ զինքը։

Ճէրըլտ։ — Մայր, չէք հասկնար։ Աշխարհիս վրայ և ոչ մէկ բան կարող է զիս մղել որ Լօրտ Իլինուօրթհին հետ մեկնիմ, կամ քեզի թողում։ Անշուշտ զիս բաւական լաւ կը ճանչնաք, թէ այդ բանը չպիտի

կարենամ ընել։ Ո՛չ, ես գրած եմ իրեն ըսելու համար որ...

Տիկին Արպրթնըրդ։ — Իրեն ըսելիք ի՞նչ բան կընաս ունենալ։

Ճէրըլտ։ — Զէք կը կրնար գուշակել, մայր, թէ ինչ գրած եմ այս նամակին մէջ։

Տիկին Արպրթնըրդ։ — Ոչ։

Ճէրըլտ։ — Մայր, անշուշտ կրնաք հասկնալ, խորհեցէք, խորհեցէք թէ ինչ ընել պէտք է այժմ, անմիջապէս, այս քանի մը օրուան միջոցին։

Տիկին Արպրթնըրդ։ — Բան մըն ալ չկայ ընելիք։

Ճէրըլտ։ — Լօրտ Իլինուօրթհին գրած եմ թէ պէտք է որ ձեզի հետ ամուսնանայ։

Տիկին Արպրթնըրդ։ — Ինձի հետ ամուսնանայ։

Ճէրըլտ։ — Մայր, պիտի ստիպեմ զինքը որ այնպէս ընէ։ Այն անիրաւութիւնը որ եղած է ձեզի հանդէպ, պէտք է որ գարմանուի։ Պէտք է որ հատուցում մը ըլլայ։ Արգարութիւնը կրնայ գանդաղ ըլլալ, մայր, բայց ի վերջոյ կու գայ ան։ Քանի մը օրէն Լօրտ Իլինուօրթհին օրինաւոր կինը պիտի ըլլաք։

Տիկին Արպրթնըրդ։ — Բայց ճէրըլտ...

Ճէրըլտ։ — Պիտի ստիպեմ որ ընէ այդ բանը։ Պիտի ընել տամ իրեն, չը պիտի համարձակի մերժել։

Տիկին Արպրթնըրդ։ — Բայց, ճէրըլտ, ես եմ որ կը մերժեմ։ Չպիտի ամուսնանամ Լօրտ Իլինուօրթհին հետ։

Ճէրըլտ։ — Չպիտի ամուսնանաք իրեն հետ, մայր։

Տիկին Արպրթնըրդ։ — Չպիտի ամուսնամ իրեն հետ։

Ճէրըլտ։ — Բայց չէք հասկնար կոր, ես ճեր օգտին համար է որ կ'ըսեմ և ոչ թէ ինձ համար։ Այս ամուս

Նութիւնը, այս անհրաժեշտ ամուսնութիւնը, այս ամուսնութիւնը որ յայտնի պատճառներու համար պէտք է որ անխուսափելիօրէն կատարուի՝ ինծի օգուտ մը չունի, չպիտի տայ ինծի անուն մը որ իրապէս, ձշմարտապէս իրաւունք ունենամ կրելու զայն; Բայց անշուշտ ձեզի համար բան մը պիտի ըլլայ ան, թէ դուք իմ մայրս, թէեւ ուշ, պիտի ըլլաք կինը այն մարդուն որ իմ հայրս է: Ատիկա բան մը չէմիթէ:

Տիկին Արարթնը. — Զպի՛տի ամուսնանամ իրեն հետ:

Ճերլս. — Մայր, պէ՛տք էք ընել այդ:

Տիկին Արարթնը. — Զպիտի ընեմ: Կը խօսիս անիրաւութեան մը դարմանումին վրայ: Ի՞նչ դարման կրնայ ըլլալ ինծի: Կարելի դարման չկայ: Ես անպատուած եմ, անիկա չէ անպատուած: Այդ է ամէնը: Էրիկ մարդու մը և կնոջ մը սովորական պատմութիւնն է այն, ինչ որ սովորաբար կը պատահի, ինչ որ միշտ կը պատահի: Եւ վերջաւորութիւնը սուշ վորական վերջաւորութիւնն է: Կինն է որ կը տառապի: Այրը ազատ կ'արձակուի:

Ճերլս. — Զեմ գիտեր եթէ սովորական վերջաւորութիւնն է ան, մայր, կը յուսամ թէ այնպէս չէ: Բայց ճեր կեանքը՝ ամէն պարագայի տակ, այդպէս չպիտի վերջանայ: Մարդը պէտք է ընէ ինչ հատուցում որ կարելի չէ: Սնշուշտ բաւական չէ այդ: Ան չի մաքրեր անցեալը, գիտեմ այդ: Բայց գոնէ ապագան աւելի լաւ կ'ըլլայ, լաւագոյն, ձեզի համար, մայր:

Տիկին Արարթնը. — Կը մերժեմ ամուսնանալ կօրտ իլինուօրթէին հետ:

Ճերլս. — Եթէ ան ինքնարերաբար գար և իընդ-

թէր ձենէ որ իր կինը ըլլաք՝ այն ատեն տարբեր պատասխան մը պիտի տայիք իրեն: Յիշեցէք թէ, իմ հայրս է ան.

Տիկին Արարթնը. — Եթէ ինքնարերաբար գար, — ինչ որ չպիտի ընէ, — իմ պատասխանս նոյնը պիտի ըլլար: Յիշէ թէ քու մայրդ եմ ես:

Ճերլս. — Մայր, կը դժուարացնէք իմ վիճակս այդպէս խօսելով, և չեն հասկնար թէ ինչու չէք ուզեր նայի այս խնդրին վրայ ուղիղ կերպով, և միակ յարմարագոյն կէտը նկատի առնելով: Այս ամուսնութիւնը պէտք է տեղի ունենայ, որպէսզի ձեր կեանքին դառնութիւնը վերջանայ, որպէսզի ձեր անունին չուրջը յածող ստուերը ջնջուի: Ուրիշ միջոց չկայ, և ամուսնութենէն ետքը դուք և ես կրնանք միասին հեռուն երթալ: Բայց նախ ամուսնութիւնը պէտք է կատարուի Պարտականոսոթիւն մըն է որ կը կատարուի: Պարտականութիւն մը որ կը պարտիք, միայն ձեր անձին՝ այլ բոլոր միւս կիներուն, որպէսզի ուրիշներ ալ չխարէ:

Տիկին Արարթնը. — Ես բան մ'ըն ալ չեմ պարտիք ուրիշ կիներու: Զկայ մէկը որ օգնէ ինծի: Զկայ միակ կին մը աշխարհիս վրայ՝ որուն գթասրտութեանը կամ համակրութեանը կարենամ դիմել, եթէ ուզեմ ստանալ զայն: Կիները խիստ են իրարու հանդէպ: Այդ աղջիկը թէեւ բարի՝ երէկ գիշեր փախնաւ սենեակէն որպէս թէ արատուած արարած մը ըլլայի: Իրաւունք ունէք: Արատուած արարած մըն եմ ես, Բայց իմ սխալներս իմս են, և առանձին պիտի կրեմ զանոնք: Այն կիները որ չեն մեղանչած՝ ի՞նչ գործ ունին ինծի հետ, կամ ես անոնց հետ: Մենք զիրալ չենք կրնար հասկնալ:

(Էսպրը ԵՏԵՒՓ կողմեն ԵՒՐՍ ԿԸ ՄՏՆԿ)

ՃԵՐԸՏ.—Կ'ԱՂԱՀԵՄ ՃԵՂԻ ՈՐ ԸՆՔՔ ԻՆՉՈՐ ԿԸ ԽԸՆԴՎՐԵՄ ՃԽՆԵՒ:

Տիկին ԱՐԱՎՈՐՅՆՐԴ.—Ո՞Ր ՄՊԼԱՆ ԻՐ ՄՕՐՄԷՆ ԽԸՆԴՎՐԱԾ
Է ՈՐ ԱՋԴՎԻՄԻ զզուելի անձնագոհութիւն մը
ԸՆԵՒ: Եւ ոչ մէկ որդի ըրած է այդ:

ՃԵՐԸՏ.—Ո՞Ր մայրը երբեք մերժած է ամուսնանալ իր բուն ղաւկին հօրը հետ: Եւ ոչ մէկ մայր
ըրած է այդ:

Տիկին ԱՐԱՎՈՐՅՆՐԴ.—ԹՌՈՂ առաջինը ըլլամ ուրեմն:
Զպիտի ընեմ այդ բանը:

ՃԵՐԸՏ.—Մայր, դուք կրօնքի կը հաւատաք,
և զիս ալ այնպէս մեծցուցիք որ հաւատամ անոր:
Լաւ ուրեմն, անշուշտ ճեր կրօնքը այն կրօնքը որ
ինծի սորվեցուցիք երբ տղայ էի, մայր, պէտք է
ճեղի ըսէ թէ ևս իրաւունք ունիժ: Դուք գիտէք, կը
զգաք ատիկա:

Տիկին ԱՐԱՎՈՐՅՆՐԴ.—Զեմ գիտեր ատիկա, այդպէս
չեմ զգաք, ոչ ալ պիտի կարենամ երբեք Աստուծոյ
խորանին առջեւ կենալ և Աստուծոյ օրհնութիւնը
խնդրել Ճօրճ Հարֆօրտի և իմ միջեւ կատարուելիք
ամուսնութեան մը համար, որ զզուելի ծաղր մը պիտի
ըլլար միայն: Զպիտի ըսեմ այն բառերը որ եկեղեցին
մեղ կը հրամայէ որ ըսենք: Զպիտի ըսեմ զանոնք:
Զեմ համարձակիր: Ի՞նպէս կրնամ երդնուլ որ պիտի
սիրեմ այն մարդը որմէ զզուանք կը զգամ, որ պիտի
պատուեմ զանի որ քու վրադ անպատութիւն բերած
է, հնազանդիլ անոր, որ իր զօրութեամբը ինծի մեռ
զանչել առւած է: Ո՞չ, ամուսնութիւնը խորհուրդ մըն
է անոնց համար միայն որ զիրար կը սիրեն: Անոր
պէս մարդու մը կամ ինծի պէս մէկու մը համար չէ

ան: ՃԵՐԸԼՄ ՔԻԿ աշխարհքին ծաղրէն և անարգանք-
ներէն փրկելու համար սուտ խօսած եմ աշխարհքին: Քսան տարի ստած եմ աշխարհքին: Զէի կրնար ճըշ-
մարտութիւնը բահել մարդոց: Ո՞վ պիտի կարենար երբեք:
Բայց իմ օգտիս համար երբեք սուտ չպիտի խօսիմ Աս-
տուծոյ, և Աստուծոյ ներկայութեանը: Ո՞չ, ՃԵՐԸԼՄ:
Եւ ոչ մէկ արարողութիւն եկեղեցին սրբագործուած
կամ կառավարութենէն վաւերացուած, պիտի կապէ
զիս ճօրճ Հարֆօրտին: Թերեւս անոր համար որ արդէն
իսկաշատ կապուած եմ իրեն, որ՝ թէեւ զիս կողոպ-
տեց, սակայն աւելի հարուստ թողուց զիս, քանի որ
իմ կեանքիս տիղմին մէջ իբր փոխարինութիւն գտայ
թանկագին մարդարիտ մը: Եւ կամ կը խորհէի թէ
այդպէս էր:

ՃԵՐԸՏ.—Զեմ հասկնար ճեղ այլեւս:
Տիկին ԱՐԱՎՈՐՅՆՐԴ.—Երիկ մարդիկ չեն հասկընար
թէ ինչ է մայր ԵԼԼԱԼԸ: Ես տարբեր չեմ ուրիշ կի-
ներէ անշուշտ, բացի այն անիրաւութեան համար որ
ինծի եղած է, և այն սխալով որ ես գործեցի, և իմ
շատ ծանր պատիժներով ու մեծ չնորհազրկութեամբ:
Եւ սակայն, քեզ ծնելու համար մահուան ընդառաջ
գացի: Քեզ սնուցանելու համար մահուան հետ պայ-
քարիլ ստիպուեցայ: Մահը ինծի հետ կոռւեցաւ քեզ
առնելու համար: Բոլոր կիներն ալ մահուան հետ կը
մաքառին իրենց զաւակները կարենալ պահելու համար:
Մահը, անզաւակ ըլլալուն՝ մեր զաւակները առնել
կ'ուզէ մեզմէ: ՃԵՐԸԼՄ, երբ մերկ էիր, հագուեցուցի
քեզի, երբ անօթի էիր սնուցի քեզի: Գիշեր ցերեկ,
ամբողջ այն երկար ձմեռը խնամեցի քեզի: Եւ ոչ մէկ
գործատեղի, և ոչ մէկ հոգածութիւն նուաստ կ'երեւի
մեզի կիներուս, երբ կ'ընենք զայն մեր սիրածին հա-

մար... Եւ ո՞հ, որքա՞ն շատ կը սիրեի քեզ։ Աննան
Սամուէլը աւելի չէ սիրած։ Եւ դուն սիրոյ կարօտ
էիր, ինչու որ տկար էիր, և միայն սէրը կարող էր
քեզ ողջ պահել։ Միայն սէրը կարող է ու է մէկուն
կեանք տալ։ Ու տղաքը յաճախ անհոգ կ'ըլլան և ա-
ռանց խորհելու ցաւ կը պատճառեն մեզի, և մենք
միշտ կ'երեւակայենք թէ երբ մարդ ըլլան և մեզ ա-
ւելի լաւ հասկնան՝ մեզ պիտի փոխարինեն, բայց
այնպէս չէ։ Աշխարհը մեզմէ կ'առնէ զանոնք, և ա-
նոնք կը բարեկամանան անոր, որուն հետ աւելի եր-
ջանիկ կ'ըլլան քան թէ մեզի հետ, և կ'ունենան հա-
ճոյֆներ, որոնցմէ մենք զրկուած ենք, և կը հետա-
քրքրուին բաներով որոնցմով մենք չենք շահագրգըռ-
ուիր։ Եւ յաճախ անիրաւ կ'ըլլան մեզի հանդէպ, ինչու
որ երբ կեանքը դառն գտնեն մեզ կը մեղադրեն
ատոր համար, և երբ կեանքը քաղցր գտնեն։ մենք
չենք որ իրենց հետ անոր քաղցրութեան համը կ'առ-
նենք...։ Դուն շատ բարեկամներ ունեցար և անոնց
տուները դացիր, ու զուարճացար անոնց հետ, և ես,
գիտնալով իմ գաղտնիքս, չի համարձակեցայ հետեւիլ
քեզի, տունը կեցայ միայն, և դուռը գոցեցի, արեւը
ծածկեցի և նոտայ խաւարին մէջ։ Ի՞նչ կրնայի ընել
պարկիշտ տուներու մէջ։ Իմ անցեալս ինծի հետ էր
յաւիտեան...։ Եւ դուն կը կարծէիր թէ չէի սիրե՛
կեանքին պարզեւած հաճելի բաները։ Թեզի կ'ըսեմ թէ
կը փափաքէի անոնց, բայց չէի համարձակա՞ր դպչել
անոնց, զգալով թէ իրաւունք չունէի։ Դուն կարծեցիր
թէ աւելի երջանիկ կը զգայի ինքինքս աղքատնե-
րուն մէջ աշխատելով։ Այդ իմ կոշտմա ըլլալ երե-
ւակայեցիր։ Այդպէս չէր ստկայն, բայց անկէց զատ ո՞ւր
կրնայի երթալ։ Հիւանդները չեն հարցներ թէ այն

ձեռքը որ իրենց բարձը կը հարթէ, մաքո՞ւր է, և ոչ
ալ մեռնողները հոգ կ'ընեն թէ ացն չրթունքները որ
իրենց ճակատին կը հպին, ճանչցած են մեղքի համ-
բոյն ալ։ Բայց քու վրադ էր որ կը խորհէի ամբողջ
միջոցին, քեզի պէտք չեղած սէրը միայն կու տայի
անոնց, անոնց կը մատուցանէի սէր մը որ իրենցը
չէր...։ Եւ դուն կը կարծէիր թէ իմ ժամանակէս շատ
կը վատնէի եկեղեցի երթալով, և եկեղեցին հանդէպ
պարտականութիւններ կատարելով։ Բայց ուրիշ ո՞ւր
կրնայի դիմել։ Աստուծոյ տունը միակ տունն է ուր
յանցապարտները սիրով կ'ընդունւին, բայց դուն հոն
ալ միշտ իմ սրտիս մէջն էիր ծէրըլտ, խիստ շատ
իմ սրտիս մէջ։ Որովհետեւ, թէւ ամէն օր, առաւօտ
կամ երեկոյ երբ ծունկի կու գալի Աստուծոյ տան մէջ՝
երբեք չզգչացի իմ մեղքիս համար։

Ինչպէս կրնայի զղջալ, երբ դուն, իմ սէրս, անոր
պտուղն էիր։ Նոյն իսկ հիմայ որ դառնութիւն կը
պանծառես ինձ՝ չեմ կրնար զղջալ։ Զեմ զղջար։ Դուն
անմեղութենէն աւելի կարժես ինծի համար։ Կը նա-
խընտրեմ քու մայրդ ըլլալ... Ո՞հ, շատ աւելի... քան
թէ միշտ անբիծ եղած ըլլալ... Ո՞հ, չե՞ս տեսներ, չե՞ս
հասկնար։ Իմ անպատուութիւնս է որ քեզ այնքան
սիրելի ըրած է ինծի։ Իմ չնորհազրկութիւնս է որ քեզ
այնքան սերաօբէն կապած է ինծի։ Քեզի համար վը-
ճարած գնոյս արժէքն է — արժէքը հոգիս և մարմ-
նոյս — որ զիս կը մզէ սիրել քեզ այսքան։ Ոհ, մի՛
պահանջէր ինձմէ ընել այն սոսկալի բանը որ կը պա-
հանջես, իմ ամօթիս զաւակը, շարունակէ մնալ զա-
ւակը իմ ամօթիս։

Ճերըլ։ — Մայր, չէի գիտեր թէ զիս այնքան շատ
կը սիրէք։ Ես աւելի լաւ տղայ մը պիտի ըլլամ այ-

սուհետե ձեզի հանդէպա Եւ դուք և ես երբեք իրարմէ չպիտի բաժնութինք... բայց, մայր... չեմ կրնար ուրիշ կերպ խորհիլ... պէտք է որ իմ հօրս կինը ըլլաք: Պէտք է որ ամուսնանաք անոր հետ: Այդ ձեր պարտականութիւնն է:

Էսքըր.— (Առաջ վազելով և տիկին Արպըթնը դը գրկելով:) Ո՛չ, ո՛չ, պէտք չէ որ ամուսնանաք անոր հետ: Ատիկա, ճշմարիտ անպատութիւն մը պիտի ըլլար առաջինը զոր ճանչցած ըլլաք երբեք: Ատիկա իրական շնորհազրկութիւն մը պիտի ըլլար, առաջինը որ ձեզի հպած ըլլար: Զգեցէք զայն և եկէք ինձի հետ: Անդլիայէն զատ ուրիշ երկիրներ ալ կան...: Ո՛հ, ուրիշ երկիրներ ծովերէն անդին, լաւագոյն, աւելի իմաստուն, և նուազ անիրաւ երկիրներ: Աշխարհը շատ լայն է և շատ մեծ:

Տիկին Արպըրնը.— Ոչ, ոչ ինձի համար: Ինձի համար աշխարհը ամփոփուած է ափի մը տարածութեանը մէջ. և ուր որ կը քալեմ տատասկներ կը բուսնին հոն:

Էսքըր.— Այնպէս չը պիտի ըլլայ այլեւս: Տեղ մը պիտի գտնանք կանանչ գաշտեր և թարմ ջուրեր, և եթէ արտասուենք, լաւ ուրեմն, երկուքս ալ միասին պիտի արտասուենք: Մենք երկուքս ալ միասին չե՞նք սիրած ձէրըլտը:

Ճերլիտ. — Էսթըր:

Էսքըր.— (Մէկդի ընելով զինքը): Մի՛ ըներ, մի՛ ըներ: Զես կրնար զիս սիրել երբեք, եթէ զայն ալ չի սիրես: Իր մէջ բոլոր կիներն ալ մարտիրոսացուած են: Ոչ միայն ինքը, բայց մենք ամէնքս ալ հարուածուած ենք իրմով:

Ճերլիտ. — Էսթըր, Էսթըր, ի՞նչ պէտք է ընհմ:

Էսքըր.— Կը յարգե՞ս այն մարգը որ քու հայրդ է: Ճերլիտ. — Յարգե՞լ զինքը: Կ'արհամարհե՞մ զանիւ Վատահամբաւ մըն է:

Էսքըր.— Շնորհակալ եմ զիս անկէ փրկած ըլլալու համար երէկ գիշեր:

Ճերլիտ. — Ոչ, բան մը չէ այդ: Կրնամ մեռնիլ քեզ փրկելու համար: Բայց չես ըսեր ինձի թէ ի՞նչ ընել պէտք եմ հիմայ:

Էսքըր.— Շնորհակալութիւն չի յայտնեցի՞ քեզի զիս փրկած ըլլալուդ համար:

Ճերլիտ. — Բայց ի՞նչ պէտք է ընհմ: Էսքըր.— Քու սրտիդ հարցուր, ոչ թէ իմինիս: Ես երբեք մայր մը ունեցած չեմ փրկելու կամ զինքը ամօթով ձգելու համար:

Տիկին Արպըրնը.— Կարծրասիրտ է ան: Թողէք որ երթամ:

Ճերլիտ. — (Կը վազէ մօրը վրայ և ծունկի կու գայ անոր առջև:) Մայր, ներէ՛ ինձ, մեղադրելի եմ:

Տիկին Արպըրնը.— Մի համբուրեր իմ ձեռքերս, պաղ են անոնք: Սիրոս պաղ է, բա՛ն մը զայն կոտրեց:

Էսքըր.— Ոչ, մի ըսէք ատիկայ: Արտերը կ'ապրին վիրաւորուելով հանդերձ: Հաճոյքը կրնայ սիրու մը քարացնել, հարստութիւնը կրնայ զայն անզգայ ընել, բայց վիշտը... Ո՛հ, վիշտը չի կրնար զայն կոտրել: Եւ յետոյ, ի՞նչ վիշտ ունիք այժմ: Ինչո՞ւ, այս վայրկեանիս աւելի քան երբեք սիրելի էք իրեն, թէև միշտ սիրուած էք իրմէ, ո՛հ, որքան շատ սիրելի եղած էք միշտ: Ներողամիտ եղէք իրեն հանդէպ:

Ճերլիտ. — Դուք իմ մայրս և հայրս էք միանգաւ մայն: Պէտք չունիմ երկրորդ ծնողքի մը: Զեզի հա-

մար էր որ խօսեցայ, միայն ձեզի համար: Ոհ, ըսէք բան մը, մայր: Սէր մը գտայ՝ ուրիշ՝ մը կորսնցնելու համար: Մի ըսէք այդ ինծի: Ոհ, մայր անգութ էք: (Վեր կ'ելլէ և հեծկլատալով բազմոցի մը վրայ կ'իյնայ):

Տիկին Արարբնը: — (Էսթըրին). բայց իրա՞ւ ուրիշ սէր մը գտած է:

Էսրըր: —Գիտէք թէ միշտ սիրած եմ զինքը:

Տիկին Արարբնը: —Բայց շատ աղքատ ենք:

Էսրըր: —Ո՞վ աղքատ կը նկատուի երբ սիրուած է ոհ, և ոչ մէկը: Ես կ'ատեմ իմ հարըստութիւնս:

Բեռ մըն է ան: Թող ձէրըլտը ինծի հետ բաժնէ զայն:

Տիկին Արարբնը: —Բայց մենք շնորհագուրկ ենք: Մենք արատքուածներու կարգին կը պատկանինք: Ձէրըլտ անուն չունի: Ծնողքներուն յանցանքը զաւակներուն ալ կ'անցնի: Աստուծոյ օրէնքն է ան:

Էսրըր: —Ես սխալեցայ երբ այնպէս ըսի: Ասուուծոյ օրէնքը միմիայն սէրն է:

Տիկին Արարբնը: — (Վեր կ'ելլէ, և էսթըրին ձեռքը երենին մէջ առած, յամրաբար քալեռվ կ'երթայ բազմոցին քով, ուր ձէրըլտ պառկած է իր գլուխը թաղած ձեռքերուն մէջ: Կը հափ անոր: Ան վեր կը նայի): ձէրըլտ, քեզի հայր մը չեմ կրնար տալ, բայց քեզի կին մը բերած եմ:

Ճերլէ: —Մայր, արժանի չեմ ոչ անոր և ոչ ալ ձեղի:

Տիկին Արարբնը: —Առաջ ան կու գայ, արժանի ես անոր: Եւ երբ հեռու ըլլաս ձէրըլտ... անոր... հետ—ոհ, երբեմն խորհէ իմ վրաս: Մի մոռնար զիս: Եւ երբ աղօթես, աղօթէ ինծի համար ալ: Երբ շատ երջանիկ ըլլանք պէտք է որ աղօթենք, և դուն երջանիկ պիտի ըլլաս ձէրըլտ:

Էսրըր: —Ոհ, անշուշտ չէ՞ք խորհիր մեզմէ բաժ—նուիլ:

Ճերլէ: —Մայր, մեզմէ չպիտի բաժնուիք, չէ՞:

Տիկին Արարբնը: — Կրնայ ըլլալ որ անպատ—

ուութիւն բերեմ ձեր վրայ:

Ճերլէ: —Մայր:

Տիկին Արարբնը: —Քիչ մը ուրեմն: Բայց քանի

որ կ'ուզէք՝ միշտ ձեր մօրը պիտի ըլլամ:

Էսրըր: — (Տիկին Արարբնը կրնէ) Մեզի հետ գուրս

պարտէղ եկէք:

Տիկին Արարբնը: — Աւելի վերջը, աւելի վերջը:

(Էսթըր և ձէրըլտ դուրս կ'ելլեն:)

(Տիկին Արարբնը գէպի ձախ դրան կողմը կ'եր—թայ, կը կենայ վառարանին վրայի հայելիին առջեւ և անոր մէջ կը նայի:)

(Աջ կողմէն Ալիս ներս կը մտնէ.)

Ալիս: —Պարոն մը հկած է ձեզ անսնելու, տիկին:

Տիկին Արարբնը: — Լսէ թէ տունը չեմ: Ցու—ցուր ինձ այցաքարդը: (Կ'առնէ այցաքարդը ափաէին մէջէն և կը նայի) Լսէ թէ զինքը չեմ կրնար տեսնել:

(Լօրտ իլինուօթէ ներս կը մտնէ: Տիկին Ար—պլթնը կը տեսնէ զինքը հայելիին մէջէն և կը ցըն—ցուի, բայց ասդին չի դառնար: Ալիս կը մեկնի:)

—Ինծի ի՞նչ ըսելիք կրնաս ունենալ հիմա, ձօրձ Հարֆօրտ: Ոչինչ ունիս ինծի ըսելիք: Պէտք է այս տունէն մեկնիս:

Լօրտ իլինուօթի: — Ռաշէլ, ձէրըլտ գիտէ այժմ ամէն բան քու և իմ մասին, ուստի քանի մը կար—գալրութիւններ պէտք է ընել որ մեր երեքին ալ յարմարին: Կը վատահեցնեմ քեզի, որ իմ մէջս պիտի գտնէ հայրերն ու ամէնէն պատուականը և առատա—ձեռնը:

Տիկին Արագրենդ. — Տղաս վայրկեանէ վայրկեայն ներս մտնել: Երէկ գիշեր քեզ փրկեցի: Թերեւս չկարենամ նորէն փրկել քեզ: Իմ որդիս շատ ուժգնօրէն կը զգայ իմ անպատուութիւնս, սոսկալիօրէն, ուստի կը խնդրեմ որ երթաս:

Լօրս Իլինուօրին. — (Նստելով) Երէկ գիշերուանը մեծ դժբախտութիւն մըն էր: Այդ խենթուկ մաքրակրօն աղջիկը, որ այնքան աղմուկ հանեց միայն անոր համար որ ուզեցի զինքը համբուրել: Ի՞նչ մնաս կայ համբոյրի մը մէջ:

Տիկին Արագրենդ. — (Ետեւ գառնալով) Համբոյր մը կրնայ մարդկային կհանք մը քայլքայել. Փօրտ Ճօրճ Հար: Ես գիտեմ այդ: Ես շատ լաւ գիտեմ այդ բանը:

Լօրս Իլինուօրին. — Այժմ անոր վրայ չպիտի վիճաբոնինք: Ի՞նչ որ կարեւոր է այսօր, ի՞նչպէս որ էր երէկ ալ, մեր տղուն խնդիրն է: Զափազանց կը սիրեմ զինքը, ի՞նչպէս գիտես: Եւ ինչ որ տարօրինակ պիտի թուի քեզի՝ երէկ գիշերուան իր վարմունքը անհունօրէն հիացուց զիս: Հիանալի արագութեամբ մը խարազանը ձեռք առաւ, այդ գեղեցիկ համեստունակ աղջկան համար: Ճիշտ այնպէս է ի՞նչ որ կը փափաքէի որ ըլլար իմ որդիս: Բացի անկէ թէ ի՞մ զաւակս պէտք չէ որ երբեք մաքրակրօններուն կողմը բռնէ, այդ միշտ սխալ մըն է: Այժմ, առաջարկու պարզեմ:

Տիկին Արագրենդ. — Լօրտ Իլինուօրթն, ձեր և ոչ մէկ առաջարկը զիս կը շահագրգուէ:

Լօրս Իլինուօրին. — Մեր անգլիական ծաղրելիօրէն քներուն համաձայն՝ չեմ կրնար օրինաւորացնել ձէրըլտը: Բայց կրնամ իրեն թողուլ ստացուածքս: Իլիս նուօրթէ կալուածը լաւ դիրք ունի անշուշտ, բայց շատ

տխուր տեղ մըն է: Աշպին կրնամ աալ իրեն, որ շատ աւելի գեղեցիկ է, Հարագօրուն, որ Հիւսիսային Անդրէլոյ ամենալաւ որսավայրը ունի, և Սուրբ ձէյմս հըրապարակին վրայ գտնուող տունը: Ի՞նչ աւելի կրնայ փափաքիլ ձէնթըլմէն մը այս աշխարհիս վրայ:

Տիկին Արագրենդ. — Ոչինչ աւելի, շատ վաւան եմ:

Լօրս Իլինուօրին. — Իսկ տիտղոս մը, տիտղոս մը իրականին մէջ, աւելի փորձանք մըն է, այս ուամկավարական ժամանակները: Իրբ Ճօրճ Հար Փօրտ բոլոր ուզած բաներս ալ ունէի: Սյամ ունիմ միայն այն ամէն բաները որ ուրիշները կ'ուզեն, ինչ որ միւսին չափ հաճելի բան մը չէ: Լաւ ուրեմն, իմ առաջարկս սաէ:

Տիկին Արագրենդ. — Բայ քեզի թէ չեմ հետաքրքրուիր, և կը խնդրեմ որ երթաս:

Լօրս Իլինուօրին. — Տղան՝ տարւոյն վեց ամիսը քեզի հետ պիտի անցնէ, և միւս վեցն ալ ինձի հետ: Այսպէս կատարելապէս լաւ կ'ըլլայ այնպէս չէ^o: Կրնաս ուղածդ պահանջել ինձմէ, և քու ընտրած տեղի ապրիլ: Իսկ քու անցեալդ ոչ մէկը զիտէ բացի ինձմէ և ձէրըլտէն: Մաքրակրօնը կայ անշուշտ, ձերմակներ հագած մաքրակրօնը, բայց կարեւորութիւն չունի ան: Զի կրնար պատմութիւն պատմել առանց բացատրելու թէ մերժեց համբուրուիլ ինձմէ, այնպէս չէ^o: Բոլոր կիներն ալ զինքը խենթ պիտի նկատեն և այրեն ալ տաղտուկ մը: Նաեւ պէտք չէ վախնաս թէ ձէրըլտ իմ ժառանգործս չպիտի ըլլայ: Պէտք չունիմ քեզի ըսելու թէ ամուսնանալու բնաւ նպատակ չունիմ:

Տիկին Արագրենդ. — Շատ ուշ կուգաս: Իմ որդիս քեզի պէտք չունի: Դուն պէտք չեւ իրեն:

Լօրս Իլինուօրին .— Ի՞նչ ըսել կ'ուզես , Ռաշէլ :
Տիկին Արպրբնըդ .— Թէ քեզի պէտք չունին ձէ-
րըլտ իր ապագային համար : Ան քեզմէ բան մը չի
պահանջեր,

Լօրս Իլինուօրին .— Զեմ հասկնար քեզ :

Տիկին Արպրբնըդ .— Նայէ պարտէզը : (Լօրտ Իլինու-
ուօրթն կ'ելլէ ու դէպի պատռնանը կ'երթայ) Աւելի լաւ
կ'ըլլայ որ չի տեսնեն քեզ , անհաճոյ յիշատակներ
կ'արթնցնես : (Լօրտ Իլինուօրթն գուրս կը նայի և կը
ցնցուի:) Ան ձէրըլտը կըսիրէ : Զիրար կը սիրեն :
Քեզմէ պատռած ենք , և կը մեկնինք :

Լօրս Իլինուօրին .— Մ՞ւր :

Տիկին Արպրբնըդ .— Զը պիտի ըսենք քեզի , և եթէ
մեզ գտնեն քեզ չպիտի ընդունինք : Զարմ ացած կ'երե-
ւիս : Ի՞նչ ընդունելութիւն կրնաս գտնել այն աղ-
ջիկէն որուն շրթները ջանացիր աղտոտել , այն տղայէն
որուն կեանքը աղարտած ես , այն մօրմէն որուն ան-
պատռութիւնը քեզմէ կուզայ :

Լօրս Իլինուօրին .— Շատ կարծրասիրտ եղած ես ,
Ռաշէլ :

Տիկին Արպրբնըդ .— Ատեն մը շատ տկար էի : Ինծի
համար լաւ եղաւ որ փոխուեցայ:

Լօրս Իլինուօրին .— Շատ երիտասարդ էի այն ատեն :
Մենք այրերս կետնքը շատ չուտով կը ձանչնանք:

Տիկին Արպրբնըդ .— Եւ մենք կիներս կեանքը շատ
ուշ կը ձանչնանք : Այդ է տարբերութիւնը այր և
կնոջ միջև : (Լուս-թիւն մը :)

Լօրս Իլինուօրին .— Ռաշէլ , իմ որդիս կ'ուզեմ , իմ
դրամս կրնայ օգուտ մը չունենալ իրեն այժմ : Թերես
իրեն օգտակար չեմ կրնար ըլլալ , բայց իմ որդիս կ'ու-
զեմ : Մեզ իրարու մօտեցուր Ռաշէլ : Եթէ ուզիս կրնաս

Ծնել այդ բանը : (Նամակը կը տեսնէ սեղանին վրայ :)

Տիկին Արպրբնըդ .— Իմ ազուս կեանքին մէջ տեղ
չկայ քեզի համար : Քեզմով չի' հետաքրքրուիր :

Լօրս Իլինուօրին .— Ուրեմն ինչո՞ւ կը գրէ ինծի :

Տիկին Արպրբնըդ .— Ի՞նչ ըսել կ'ուզես :

Լօրս Իլինուօրին .— Ի՞նչ նամակ է այս : (Նամակը
վեր կը վերցնէ :)

Տիկին Արպրբնըդ .— Այդ... բան մը չէ : Ինծի տուր :

Լօրս Իլինուօրին .— Ինծի ուզուած է :

Տիկին Արպրբնըդ .— Պէտք չէ որ բանաս զայն :
Կարգիւեմ քեզ բանալէ զայն :

Լօրս Իլինուօրին .— Եւ ձէրըլտի ձեռագիրն է :

Տիկին Արպրբնըդ .— Այս նամակը չը պիտի զըր-
կուէր քեզի : Այս առաւօտ զիս տեսնելէ առաջ գրեց :
Բայց այժմ շատ կը ցաւի գրելուն համար , շատ կը ցա-
ւի : Պէտք չէ որ բանաս : Ինծի տուր :

Լօրս Իլինուօրին .— Ան ինծի կը վերաբերի : (Կը
բանայ , կը նստի և յամբաբար կը կարդայ : Տիկին
Արպրթնըդ կը դիտէ զինքը ամբողջ ատենը :) Դուն
կարդացիր այս նամակը կը յուսամ , Ռաշէլ :

Տիկին Արպրբնըդ .— Ոչ :

Լօրս Իլինուօրին .— Գիտե՞ս թէ ինչ զրուած է մէջը :

Տիկին Արպրբնըդ .— Այս :

Լօրս Իլինուօրին .— Ոչ խոկ վայրկեանի մը հա-
մար կ'ընդունիմ թէ տղան իրաւունք ունի իր ըսած-
ներուն մէջ : Զեմ ընդունիր թէ ուեէ պարտակա-
նութիւն ունիմ քեզ հետ ամուսնանալու , բոլորովին
կը մերժեմ այդ ըսածը : Բայց իմ որդիս ետ առնելու
համար պատրաստ եմ — այս' , պատրաստ եմ քեզի հետ
ամուսնանալ Ռաշէլ — և միշտ վարուիլ քեզ հետ այն
յարգական վերաբերումով որ պարտական եմ իմ կնոջս :

Պիտի ամուսնանամ քեզի հետ անմիջապէս եթէ ուղես; իմ պատւոյ խօսքս կուտամ քեզի:

Տիկին Արարբնըդ. — Այդ խօստումը առաջ ալ անդամ մը ըրիր ինձի և ետքն ալ հետ առիր:

Լօրս Իլինուօրին. — Հիմայ խօսքս պիտի բռնեմ: Եւ այդ քեզի պիտի ապացուցանէ թէ իմ որդիս կը սիրեմ, գոնէ այնքան որքան դուն կը սիրես զինքը: Որովհետեւ երբ ամուսնանամ քեզի հետ Ռաշէլ, պիտի ստիպուիմ հրաժարիլ կարգ մը փառասիրութիւններէ: Բարձր փառասիրութիւններէ, եթէ ուեւ փառասիրութիւն կրնայ բարձր ըլլալ:

Տիկին Արարբնըդ. — Կը մերժեմ ձեզի հետ ամուսնանալ, Լօրտ Իլինուօրին:

Լօրս Իլինուօրին. — Լրջօրէն կ'ըսես:

Տիկին Արարբնըդ. — Այո:

Լօրս Իլինուօրին. — Հսէ ինձի քու պատճառներդ: Անոնք զիս չափազանց պիտի հետաքրքրեն:

Տիկին Արարբնըդ. — Զանոնք արդէն բացատրած եմ որդւոյս:

Լօրս Իլինուօրին. — Կարծեմ անոնք անհունօրէն զգայուն ըլլալու են, այնպէս չէ: Դուք կիներգ, կ'ապրիք ձեր յուզումներով և անոնց համար, կեանքի Փիլիսոփայութիւնը չունիք դուք:

Տիկին Արարբնըդ. — Իրաւունք ունիք: Մենք կիներս կ'ապրինք մեր յուզումներով, և անոնց համար: Մեր խորունկ զգացումներով և անոնց համար, եթէ կ'ուզէք զիսնալ: Երկու բուռն զգացումներ ունիմ, Լօրտ Իլինուօրին: Իմ սէրս տղուս համար, և իմ ատելութիւնս քեզի համար: Զէք կրնար ջնջել զանոնք: Անոնք զիրար կը սնուցանեն:

Լօրս Իլինուօրին. — Ի՞նչ տեսակ սէր է ան որպէտք կ'ունենայ ատելութեան իր եղբայրը:

Տիկին Արարբնըդ. — Այդ տեսակ սէր մըն է ձէ-ըլլատի համար զգացածս: Զայն սոսկալի՝ կը կարծէք: Լաւ ուրեմն, սոսկալի է ան: Բոլոր սէրերն ալ սոսկալի են: Բոլոր սէրերն ալ ողբերգութիւններ են: Ժամանակաւ քեզ կը սիրէի Լօրտ Իլինուօրին: Ո՞հ, ի՞նչ ողբերգութիւն է կնոջ մը համար քեզ սիրած ըլլալը:

Լօրս Իլինուօրին. — Ուրեմն դուն իրօք կը մերժես ինձ հետ ամուսնանալ:

Տիկին Արարբնըդ. — Այո:

Լօրս Իլինուօրին. — Եւ իմ որդիս ալ կ'ատէ քեզի պէս:

Տիկին Արարբնըդ. — Ոչ:

Լօրս Իլինուօրին. — Ուրախ եմ ասոր համար և Ռաշէլ:

Տիկին Արարբնըդ. — Ան պարզապէս կ'արհամար-էք քեզ:

Լօրս Իլինուօրին. — Ի՞նչ մեղք, մեղք իրեն համար ըսել կ'ուզեմ:

Տիկին Արարբնըդ. — Ինքինքդ մի խարեր, ձօրձ: Տղաքը իրենց ծնողքը սիրելով կը սկսին: Ատեն մը ետքը կը դատեն զանոնք: Եւ հազուադէսօրէն — եթէ երբեք — կը ներեն անոնց:

Լօրս Իլինուօրին. — (Նամակը կրկին կը կարդայ յամրաբար) Կրնամ հարցնել թէ, ի՞նչ պատճառաբանութեամբ համողեցիր տղան՝ որ այս նամակը գրած է՝ այս հիանալի, բուռն նամակը — թէ պէտք չէ ամուսնանալ իր հօրը հետ, քոյ բուռն զաւկիդ հօրը հետ:

Տիկին Արարբնըդ. — Ես չէի այդ բանը իրեն զգացնողը, ուրիշ մըն էր:

Լօրս Իլինուօրին. — Ո՞ր դարավերջիկ անձնաւուրութիւնն էր ան:

Տիկին Արագըրնըդ. — Մաքրակրօնը, Լորտ Իլինուորթի: (Լուսթիւն մը:)

Լորտ Իլինուորթի: (Կը խոժոսի, յետոյ ստքի կ'ելլէ յամբաբար և սեղանին մօտ կ'երթայ ուր զրուած են իր գլխարկը և ձեռնոցները: Տիկին Արագըրնըդ կեցած է սեղանին մօտ: Իր ձեռնոցներէն մին կ'առնէ և կը սկսի հագնիլ) Ուրեմն այս տեղ այլեւս բան մը չունիմ ընելիք, Ռաշէլ:

Տիկին Արագըրնըդ. — Ոչինչ:

Լորտ Իլինուորթի: — Մնաս բարո՞վ է այս:

Տիկին Արագըրնըդ. — Յուսամ ընդ միշտ, այս անգամ, Լորտ Իլինուորթի:

Լորտ Իլինուորթի: — Ի՞նչ տարօշինակ բան: Այս վայրկեանիս կատարելապէս այն երեւոյթը ունիս զոր ունեցած էիր այն գիշերը երբ զիս թողուցիր, քան տարի առաջ: Ճիշտ նոյն արտայայտութիւնը ունիս բերանիդ վրայ: Խօսքիս հաւատայ Ռաշէլ, և ոչ մէկ կին զիս սիրած է այնքան՝ որքան զուն սիրած ես զիս: Ինքզինքդ ինծի յանձնեցիր ծաղիկի մը նման, որպէսզի ուզածս ընկմ անորս դուն խաղալիքներուն ամէնէն գեղեցիկն էս, ամէնէն հրապուրիչը փոքրիկ մօմանսներուն..... (Ժամաժոյցը կը հանէ) Երկութիւն քառորդ կայ: Պէտք է ետ երթալ, Հընսթէնտըն: Մի կարծեր թէ քեզ հոն կրկին պիտի տեսնեմ, կը ցաւիմ, իրապէս կը ցաւիմ: Զուարծալի փորձառութիւն մըն էր այս, որ քու աստիճանիդ մարդոց մէջ հանդիպիս և շատ ալ լրջօրէն վերաբերուիս քու հոմանուհիիդ հետ, նաև քու...

(Տիկին Արագըրնըդ ձեռնոցը սեղանին վրայէն կը լիէ և անով կը զարնէ Լորտ Իլինուորթին երեսին: Լորտ Իլինուորթի: կը ցնցուի: Ան խոված է իր պատիւն անարգանքէն: Յետոյ ինքզինքը կը զսպէ, և

դէպի պատուհանը երթալով իր որդին կը դիաէ: Եւ հառաչ մը արձակելով սենեակէն դուրս կ'ելլայ):

Տիկին Արագըրնըդ. — (Ճեծկլտալով բազմոցին վրայ կ'իյնայ): Պիտի ըսէ՛ր այդ բանն ալ, պիտի ըսէ՛ր...:

(Ճերըլտ և խթըր ներս կու գան պարտէզէն):

Ճերըլտ. — Լաւ ուրեմն, սիրելի մայր: Վերջապէս դուրս չեկաք բնաւ: Ուստի մենք ներս եկանք ձեզ առնելու համար: Մայր, չէ՞ք լացեր: (Ծունկի կուզայ անոր քով):

Տիկին Արագըրնըդ. — Զաւա՛կս, զաւա՛կս, զաւակս: (Իր մատները անոր մազերուն մէջէն սահեցնելով):

Էսրըր. — (Մօտը գլուխ): Բայց երկու զաւակ ունիք այժմ: Պիտի թողո՞ւք որ ես ձեր աղջիկը ըլլամ:

Տիկին Արագըրնըդ. — (Վեր նայելով): Պիտի ուզէի՞ք զիս ընտրել իրը մայր:

Էսրըր. — Բոլոր իմ ճանչցած կիներուս մէջէն ձեզ միայն:

(Անոնք կ'երթան դէպի այն դուռը որ պարտէզ կ'առաջնորդէ, իրենց թեւերը իրարու մէջքի անցուցած: Ճերըլտ դէպի ձախ կողմը կ'երթայ սեղանին վրայէն գլխարկը առնելու համար: Նաև դարձած միջոցին գետնին վրայ կը տեսնէ Լորտ Իլինուորթին ձեռնոցը, և վեր կը վերցնէ:)

Ճերըլտ. — Նայեցէք, մայր, որո՞ւ ձեռնոցն է այս: Հիւր մը ունեցած էք: Ո՞վ էր ան:

Տիկին Արագըրնըդ. — (Ետև զառնալով): Ո՞հ ոչ մէկը: Մասնաւոր մէկը չէր: Կարեւորութենէ զուրկ մարդ մը:

(Վարագոյր)



ՎՐԻՊԱԿ

Էջ Տող	Սխալ	Ուղիղ
5 4	խոշոր և կարմրածոփ	խոշոր կարմրածառի
7 18	անոր	անոր
11 12	հաւանիք	հաւանիք
17 18	քեչ	քիչ
18 1	այսպէս	այնպէս
19 15	Ռուսերը	անուսները
20 2	հարցնես	հարցնեմ
28 25	հաւանիք	հաւանիք
29 4	զգայ	զգայ
31 7	շուքերու	շուքերու
35 6	անբաւական	անասնական
36 7	նետեւիս	ներես
37 31	ան պէտք է մերժէ մեր բոլոր ոչինչ փափաքները: Ան պէտք է հարցնէ մեր բոլոր ոչինչ փափաքները:	Ան պէտք է մերժէ մեր բոլոր լուրջ պահանջները և գոհա- ցնէ մեր բոլոր ոչինչ փա- փաքները:
38 23	— — —	այն առաքինութիւնները որ ունենալ երազած չէինք իսկ
41 19	ունեցայ	իմացայ
42 20	ամսու	ամառ
43 18	— — —	թայց զաղափար չունիք կեանքի անտեսանելի զեղեց- կութեան վրայ, բարձրագոյն կեանքի մը անտեսանելի զե- ղեցկութեան վրայ բան մը չէք զիտեր:
44 17	մանեակէ	ժանեակէ
44 22	պէտք չէ որ թողուք	պէտք չէ թողուք որ միմիայն
55 23	նոր ֆօրտ	Հարֆօրտ
55 24	ամէն տեսակ	ամէն մէկ
57 29	չի հասկնար	Չե՞ս հասկնար

Էջ Տող	Սխալ	Ուղիղ
59 7	պիտի լսեմ	չպիտի լսեմ
59 25	սինամ	չմասին
60 22	խօսրը	խօսիլ
67 29	Ռօմանը կոչուածը	Ռօմանս կոչածը
73 28	գոհացուցիչ	գնահատիչ
76 26	պիտի ելլեն	պիտի ելլենք
77	(4րդ տողին շարունակութիւնը կարդալ՝ 30րդ տողին սկսեալ մինչև յաջորդ էջին 8 տողը)	
79 27	հիւանդանոցին	հիւանդանոցին
79 23	կ'ուզեմ	կ'աղաչեմ
80 3	շատ զարմանալի էր	շատ զարմանալի է որ
81 21	զէշ ըլլալէն	զէշ ըլլալն է
82 9	— — —	ձերըլտ զետինը կը նստի իր մօրը բովը մայրը իր մատները
82 24	ինչ որ կը սիրէր զայն	ինչու որ կը սիրէր զայն
84 20	պիտի միացնեմ	պիտի մետցնեմ
84 30	ետեւը	երեսը
85 31	երկուքս ալ նորէն նոյն բաներն ենք	երկուքն ալ նոյն բաներն են
86 6	ձախ ակնոցին	ձեռակնոցին
86 9	այդ ճիշդ բառն է	այդ ճիշդ բառն է
86 17	կարքը	կարծիքը
86 26	տարականներով	օտարականներով
87 22	սիրելի	սիալ
93 16	պարտականութիւն մըն է	պարտականութիւն մը որ կը որ կը կատարուի, պարտա- կանութիւն մը որ ը պար- տիք միայն ձեր անձն՝
101 31	հայրերն	հայրերուն
101 8	մօրը	մօտը
102 2	ներս մտնել	կրնայ ներս մտնել
107 10	ալ կ'ուտէ	ալ կ'ատէ զիս
108 21	ամէնէն զեղեցիկն էս	ամենէն զեղեցիկն էիր
109 22	նաեւ դարձած միջոցին	ետև դարձած միջոցին

4P

MP

2
70

1160

120 13

